Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Арифметика
Ученическая
тетрадь

1904.

82
7-48

388 25/IX-47

2077

07 JUN 2005

16 OCT 2008

82
Դ-48

1001
635

# ՉԱՐԼԶ ԴԻԿԵՆՋԻ

# ԾՆՆԴԵԱՆ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐԻՑ

Թարգմանեց բնագրից Մխիթար Տէր-Անդրէասեանց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գլուխ Ա. Մաուէյի Ուրուականը.
Գլուխ Բ. Երեք Ոգիներից Առաջինը.
Գլուխ Գ. Երեք Ոգիներից Երկրորդը.
Գլուխ Դ. Երեք Ոգիներից Վերջինը.
Գլուխ Ե. Վերջաբան։

1001
635

## ԱՌԱՋԱԲԱՆ

Այս Ոգենուէր գրքոյկում աշխատել եմ յարուցանել մի Գաղափարի Ոգի, որ ոչ ընթերցողներիս քէֆը կը փչացնի, ոչ նրանց ոօնական տրամադրութիւնը կը խանգարի, ոչ էլ կը վրդովի նրանց ինձ դէմ կամ որևէ մէկի դէմ։ Երանի հաճելի լինի նրա այցը ամենքին և ոչոք չհալածի նրան։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
1922

0 3 APR 2013



Գլուխ Ա.

## ՄԱՌԼԷՅԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Սկսենք նրանից, որ Մառլէյը մեռած էր։ Այդ անկասկած է։ Նրա թաղման արձանագրութիւնը ստորագրել էին քահանան, թաղապետը, կապալառուն *) և գլխաւոր սգուորը։ Ինքը Սկռուջն էր ստորագրել։ Նրա անունը գին էր տալիս բորսայում ամենամի թղթի, որի վրայ նա գրած էր լինում իր ձեռքը։

Եւ այդպէս ուրեմն ծեր Մառլէյը մեռած էր։

Գիտէր արդեօք Սկռուջը, որ նա մեռած է։ Անկասկած գիտէր։ Ի՞նչպէս կարող էր չգիտենալ։ Զգիտ[illegible] քանի-քանի տարուայ ընկերներ էին Սկռուջն ու նա։ Սկռուջն էր նրա միակ կատակատարը, նրա միակ կառավարիչը, միակ յաջորդը, միակ կենդանի մնացած ժառանգը, միակ բարեկամը և միակ սգուորը։ Սակայն հէնց Սկռուջն էլ այնքան սարսափահար չէր եղել տխուր դէպքից, որ չկարողանար հէնց թաղման օրը սքանչելի գործեր անել. և իսկապէս նա այդ օրը յաւերժացրեց մի անպայման շահաւէտ գործով։

Մառլէյի թաղման յիշատակութիւնը յետ է տանում ինձ կրկին պատմութեանս սկիզբը։ Կասկած չկայ որ Մառլէյը մեռած էր։ Այդ պէտք է լաւ ըմբռնել, այլապէս զարմանալու բան չէք գտնի յետագայ պատմութեանս մէջ։ Եթէ մենք համոզուած չլինենք, որ Համլետի հայրը մեռած է եղել դեռ ներկայացման սկզբից առաջ, ապա մի գիշեր տեսնելով նրան ասելեան քաջու դիմաց թափառելիս իր սեփական պարիսպների վրայ՝ աւելի չէինք զարմանալ, քան եթէ նրա փոխարէն մի ուրիշ միջին հասակի պարոն լինէր անզգուշաբար պտտում քամի տեղում, մի բոպէ հէնց ասենք՝ սուրբ Պողոսի գերեզմանատանը—«իր որդու թոյլ միտքը ապշեցնելու նպատակով»։

Ծեր Մառլէյի անունը երբէք [illegible]նչեց Սկռուջը։ Ամբողջ տարիներ պահեստի դրան ճակատին մնաց նոյն «Սկռուջ ու Մառլէյ»-ը։ Առևտրական տունը յայտնի էր իբրև «Սկռուջ ու Մառլէյ»։ Գործին անտեղեակները Սկռուջին երբեմն Սկռուջ էին անուանում, երբեմն—Մառլէյ, և նա երկու դէպքումն էլ պատասխանում էր։ Միևնոյն բանն էր նրա համար։

*) Լոնդոնում առհասարակ թաղումը կապալով է տրւում։

Ծ. Թ.



Օ՜, նոյնիսկ քարից իւղ կը հանէր նա իր ամուր ձեռնեռով։ Յափշտակող, գովող ու ագահ էր քաֆթառը։ Պինդ ու անխնայ՝ ինչպէս կայծաքար, որից սակայն ոչ մի պողպատ աղնիւ կրակ չի հանել երբէք։ Ծածկուող, ինքնազուսպ ու մենակեաց—ինչպէս ասարէ։ Ներքին սառնութիւնը սառցնում էր նրա հիւծուած դիմագծերը, չորացնում նրա սուր քիթը, կնճռոտում երեսը, շղթայում քայլուածքը, կարմրացնում աչքերը, կապտացնում նուրբ շրթունքն ու անախորժ սուր շեշտ տալիս նրա զիլ ձայնին։ Յուրտ եղեամ էր նստել նրա գլխին, ցնքերին ու անթրաշ ծնօտին։ Իր անձին յատուկ սառնամանիքը տարածում էր ամենուրեք և ամեն ժամանակ. տօներին սառցնում էր գրասենեակը և այդ սառոյցը չէր հալեցնում ոչ մի աստիճան—նոյնիսկ ծննդեան տօնին։

Արտաքին տօթն ու ցուրտը ոչ մի ազդեցութիւն չէր ունում Սկռուջի վրայ։ Ոչ տօթից խաշուողն էր նա, ոչ էլ ցրտից սառչողը։ Քամին նրա պէս կոպիտ չի փչում երբէք, ձիւնը նրա նման անյողդողդ չի դիմում իր նպատակին, ոչ էլ անձրևն է նրա նման անխնայ մտրակում խնդրողին։ Ամենավատ եղանակն անգամ չէր կարող մրցել նրա հետ։

Ամենասաստիկ անձրևը, ձիւնն ու կարկուտը կարող են պարծենալ սակայն այն առաւելութեամբ, որ շատ անգամ նրանք խնայող են լինում, իսկ Սկռուջը—երբէք։ Երբէք մէկը չկանգնեցրեց նրան փողոցում ուրախ-ուրախ ասելու. «Ի՞նչպէս ես, սիրելի Սկռուջ, ինչ ես գալու իմ տեսութեանը»։ Ո՛չ մի մուրացկան ձեռք չէր մեկնում նրան, ոչ մի երեխայ չէր հարցնում նրանից, թէ որ ժամն է, Սկռուջի ամբողջ կեանքում ոչ մի մարդ կամ կին չհարցրեց նրանից այս կամ այն տեղի ճանապարհը։ Նոյնիսկ կոյր մուրացկաններին առաջնորդող շները *) կարծես ճանաչում լինէին նրան. նրա մօտենալը նկատելիս՝ աշխատում էին իրանց տէրերին առաջնորդել մի դռան քամակ, կամ մի բակ և ապ[illegible] պոչերն էին շարժում, կարծես ուզում լինէին ասել. «Վատ մարդը, կոյր տէրս, կուրութիւնից էլ վատթար է»։ Բայց Սկռուջին ինչ փոյթ։ Հէնց այդ էր նրա սրտի ուզածն էլ։ Ամբողջ կեանքը իր էշը քշել՝ ոչ մի ուշադրութիւն չդարձնելով շրջապատող խուռն բազմութեան վրայ, հեռու մնալ ամեն մի մարդկային զգացմունքից,—ահա թէ ինչն էր Սկռուջի սիրածը։

Տարուայ լաւագոյն օրերից մի ամենալաւ օր—Ծննդեան

*) Լոնդոնում կոյր մուրացկանները սովորեցրած շներ են ունենում։

Ծ. Թ.

թաթախման օրը—ծեր Սկռուջը զբաղուած՝ նստած էր իր գրասենեակում։ Ցուրտ, սառնամանիք ու վատ եղանակ էր, այն էլ մռայլ։ Դուրսը, բակում մարդիկ փռնչալով գնում-գալիս էին՝ ձեռները տրորելով ու ոտները սալայատակի քարերին տալով տաքացնելու նպատակով. այդ բոլորը հասնում էր նրա ականջին։ «Սիտի»-ի *) ժամացոյցը նոր էր երեքը խփել, բայց արդէն բոլորովին մութն էր (հէնց ցերեկն էլ ասենք այնքան էլ լոյս չէր), և հարևան գրասենեակների պատուհաններից ճրագի լոյսը կարմիր բծերի էր նմանում թանձր, մոխրագոյն օդի միջով։ Ամենամի ճեղքից ու բանալիի ծակից մառախուղը ներս էր հոսում, իսկ դրսում այն աստիճան թանձր էր, որ, չնայելով բակի նեղութեանը, դիմացի տները չէին նշմարուում։ Տեսնելով մռայլ ամպի խտանալն ու ամենինչ ծածկելը, կարելի էր ենթադրել, թէ բնութիւնը մեծ եփ ու թուխի վրայ է։

Գրասենեակի դուռը բաց էր պահում Սկռուջը, որպէսզի կարողանայ աչքը գրագրի վրայ պահել, որը՝ դիմացի տակառանման փոքրիկ ու մռայլ խուցում նամակներ էր արտագրում։ Սկռուջի վառարանում շատ քիչ կրակ կար. գրագրի վառարանի կրակը նրանից էլ պակաս լինելով՝ մի հատ ածուխ լինէր կարծես։ Բայց նա չէր համարձակւում ածուխ աւելացրնել, որովհետև Սկռուջը իր սեփական սենեակումն էր պահում ածխի արկղը. և ամեն անգամ հէնց որ գրագիրը թիակը ձեռքին ներս էր մտնում, իսկոյն տէրը յիշեցնում էր, որ երևի ստիպուած կը լինի բաժանուել նրանից։ Այդ պատճառով գրագիրը վիզը փաթաթեց իր սպիտակ շալովն ու սկսեց ճրագի բոցովը տաքանալ. բայց որովհետև խեղճը զուրկ էր ուժեղ երևակայութիւնից, այդ էլ չաջողուեց։

—«Ուրախ Ծնունդ, քեռի, Աստուած օրհնի քեզ», գոչեց մի ուրախ ձայն։ Այդ Սկռուջի քրոջ որդու ձայնն էր. նա այնպիսի արագութեամբ փաթաթուեց նոու վզովը, որ հէնց դրանից միայն իմացաւ նրա գալը։

«Փահ, ասաց Սկռուջը, դատարկ բան»։ Այնքան տաքացել էր ցուրտ ու մռայլ փողոցներով վազելիս Սկռուջի քրոջ որդին, որ կարծես կրակ լինէր. նրա երեսը կարմիր ու գեղեցիկ էր, աչքերը փայլուն, իսկ քթի ծակերից գոլորշի էր փչում։ «Ծնունդն է դատարկ բան, քեռի», ասաց Սկռուջի քրոջ որդին։—«Ես հաւատացած եմ, որ հանաք ես անում։

*) Լոնդոնի կենտրոնական մասն է։

Ծ. Թ.



—«Երբէք,—ասաց Սկռուջը.—ուրախ Ծնունդ... ինչ իրաւունքով ես ուրախութիւն անում դու այդ աղքատ տեղովդ»։

—«Եթէ այդպէս է», ուրախ-ուրախ պատասխանեց երիտասարդը. «ինչ իրաւունք ունես դու տխուր լինելու. ինչ հիմք ունես դու քիթդ կախելու հարուստ տեղովդ»։

Սկռուջը «փահ»ից լաւ պատասխան չգտնելով՝ դարձեալ նոյն բացագանչութիւնն արձակեց և աւելացրեց. «Դատարկ բան»։

—«Հակառակ մի լինիր, քեռի», ասաց քրոջ որդին։

—«Բա էլ ինչ կարող եմ անել», պատասխանեց քեռին, «երբ որ քեզ պէս յիմարների աշխարհումն եմ ապրում։ Տէս հլա, ուրախ Ծնունդ։ Դուրս կորիր քո ուրախ Ծնունդովդ։ Էլ ուրիշ ինչ մի բան է քեզ համար Ծնունդը, եթէ ոչ հաշիւներով փող վճարելու ժամանակ, երբ որ գրպանումդ մի գրոշ էլ չկայ, մի ժամանակ՝ երբ տեսնում ես, որ մի տարի էլ անցաւ, բայց խելքդ մի մազաչափ էլ չաւելացաւ, մի ժամանակ՝ երբ հաշուեգրքերիդ գումարները տալով՝ նկատում ես, որ ամեն բանում տարին տասներկու ամիս շարունակ վնաս ես ունեցել։ Եթէ կարողանայի ուզածս անել», ասաց Սկռուջը զայրացած, «ամեն մի յիմարի, որ «ուրախ Ծնունդը» բերնին պարապ շրջում է, կ'եփէի իր սեփական պուդդինգի հետ միասին և տօնածառի սուր ծայրը սիրտը խրելով՝ շանսատակ կ'անէի։ Այո, այդպէս կ'անէի»։

—«Քեռի», գոչեց քրոջ որդին։

—«Տղա»,—պատասխանեց քեռին լրջօրէն. «դու քո ուզածդ պէս տօնիր Ծնունդը և թող որ ես էլ իմ ուզածիս պէս տօնեմ»։

—«Տօնեմ», կրկնեց Սկռուջի քրոջ որդին։ «Ախր դու չես տօնում»։

—«Դէ, ուրեմն ձեռք քաշիր ինձնից», ասաց Սկռուջը։ «Թող քեզ անի իր լաւութիւնը այդ Ծնունդը. հօ միշտ էլ քեզ շատ է լաւութիւն արել»։

—«Շատ բան կայ, որոնցից ես կարող էի օգուտ քաղել, սակայն համարձակւում եմ ասել, որ երբէք չեմ օգտուել», պատասխանեց քրոջ որդին։ «Ծնունդն էլ նրանցից մէկը։ Բայց Ծննդեան մասին ես միշտ միևնոյն կարծիքին եմ եղել, թէ դա անկասկած մի լաւ, բարի տօն է, որ կայ. դեռ մի կողմը թողած այն յարգանքը, որ վայել է տօնիս սուրբ անուան և ծագմանը (եթէ միայն կարելի է նրա վերաբերեալ որևէ բանը մի կողմը դնել)—մի բարի, երկայնամիտ, ողորմած, ախորժելի օր. օրացոյցի միակ օրը ամբողջ տարուայ իմ գիտեցած օրերիցս, երբ մարդ թէ կին կարծես միահամուռ համաձայնու-

թեամբ ազատ բաց են անում իրանց վակ սրտերը և մատ-
ծում են իրանցից պակասաւոր մարդկանց մասին, իբրև իրանց
իսկական ընկերների, որոնց հետ միասին պիտի գնան գերեզ-
ման. ոչ թէ դրանք մի այլ ցեղի պատկանող էակներ են, որ
մի ուրիշ ճանապարհով պիտի գնան։ Հետևապէս՝ թէպէտ Ծը-
նունդը երբէք իմ գրպանս ոչ մի կտոր ոսկի կամ արծաթ չի
զցել, ես հաւատում եմ, քեռի, որ նա ինձ լաւութիւն արել է
և անելու էլ է դեռ. և ես ասում եմ, Աստուած օրհնի այդ
օրը»։ «Տակառի» միջի գրագիրը բնազդաբար ծափահարեց, բայց
իսկոյն նկատելով իր արածի անտեղի լինելը՝ սկսեց կրակը
խառնել և բոլորովին հանգցրեց վերջին կայծը։

—«Եթէ մէկ էլ եմ լսել ձայդ», ասաց Սկռուջը, «Ծը-
նունդդ տօնելուց առաջ տեղիցդ կը զրկուես։ Իսկ դու, պարոնս,
կատարեալ ճարտարախօս հռետոր ես եղել», շարունակեցրեց նա՝
դառնալով իր քրոջ որդուն. «Զարմանում եմ, թէ ինչու չեռ
գնում պառլամենտը»։—«Մի նեղանար, քեռի, եկ, ճաշիր մեզ հետ
վաղը»։ Սկռուջն ասաց, երանի թէ նրան տեսնէր... *) այո,
այդպէս էլ ասաց։ Նա վերջացրեց նախադասութիւնը և ասաց,
թէ գերադասում է նրան այդ ծայրայեղ դրութեան մէջ տես-
նել։—«Ախր ինչու», կոչեց Սկռուջի քրոջ որդին։—«Ինչու,
ինչու պակուեցիր», ասաց Սկռուջը։—«Որովհետև սիրա-
հարուել էի։—«Որովհետև սիրահարուել էիր», մրթմրթաց
Սկռուջը, իբրև թէ սիրահարուելը աշխարհիս երեսին մի-
ակ բանն էր, որ «ուրախ Ծննդից» էլ ծիծաղելի էր։
—«Ցտեսութիւն»։—«Ոչ, քեռի, բայց դու պակուելուց» ա-
ռաջ էլ երբէք չէիր գալիս իմ տեսութեանը։ Ինչու ես
այդ պատճառը մէջ բերում»։—«Ցտեսութիւն», ասաց Սկռու-
ջը։—«Ես ոչ մի կարիք չունեմ և ոչինչ չեմ խնդրում քեզնից,
ինչու չես ուզում, որ մենք բարեկամ լինենք»։—«Ցտեսութիւն»,
ասաց Սկռուջը։—«Ի սրտէ ցաւում եմ, որ դու այդքան հա-
տատ ես վճռիդ։ Մենք երբէք որևէ վէճ չենք ունեցել, որ իմ
մեղքիցս լինէր։ Սա մի փորձ էր, որ ես արի ի պատիւ Ծնը-
նդեան և իմ տօնական տրամադրութեունս պահպանում եմ մին-
չև վերջը։ Դէ, ուրեմն, ուրախ Ծնունդ, քեռիս։—Ցտեսութիւն»,
ասաց Սկռուջը։—«Եւ բախտաւոր նոր տարի»։—«Ցտեսութիւն»,
ասաց Սկռուջը։

Զ Ա Ր Լ Զ Դ Ի Կ Ե Ն Զ

Զնայելով սրան՝ նրա քրոջ որդին առանց մի խօսք ցուրտ ա-
սելու դուրս եկաւ սենեակից։ Ելքի դրան մօտ նա կանգ առաւ

*) Երևի մեռած կամ մի այլ այսպիսի բան, որ հեղինակը անվանել է համարում կրկնել։ Ծ. Թ.



աւուր պատշաճի բարեմաղթութիւններն անելու գրագրին, որ
ի՞նչքան էլ սառած լինէր, այնուամենայնիւ Սկռուջից ջերմ
էր, որովհետև սրտանց պատասխանեց շնորհաւորութիւններին։

—«Այս լակոտն էլ նրա կտորն է», մրթմրթաց Սկռուջը,
որի ականջին էր հասել նրանց փոխադարձ շնորհաւորութիւն-
ները»։ շաբաթը 15 շիլլինգ *) ստացող գրագրի մէկը, կնոջ ու
զաւակների տէր, նա էլ է «Ուրախ Ծննդեան» մասին խօսում։
Սրանք գժուացնելու են ինձ։

Սկռուջի քրոջ որդուն դուրս թողնելիս՝ այդ տըխ-
մարը ներս էր թողել երկու ուրիշ մարդ։ Հմտակրելի
արտաքինով երկու վայելչակազմ պարոն էին՝ ձեռնե-
րին թուղթ ու տետրակներ։ Գրասենեակը մտնելով ու
բարևելով Սկռուջին՝ «Սկռուջ ու Մառլէյ կարծեմ», ասաց
պարոններից մէջը, դիմելով իր թերթին։ «Պ. Սկռուջն է, թէ՞
պ. Մառլէյը, որի հետ այժմ պատիւ ունեմ խօսելու»։
—«Արդէն եօթը տարի է, որ պ. Մառլէյը մեռել է», ա-
սաց Սկռուջը։ «Եօթը տարի առաջ հէնց այս իսկ գիշերս
մեռաւ նա»։—«Նրա կենդանի մնացած ընկերը պակաս առա-
տաձեռն չի անկասկած», ասաց պարոնը՝ ներկայացնելով իր
հաւատարմութիւնները։ Հէնց այդպէս էլ էր, որովհետև երկու
ազգակից հոգիներ էին դրանք։ «Առատաձեռն» չարաբաստիկ
խօսքից Սկռուջը կնճռոտեց իր ճակատը, գլուխը թափ տուեց
և վերադարձրեց հաւատարմութիւնները.—«Տարուայ այս տօն
օրերին, պ. Սկռուջ», ասաց պարոնը՝ մի գրիչ առնելով ձեռ-
քը, «աւելի քան երբևիցէ ցանկալի է, որ մենք մի թեթև օգ-
նութիւն հասցնենք աղքատ ու զուրկ մարդկանց, որոնք այժմ
մեծ կարօտութեան մէջ են։ Հազարաւոր մարդիկ միջոց չունեն
իրանց ամենահասարակ անհրաժեշտ կարիքները գոհացնելու.
հարիւր հազարաւորները զուրկ են ամենատարրական յարմարու-
թիւններից, տէր իմ»։

—«Բանտեր չկան», հարցրեց Սկռուջը։—«Շատ», ասաց
պարոնը՝ կրկին գրիչը ցած դնելով։—«Իսկ Միութեան գործա-
տները», հարցրեց Սկռուջը. դեռ չե՞ն փակուել հո»։—«Կան
դեռ։ Սակայն», պատասխանեց պարոնը, «կարող եմ ասել, ես
կը ցանկանայի, որ իսկի չլինէին դրանք»։—«Իսկ թիա-
բանները հո չե՞ն քանդուել, մուրացկանութեան վերաբե-
բեալ օրէնքը հո չէ՞ կորցրել իր ոյժը», հարցրեց Սկռուջը։
—«Ո՛չ, ոչ, տէր իմ»։—«Օ՜հ, ես սաստիկ վախեցայ ձեր
առաջուայ խօսքերից, թէ մի գուցէ որևէ բան լինի պա-

*) Մօտ 7 ռուբլի։

տահած այդ օգտաւէտ հիմնարկութիւններին», ասաց Սկռուջը։ «Շատ ուրախ եմ, որ ոչինչ չի պատահել։—«Աչքի առաջ ունենալով, որ դրանք աղքատ դասակարգի բազմութեանը հազիւ թէ քրիստոնավայել մտաւոր և նիւթական սնունդ լինեն մատակարարելիս», պատասխանեց պարոնը, «մենք մի քանի հոգով աշխատում ենք հանգանակել մի գումար և չքաւորների համար մի քիչ ուտելիք, խմելիք ու վառելիք գնել։ Այս օրուայ օրս ենք ընտրել, երբ կարիքը աւելի խիստ է զգացւում, իսկ ունևորը աւելի ևս յղփանում է։ Ի՞նչ նշանակեմ ուրեմն ձեր անունից»։—«Ոչինչ», ասաց Սկռուջը։—«Ուրեմն դուք կամենում էք անյայտ մնալ»։—«Ես կամենում եմ, որ ինձ հանգիստ թողնէք», ասաց Սկռուջը։ «Եթէ իմ կամքս էք հարցնում, պարոն, ահա իմ պատասխանս. ես ինքս էլ քէֆ չեմ անում Ծննդեան տօնին և ուրեմն չեմ կարող ծոյլերի համար քէֆի վրայ տալ։ Ես օգնում եմ վերևը յիշածս հիմնարկութիւնների պահպանութեանը, որոնք էժան չեն նստում. և ով որ կարիք ունի, կարող է դիմել նրանց»։—«Շատերը չեն կարող դիմել նրանց, շատերն էլ նոյնիսկ մահը գերադաս են համարում»։—«Եթէ այդպէս է, թող հէնց կոտորուին ու պակսեցնեն աւելորդ ազգաբնակութեան թիւը։ Վերջապէս, ներեցէք, այդ ինձ չէ էլ վերաբերում»։—«Ի՞նչպէս թէ չէ վերաբերում», նկատեց պարոնը։—«Այդ իմ գործը չէ», պատասխանեց Սկռուջը։ «Բաւական է, որ մարդ իր սեփական գործը լաւ վարի, իսկ ուրիշների գործին խառնուելը աւելորդ է արդէն։ Ես շարունակ զբաղուած եմ իմ գործովս. ցտեսութիւն, պարոններ։

Նկատելով՝ որ շարունակելը անօգուտ է պարզապէս, պարոնները հեռացան։ Սկռուջը կրկին իր գործին կպաւ, բոլորովին գոհ իր տուած պատասխանով, նոյնիսկ տրամադիր հանաքներ անելու։

Մինչայս մինչայն՝ մառախուղն ու ցուրտը այնքան խըստացան, որ շատերը վառ լապտերները ձեռքերին այս ու այն կողմն էին վազվզում ու իրանց ծառայութիւնը առաջարկում կառապաններին,—ձիաների առաջ լոյս անել ու ճանապարհ ցոյց տալ։ Եկեղեցու հին զանգակատունը (որի գոթական պատուհանից մռայլ զանգակը միշտ խորամանկ հայեացք էր գըցում Սկռուջի վրայ) այլ ևս չէր երևում. իսկ ժամերն ու քառորդները ամպի միջից էին զօղանջում՝ դողդոջուն արձագանգ սփռելով օդում, կարծես զանգակատան սառած գլխից ատամների բաղխոց լինէր հնչելիս։ Ցուրտը սաստկացաւ։ Գլխաւոր փողոցի վրայ, բակի անկիւնում մի քանի բանուոր գաղի խողովակներ էին կարկատում և կրակ էին անում կրակարանում, որի շուրջը հաւաքուել էին ցնցոտիներում կորած մարդիկ ու երեխաներ և հիացմունքով ձեռներն էին տաքացնում ու աչքերը ճպճպացնում կրակի դիմաց։ Զրանցքի անուշադրութեան մատնուած ծորակից հոսող ջուրը մտամոլոր սառել էր ու մի անորոշ մարդատեաց տեսք ընդունել։ Ցօնածառներով ու պտուղներով լիքը խանութների լուսաւորուած պատուհանների առաջ անցորդների գունատ դէմքերը կարմրին էին տալիս։ Հաւավաճառների ու կանաչեղէն ծախողների կրպակների տեսարանը հրաշալի ու փառահեղ էր։ Համարեա անհաւատալի էր թւում, թէ այս բոլորը «առևտուր» անուանուած ձանձրալի պարապմունքի հետ որևէ առընչութիւն ունենայ։ Լորդ-մերը հզօր Մէնշըն-Հաուսի *) ամրոցից հրաման տուեց իր յիսունաչափ խոհարարներին ու տակառապետներին տօնել Ծնունդը, ինչպէս որ վայել է լորդ-մերի տնտեսութեանը. նոյնիսկ փոքրիկ դերձակը, որ վերջին երկուշաբթի օրը հարբած՝ անկարգութիւններ էր արել փողոցում ու հինգ շիլլինգ տուգանքի ենթարկուել, նա էլ իր վերնայարկի սենեակում յաջորդ օրուայ պուդդինգն էր տրորում, մինչդեռ նրա լղար կինն ու երեխան դուրս էին գնում միս գնելու։

Մառախուղը թանձրանում էր և սառնամանիքը սաստկանում։ Ցուրտը մարդուս ոսկորների ուղեղն էր սառցնում։ Եթէ բարի սուրբ Դունստանը իր սովորական գործիքը **) բանեցնելու փոխարէն չար Ոգու քիթը մի այդպիսի ցրտի տակ գցէր,—հաւատացնում եմ, որ վերջինս ծիծաղաշարժ բռնչոց կ'արձակէր։ Մի ջահիլ տղայ, որի ողորմելի քիթը խածոտել ու կրծոտել էր քաղցած սառնամանիքը շան բերան ընկած ոսկորի նման, կռացաւ, որ Սկռուջի դրան բանալու ծակիցը «Աւետիք» ասի նրա համար. բայց հէնց որ լսուեցին առաջին խօսքերը՝ «Աստուած օրհնի՛ ձեզ, ուրախ պարոն, Աստուած ձեզ սև օր չըտայ»,—Սկռուջը մի այնպիսի կատաղութեամբ քանոնը վերցրեց, որ երգիչը փախաւ սարսափից՝ բանալիի ծակը թողնելով մառախուղին և Սկռուջի սրտակից սառնամանիքին։ Վերջապէս գրասենեակը փակելու ժամը հասաւ։ Սկռուջը ակամայ ինքաւ իր աթոռից և լուռ իմաց արաւ «տակառի» մէջն սպասող գրագրին, որ իսկոյն իր ճրագը հանգցրեց ու գդակը ծածկեց։

—«Երևի վաղը ամբողջ օրն ես ուզում տօնել», ասաց Սկռուջը։

---

*) Այդպէս է անուանւում Լոնդոնի լորդ-մերի ապարանքը։

**) Ըստ աւանդութեան ս. Դունստանը շիկացած ունելիքով բռնել է սատանայի քիթը, երբ վերջինս փորձել է գայթակղեցնել սրբին։ Ծ. Թ.

—«Եթէ կարելի է, պարոն»։

—«Ոչ կարելի է և ոչ էլ արդարացի», ասաց Սկռուջը։ «Եթէ դրա փոխարէն կէս կռոն կտրեմ քեզնից, կ'ասես, թէ վատ եմ վարուում»։

Գրագիրը ժպտաց անհամարձակ։

—«Բայց դու վատ չես վարուում ինձ հետ», ասաց Սկռուջը, «երբ որ մի ամբողջ օր առանց բանելու ուզում ես ռոճիկ ստանալ»։

Գրագիրը նկատեց, որ այդ բանը տարին մի անգամ է պատահում։

—«Ողորմելի պատրուակ մարդու գրպանն ամեն տարի դեկտեմբերի 25-ին կտրելու համար», ասաց Սկռուջը՝ վերարկուն մինչև ծնօտը կոճկելով։ «Այնուամենայնիւ երևի դու ամբողջ օրը չես գալու։ Ուրեմն գոնէ միւս օրուայ առաւօտը կանուխ այստեղ եղիր»։

Գրագիրը խոստացաւ, և Սկռուջը փնթփնթալով դուրս եկաւ։ Մի ակնթարթում գրասենեակը փակուեց, և գրագիրը իր սպիտակ շալի երկար, մինչև մէջքը հասնող ծայրերը օրօրելով (որովհետև վերարկու չունէր) ի պատիւ Ծննդեան թաթախման՝ մի խումբ երեխաների հետ քսան անգամ Կոռնհիլի սառցի (slide) վրայ այսուայն կողմ սահեց և ապա վազեց դէպի Կեմդըն-Տաուն աչքակապուկի խաղալու։

Սկռուջը իր մայր ճաշն արաւ սովորական մայր ճաշարանում և կարդալով բոլոր լրագրերը և երեկոյեան մնացորդը իր հաշուետոմարների վրայ անցկացնելով՝ գնաց տուն քնելու։ Նա այն բնակարանումն էր ապրում, ուր երբեմն ապրել էր նրա հանգուցեալ ընկերը։ Բակի ծայրում գտնուող մռայլ տան միջի մութ սենեակների մի շարք էր դա, որ կարծես սխալմամբ էր ընկել այդտեղ (երևի դեռ ջահիլ ժամանակը իր հարևան տների հետ աչքակապուկի խաղալիս) և ապա մոռացել էր դուրս գալու ճանապարհը։ Այժմ նա բաւականին հնացած ու մայր էր, որովհետև բացի Սկռուջից ոչոք չէր ապրում այնտեղ. մնացեալ սենեակները վարձու էին տրուած գրասենեակների համար։ Բակն այնքան մութն էր, որ նոյնիսկ Սկռուջը ծանօթ լինելով նրա ամեն մի քարին՝ ստիպուած էր խարխափելով առաջ գնալ։ Մառախուղն ու սառնամանիքը այնպէս էին կոխել տան սև, հին դարպասը, որ կարծես եղանակի Ոգին լինէր մտամոլոր նստած շեմքում։

Դարպասի մուրճը բացի իր անչափ մեծութիւնից անկասկած էլի մի ուրիշ աչքի ընկնող առանձնայատկութիւն չունէր։ Կասկած չկայ որ Սկռուջը տեսնում էր միևնոյն մուրճը ամեն



առաւօտ-երեկոյ, քանի որ այդ տանն էր ապրում, անկասկած է նոյնպէս, որ Սկռուջը այնքան քիչ գործ ունէր երևակայութիւն ասուած բանի հետ, որքան որ Լոնդոնի Սիտիի մնացեալ բնակիչները, նոյնիսկ (ներեցէք համարձակութեանս՝ բացառութիւն չանելով քաղաքային խորհրդի աւագների ու գիլդիականների համար։ Աչքի առաջ ունենալով, որ Սկռուջը առաւօտը իր «եօթնամեայ հանգուցեալ» ընկերոջը յիշելուց յետոյ այնուհետ իր մտքերից մի հատիկն էլ չէր նուիրել Մառլէին,—թող ով որ կարող է՝ բացատրի, թէ այդ ինչպէս պատահեց, որ Սկռուջը բանալին իր դրան կողպէքի մէջ դնելով՝ նկատեց, որ դրան մուրճը առանց ոչէ միջանկեալ փոփոխութեան ենթարկուելու այլևս մուրճ չէ, այլ Մառլէյի դէմքն է։

Այո, Մառլէյի դէմքը, որ բակում եղած ուրիշ բաների նման անթափանց մթութեան մէջ չէր, այլ շրջապատուած էր մի տեսակ տխուր լուսով՝ մութ ներքնատնում լոյս տուող փոքրացած խեցգետնի նման։ Ոչ բարկացած և ոչ կատաղի էր նա. Մառլէյի սովորական հայեացքովն էր նայում Սկռուջին՝ աննիւթական ակնոցը իր անմարմին ճակատին քաշած։ Նրա մազերը մի տեսակ օտարոտի շարժման մէջ էին կարծես շնչառութեան կամ տաք օդի հոսանքից։ Իսկ աչքերը թէպէտ բաց էին լայնլայն, բայց անշարժ էին կատարելապէս։ Այդ հանգամանքը և գոյնի կապտութիւնը սարսափելի էին դարձնում այդ դէմքը, ոչկայն սարսափը նրա արտայայտութեան անբաժան մասը չէր կազմում, այլ կարծես այդ դէմքից անկախ էր և նրա իշխանութիւնից դուրս։ Երբ Սկռուջը անթարթ նայում էր այդ երևոյթին, կրկին դրան մուրճն էր նրա աչքի առաջ։ Ասել՝ թէ նա չէր վախեցել, կամ թէ նրա արիւնը չէր սառչում սարսափի զգացմունքից, որ երեխայութիւնից անծանօթ էր նրան, ճիշտ չէր լինի։ Սակայն նա կրկին ձեռքը մեկնեց բանալին, որ բաց էր թողել, թափով շուռ տուեց, ներս մտաւ ու ճրագը վառեց։ Վայրկենական անվճռականութեան մէջ նա կանգ առաւ դուռը փակելուց առաջ և զգուշութեամբ նայեց նրա քամակը, կարծես մասամբ սպասելիս լինէր, թէ ներսն էլ Մառլէյի ծամը՝ դրան յետևից ցցուելով՝ սարսափահար անելու իրան։ Բայց տեսնելով՝ որ ոչինչ չկայ բացի միքանի հատ պտուտակից, որոնցով մուրճը ամրացրած էր դրան վրայ, նա «պուհ-պուհ» արաւ ու դուռը փակեց շրխկոցով։

Այդ ձայնի որոտը թնդաց ամբողջ տան մէջ։ Վերևի ամենամի սենեակ, և ներքևում՝ գինեվաճառի ներքնատան ամենամի տակառ կարծես մէկիկ-մէկիկ արձագանգ տուին։ Սկռուջը արձագանգներից վախեցող պտուղը չէր։ Նա ամրացրեց դուռը

և սրահումն անցնելով հանդարտութեամբ՝ բարձրացաւ սանդուխները, ճանապարհին ճրագի պատրոյգն ուղղելով։

Վեցձիանի կառքը հինաւուրց լայնարձակ սանդուխներով վեր քշելու մասին կարելի է ինչքան ուզէք անորոշ պատմութիւններ անել, բայց ես ուզում եմ ասել, թէ այդ սանդուխով կարելի էր մի դիակառք քաշել վերը՝ լծակը դէպի պատն արած, իսկ դուռը—դէպի վանդակապատը, այն էլ հեշտութեամբ. սանդուխն այնքան ընդարձակ էր, որ դեռ էլի ազատ տեղ կը մնար, և երևի հէնց այդ էր պատճառը, որ Սկռուջին թուաց, թէ մի ինքնաշարժ դիակառք է երևում մթութեան մէջ իր առաջին։ Նոյնիսկ փողոցային դաղի լապտերներից վեցի լոյսն էլ շատ առատ չէր լուսաւորի այդ ընդարձակ սրահը. ուրեմն կարող էք երևակայել, թէ ինչ կը լինէր Սկռուջի ճարպէ ճրագի լոյսը։ Սկռուջը բարձրանալիս՝ դրա մասին շատ էլ հոգս չէր անում. մթութիւնը էժան բան է, որ Սկռուջի սիրածն է։ Բայց իր ծանր դուռը փակելուց առաջ նա անցաւ սենեակներով, որ տեսնի, թէ կարգին է արդեօք ամեն բան։

Հիւրասենեակում, ննջարանում, մառանում ամեն բան կարգին էր։ Սեղանի ու թախտի տակ բան չկար։ Մի քիչ կըրակ կար բուխարում. պնակն ու դդալը պատրաստ. մի փոքրիկ ամանի ճաշ կրակի վրայ։ Ո՛չ մահճակալի տակը, ոչ պահարանում, ոչ իր խալաթի մէջ, որ կախ էր պատին կասկածելի դիրքով—ոչինչ չկար։ Մառանում, ինչպէս որ միշտ, մի հին կրակարան էր, մի զոյգ հին կօշիկ, երկու ձկնեղէնի կողով, մի լուսացարան—երեք ոտնանի և մի անթրոց։

Բոլորովին միամտուած՝ նա փակեց դուռը ներսից, սովորութեան հակառակ երկու անգամ շուռ տալով բանալին։ Եւ այդպիսով ապահովուած ամեն մի անակնկալ դէպքից՝ նա հանեց իր փողպատը, հագաւ խալաթն ու հողաթափերը, ծածկեց գիշերուայ գդակն ու նստեց կրակի առաջ իր ընթրիքն ուտելու։

Իսկապէս դա մի չնչին կրակ էր, ոչինչ բան այդչափ ցուրտ գիշեր։ Նա ստիպուած էր մօտենալ ու թեքուել վառարանի վրայ, որ զգայ նրա մի բուռն ածուխի տաքութիւնը։ Վառարանը մի հին բան էր, վաղուց մի հոլլանդացի վաճառականի շինած, զարդարուած գեղեցիկ նկարովի հոլլանդական աղիւսներով. պատկերները վերաբերում էին սուրբ գրքից վերցրած զանազան դէպքերի լուսաբանութեան. Կայէններ ու Աբելներ, փարաւոնի դուստրներ, Շաբանի թագուհիներ, փեսաբանման ամպերի վրայ օդովն իջնող Աբրահամներ, Բաղդասարներ ու առաքեալներ՝ իւղամանների մէջ նստած ծովը մտնելիս. հարիւրաւոր դէմքեր, որ պիտի գրաւէին նրա միտքը. բայց կրկին հինաւուրց մարգարէի գաւազանի նման նոյն «եօթնամեայ հանգուցեալ» Մառլէյի դէմքը ամեն ինչ կլանեց։ Եթէ սկզբից ամենմի հարթ աղիւս սպիտակ լինէր և ընդունակ նրա մտքի մասնիկները արտացոլելու, այն ժամանակ ամենմի աղիւսի վրայ Մառլէյի գլխի պատճէնը կը լինէր տպաւորուած։

—«Դատարկ բան է», ասաց Սկռուջը և սկսեց անցուդարձ անել սենեակում։

Մի քանի պտոյտից յետոյ նա կրկին նստեց։ Երբ նա գլուխը յետ գցեց աթոռի մէջքին, նրա հայեացքը կանգ առաւ սենեակում կախ զանգի վրայ, մի գործածութիւնից դուրս եկած զանգ, որ մի անյայտ, այժմ մոռացուած նպատակով կապ ունէր վերի յարկի հետ։ Հէնց որ նայեց, մեծ զարմանքով և օտարոտի, անբացատրելի սարսափով նկատեց, որ զանգն սկսում է օրօրուել։ Սկզբում այնքան հանդարտ էր օրօրւում, որ հազիւ էր ձայն հանում. բայց շուտով նրա ձայնը բարձրացաւ. տան միջի մնացեալ զանգերն էլ սկսեցին ձայնակցել, որ տևեց կէս րոպէ, կամ շատ-շատ մի րոպէ, բայց Սկռուջին մի ամբողջ ժամ թուաց այդ րոպէն։ Ինչպէս որ միասին սկսել էին, այնպէս էլ միասին դադարեցին զանգերը, որոնց ձայնին յաջորդեց գինեվաճառի ներքնատնից լսուող շըղթայի զնդզնդոցը, որ կ՚ասես մէկը քարշ էր տալիս տակառների վրայով։ Այն ժամանակ Սկռուջը յիշեց, որ շատ անգամ լսած կար, թէ այն տներում, ուր չար հոգիներ են լինում, յաճախ լսւում է նրանց շղթաների ձայնը։ Ներքնատան դուռը բացուեց աղմկալից շրխկոցով, շղթայի ձայնը սաստկացաւ սրահում, սանդուխի վրայ, ապա ուղղակի մօտեցաւ նրա սենեակի դրանը։

—«Դատարկ բաներ են», ասաց Սկռուջը. «չեմ հաւատում այդպիսի բաների»։

Սակայն երբ Ուրուականը կանգ չառնելով փակ դըրան առաջ՝ նրա աչքի առաջին անցաւ ու սենեակը մտաւ,—նրա գոյնը թռաւ։ Վառարանի մարող կրակը բոցավառուեց իսկոյն, կարծես ուզում էր ասել. «Ճանաչում եմ, Մառլէյի Ուրուականն է», և կրկին մարեց։

Նոյն դէմքն էր, իսկևիսկ նոյնը։ Մառլէյն էր իր խողի սոչի նման ծամովը, իր մշտական ժիլետը, նեղլիկ վարտիքն ու կօշիկները հագին։ Կօշկի վրայի փնջերը ցից էին նրա ծամի, վերնազգեստի փեշերի և գլխի մազերի նման։ Երկար

շղթան պոչի նման նրա մէջքին էր տուած։ Մօտիկից Սկռուջը նկատեց, որ շղթան բաղկացած էր փողի արկղներից, բանալիներից, կողպէքներից, հաշուեմատեաններից, վաւերաթղթերից և ծանր, պողպատեայ փողի քսակներից։ Նրա մարմինը թափանցիկ էր, այնպէս որ Սկռուջը նրան նայելիս վերնազգեստի միջովը տեսնում էր նոյն վերնազգեստի քամակի զոյգ կոճակը։

Շատ անգամ էր Սկռուջը լսել ուրիշներից, թէ Մառլէյն անսիրտ է, բայց մինչև օրս երբէք չէր հաւատացել դրան։ Ո՛չ. նա նոյնիսկ այժմ էլ չէր հաւատում։ Թէպէտ Սկռուջի հայեացքը թափանցում էր Ուրուականի մարմնի միջով և տեսնում էր նրան իր առաջին կանգնած, թէպէտ զգում էր նրա մեռած-պաղ աչքերի սառցնող ազդեցութիւնը, թէպէտ նոյնիսկ նրա ծնօտի տակով գլխին կապած թաշկինակն էլ ճանաչեց (այդ փաթաթանը նա առաջ չէր նկատել), սակայն նա դեռ չէր հաւատում և կասկածով էր վերաբերում իր զգայարանների ցուցմունքներին։

—«Ի՞նչ կայ», հարցրեց Սկռուջը իր մշտական սառն ու անախորժ շեշտով։ «Ի՞նչ ես ուզում ինձնից»։

—«Շատ բան»։ Անկասկած Մառլէյի ձայնն էր։

—«Ո՞վ ես դու»։

—«Ո՞վ էիր դասա»։

—«Ո՞վ էիր ուրեմն», ասաց Սկռուջը՝ ձայնը բարձրացրնելով։ «Ի՞նչ սաղ մի Ուրուականի այդ ասահման ըծախնդրութիւն»։

—«Կենդանի ժամանակս ես քո ընկեր Յակոբ Մառլէյն էի»։

—«Կարող ես... Կարող ես դու, արդեօք... նստել», հարցրեց Սկռուջը՝ կասկածոտ աչքերով նայելով նրան։

—«Կարող եմ»։

—«Նստիր ուրեմն»։

Սկռուջն այդ հարցը տուեց, որովհետև չէր հաւատում, թէ մի այդպիսի թափանցիկ Ուրուական կարողանայ նստել, և յոյս ունէր այդպիսով նեղը գցել նրան ու ազատուել անախորժ խօսակցից։ Բայց Ուրուականը նստեց վառարանի միւս կողմը, կարծես թէ այդ բանին բոլորովին սովոր լինէր։

—«Դու ինձ չես հաւատում», նկատեց Ուրուականը։

—«Ոչ», ասաց Սկռուջը։

—«Իրականութեանս մասին ուրիշ էլ ի՞նչ ապացոյց ես ուզում, բացի զգայարաններիդ վկայութիւնից։

—«Չգիտեմ», ասաց Սկռուջը։

—«Ինչու՞ չես հաւատում զգայարաններիդ»։



—«Որովհետև», ասաց Սկռուջը, «ամենամի չնչին բան, օրինակ՝ ստամոքսի մի թեթև խանգարումն կարող է զգայարանները սխալի մէջ գցել։ Կարելի է դու մի կտոր անմարսելի միս ես, մի քիչ մանանեխ, մի կտոր պանիր, հում գետնախնձորի մի կտոր ես։ Ով որ էլ լինես, քեզնից աւելի քելեմի հոտ է գալիս, քան թէ մեռելի»։

Սկռուջն առհասարակ հանաք անողը չէր, մանաւանդ այժմ նրա սիրտը բոլորովին տրամադիր չէր կատակ անելու։ Ճշմարիտն այն է, որ նա աշխատում էր սրամիտ լինել, յուսալով դրանով ցրել իր ուշադրութիւնը և ճնշել սարսափի զգացմունքը, որովհետև Ուրուականի ձայնը նրա ոսկրների ծուծն էր թափանցում։

Մի բոպէ լաւ նստել ու նայել այդ անթարթ, ապակեայ աչքերին՝ մի տաժանելի փորձութիւն էր Սկռուջի համար։ Իսկապէս սարսափելի էր նրա դրութիւնը, որովհետև Ուրուականը կարծես շրջապատուած լինէր իր սեփական դժոխային մթնոլորտով։ Ինքը չէր զգում այդ, բայց պարզ է, որ այդ էր Սկռուջի սարսափի պատճառը, որովհետև թէպէտ Ուրուականը բոլորովին անշարժ էր—նրա մազերը, փեշերը, կօշկի փնջերը դեռ շարժւում էին կարծես տաք թոնրի բոցից։

—«Տեսնում ես այս քչփորիկն», ասաց Սկռուջը՝ յարձակողական դիրք բռնելով վերը յիշած պատճառովը և ցանկանալով գոնէ մի վայրկեան Ուրուականի անշարժ հայեացքը դարձնել իրանից։

—«Տեսնում եմ», պատասխանեց Ուրուականը։

—«Ա՜խր դու չես էլ նայում նրան», ասաց Սկռուջը։

—«Այնուամենայնիւ տեսնում եմ», ասաց Ուրուականը։

—«Լաւ», պատասխանեց Սկռուջը. «եթէ ես այս բանը կուլ տամ, կեանքիս ամբողջ մնացորդը շրջապատուած պիտի լինեմ զանազան Ոգիներով, որ սակայն բոլորն էլ իմ սեփական երևակայութեանս ծնունդը պիտի լինեն։ Դատարկ բաներ են դրանք՝ ասում եմ, դատարկ»։

Այն ժամանակ Ուրուականը մի այնպիսի զարհուրելի աղաղակ արձակեց և շղթան թափ տալով՝ մի այնպիսի ողբագին ու սարսափելի ձայն հանեց, որ Սկռուջը պինդ կպաւ աթոռին՝ վախենալով վայր ընկնել ուշաթափ։ Բայց աւելի ևս մեծ էր նրա սարսափը, երբ Ուրուականը հանեց իր գլխի փաթաթանը (կարծես թէ շոգ էր սենեակում), և նրա ներքևի ծնօտը կախ ընկաւ կրծքի վրայ։

—«Ինձ», ասաց Սկռուջը, «հա, զարհուրելի տեսիլք, ինչու՞ ես դու տանջում ինձ»։

—«Ո՜հ, դու ունայն աշխարհի զաւակ», պատասխանեց Ուրուականը. «հաւատո՞ւմ ես այժմ ինձ, թէ՞ ոչ»։

«Հաւատում եմ», ասաց Սկռուջը։ «Պիտի հաւատամ։ Բայց ինչո՞ւ են Ոգիները պտտում երկրումս և ինչո՞ւ են ինձ մօտ գալիս»։

—«Հարկաւոր է, որ», պատասխանեց ուրուականը, «ամեն մարդու հոգի պտտի աշխարհումս իր ընկեր-մարդկանց մէջ միշտ ու հանապազ։ Եւ ում հոգի որ կենդանութեան ժամանակ չի կատարել ասածս, դատապարտուած է մահից յետոյ թափառել աշխարհում, վայ ինձ, և վկայ լինել այնպիսի բաների, որոնց այլևս չի կարող մասնակցել, բայց կենդանի ժամանակը կարող էր մասնակցել և... բախտաւորուել»։

Ուրուականը կրկին աղաղակ արձակեց և թափ տուեց շղթան՝ իր աննիւթական ձեռները կոտրտելով։

—«Ասա՛ ինձ, ինչո՞ւ ես դու շղթայակապ», հարցրեց Սկռուջը։

—«Կենդանութեանս ժամանակ սեփական ձեռներովս կըռածն է սա», պատասխանեց Ուրուականը։ «Ինքս եմ շինել օղակ-օղակ և կանգուն-կանգուն. իմ ազատ կամքովս է, որ ինձ շղթայակապ եմ արել և իմ ազատ կամքովս եմ կրում այս շղթան։ Մի՞թէ սրա տեսքը օտար է քեզ համար»։

Սկռուջը սկսեց աւելի սաստիկ դողալ։

—«Կարելի է դու ուզում ես քո սեփական ամուր շղթայի ծանրութիւնն ու երկարութիւնն իմանալ», շարունակեց ուրուականը։ Քոնն էլ իմիս չափ ծանր ու երկար էր դեռ եօթը տարի սրանից առաջ, թաթախման գիշերը։ Այնուհետև դու աշխատել ես նրա վրայ և մի հաստ ու պինդ շղթայ ես շինել»։

Սկռուջը աչքերը գցեց իր շուրջը, յատակին, սպասելով իրան էլ կապած տեսնել յիսուն-վաթսուն սաժէնանոց երկաթէ պարանով. բայց ոչինչ էլ չտեսաւ»։

—«Յակոբ», գոչեց նա լաղագին, «Յակոբ Մառլէյ՝ Ջան, խօսի՛ր, մխիթարի՛ր ինձ, Յակո՛բ Ջան»։

—«Մխիթարական և ոչ մի խօսք չունեմ քեզ համար», պատասխանեց Ուրուականը։ «Ուրիշ տեղերից է գալիս մխիթարութիւնը, Էբենեզար Սկռուջ, ուրիշ էակների ձեռքով և ոչ քեզ նման մարդկանց համար։ Ես չեմ կարող ասել քեզ ուղածը։ Շատ քիչ բան է թոյլատրուած ինձ։ Ո՛չ մի տեղ չեմ կարող հանգստանալ, ոչ կանգ առնել և ոչ մնալ։ Կենդանութեանս ժամանակ հոգիս երբէք մեր գրասենեակից դուրս չէր գալիս—լա՛ւ լսի՛ր ասածս—չէր դուրս գալիս մեր խանութի նեղ սահ-



մաններից, և այժմ ես դատապարտուած եմ ծանր ճանապարհորդութիւններ անելու»։

Սկռուջը սովորութիւն ունէր մտախոհութեան բոպէներին ձեռները կոխել իր վարտիքի գրպանները։ Մտածելով Ուրուականի ասածների վրայ՝ այժմ էլ նա նոյնն էր արել, սակայն չհամարձակելով աչքերը վեր բարձրացրել կամ վեր կենալ չոքած տեղից։

—«Երևի այդ հարցում շատ ես դանդաղ շարժուել, Յակոբ», նկատեց Սկռուջը մտամոլոր, թէպէտ և խոնարհութեամբ ու յարգանքով։

—«Դանդաղ», պատասխանեց Ուրուականը։

—«Եօթը տարի է, որ մեռել ես», մտախոհ արտասանեց Սկռուջը, «և թափառո՞ւմ ես շարունակ»։

—«Շարունակ», ասաց Ուրուականը։ «Ո՛չ հանգիստ և ոչ անդորրութիւն։ Խղճի մշտջենական խայթից»։

—«Արագ ես մահ գալիս», ասաց Սկռուջը։

—«Քամու թևերով», պատասխանեց Ուրուականը։

—«Եօթը տարում երևի շատ երկրներ ես ոտի տակ տուել», ասաց Սկռուջը։

Այս խօսքերը լսելով՝ Ուրուականը մէկ էլ աղաղակ բարձրացրեց և գիշերուայ մեռելային լռութեան մէջ մի այնպիսի հրէշաւոր ձայն հանեց իր շղթայով, որ գիշերուայ պահապանին մեղադրելու չէր, եթէ թաղի հանգստութիւնը այդպէս խանգարողին դատի ենթարկէր։

—«Օ՜, դու, գերուածդ, կաշկանդուածդ ու կրկնակի շղթայակապդ», գոչեց Ուրուականը։ «Չգիտե՞ս, որ այս աշխարհի համար երկնային էակները շատ ու շատ դարեր պիտի ջանք թափեն յաւիտենականութեան մէջ, մինչև որ տարածուի այն բարիքը, որ ընդունակ է արտադրել աշխարհը։ Չգիտե՞ս, որ ամենի քրիստոնեայ սիրով գործելով իր փոքրիկ շրջանում, ինչ և լինի այդ շրջանը, իր մահկանացու կեանքը պիտի շատ կարճ համարի՝ համեմատած այն ընդարձակ միջոցների հետ, որ նա ունի իր ձեռքի տակը, ուրիշներին օգտակար լինելու համար։ Չգիտե՞ս, որ ապագայում ղղջալով՝ չես կարող ուղղել կեանքիդ սխալները, երբ յարմար դէպքից չես օգտուել ժամանակին մերձաւորիդ օգտակար լինելու նպատակով։ Եւ այդպիսի մէկն ես եղել ես, ո՜հ, այդպիսին էի ես»։

—«Դու միշտ լաւ, գործի մարդ ես եղել, Յակոբ», կակազեց Սկռուջը, որ այժմ սկսում էր այդ բոլորը իր վրայ առնել։

—«Գործ», աղաղակեց Ուրուականը՝ կրկին ձեռները կո-



1001/635

տըրտելով։ «Մարդասիրութիւնն էր իմ գործը. ողորմութիւնը, ներողամտութիւնը և բարեգործութիւնն էին իմ անելիք գործը։ Առաւուրս միայն մի կաթիլ ջուր էր իմ գործիս անսահման ովկիանոսում»։ Ուրուականը ձեռքի երկարութեամբ շղթան բարձրացրեց, կարծես թէ այդ էր իր անձկութեան պատճառը, և կրկին դառնութեամբ գետին շպրտեց։

—«Ցարուայ այս օրերին», ասաց Ուրուականը, «տանջանքներս սաստկանում են։ Ինչո՞ւ էի թափառում ինձ նման էակների բազմութեան մէջ միշտ գլխակոր և երբէք չէի բարձրացնում աչքերս՝ նայելու այն օրհնեալ Աստղին, որ Մոգերին առաջնորդեց դէպի աղքատիկ Այրը։ Մի՞թէ պակաս էին աղքատ մարդիկ, որ նրա լոյսը ինձ էլ նրանց մօտ առաջնորդ էր»։

Սկռուջը անչափ տրտմեց՝ լսելով Ուրուականի այս խօսքերը և սկսեց սաստիկ դողալ։

—«Լսիր ինձ», գոչեց Ուրուականը։ «Ժամս մօտենում է»։

—«Լսում եմ», ասաց Սկռուջը։ «Բայց խնայիր ինձ, Յակոբ, խնդրում եմ. պերճախօսութիւն մի անիր»։

—«Ի՞նչպէս է, որ այժմ մի այնպիսի ձև եմ ընդունել ես, որ դու ինձ տեսնում ես,—չեմ կարող ասել։ Շատ ու շատ օրեր անընդհատ նստել եմ կողքիդ»։

Շատ էլ դուրեկան նորութիւն չէր այդ Սկռուջի համար։ Նա դողալով սրբեց ճակատի քրտինքը։

—«Ապաշխարանքիս թեթև մասը չէր այդ», շարունակեց Ուրուականը։ «Այս գիշեր ես եկել եմ քեզ նախազգուշացնելու, որ դեռ հնարաւորութիւն և յոյս կայ քեզ համար խուսափելու իմ վիճակից։ Մի հնարաւորութիւն և յոյս, որ ես եմ տալիս քեզ, Էբենեզար»։

—«Դու միշտ լաւ ընկեր ես եղել ինձ համար», ասաց Սկռուջը։ «Շնորհակալ եմ»։

—«Երեք Ոգի պիտի այցելեն քեզ», շարունակեց Ուրուականը։

Սկռուջի դէմքը այնպէս ձգուեց, ինչպէս երբեմն Ուրուականինն էր ձգուել։

—«Ա՞յդ է քո յիշած հնարաւորութիւնն ու յոյսը, Յակոբ», հարցրեց նա դողդոջուն ձայնով։

—«Այդ է»։

—«Շնոր..... շնորհակալ եմ, հարկաւոր չէ ինձ», ասաց Սկռուջը։

—«Առանց նրանց այցելութեան», ասաց Սկռուջը, «դու մի յուսար իմ վիճակից խոյս տալ։ Առաջնին սպասիր վաղը, երբ ժամացոյցի զանգը «մէկը» կը խփի»։



—«Չէ՞ կարելի, որ բոլորին միանգամից ընդունեմ ու պրծնեմ, Յակոբ», ակնարկեց Սկռուջը։

—«Երկրորդին սպասիր նոյն ժամին միւս գիշեր։ Երրորդին՝ յաջորդ գիշեր, երբ տասներկուսի վերջին հարուածի ձայնը կ'անհետանայ։ Մի՛ սպասիր ինձ մէկ էլ տեսնել և քո անփական օգտիդ համար աշխատիր չմոռանալ մեր մէջ անցածը»։

Այս խօսքերից յետոյ ուրուականը սեղանի վրայից վերցրեց իր փաթաթանը և կապեց գլուխը առաջուայ պէս։ Սկռուջն այդ իմացաւ նրա առամների ընդհարման անախորժ ձայնից, երբ փաթաթանը իրար խփեց նրա ծնօտները։ Նա կրկին սիրտ արաւ աչքերը բարձրացնել, գերբնական այցելուն շղթայակապ կանգնած էր ուղղակի նրա դիմացը։

Ուրուականը յետ-յետ գնալով՝ սկսեց հեռանալ նրանից. նրա ամեն մի քայլում պատուհանը մի քիչ բարձրանում *) էր ինքնիրան, այնպէս որ երբ Ուրուականը հասաւ պատուհանին, վերջինս բոլորովին բացուած էր։ Նա նշան արաւ Սկռուջին մօտենալու, և երբ սա երկու քայլի վրայ էր, Մաուլէյի Ուրուականը ձեռքը բարձրացնելով՝ զգուշացրեց նրան աւելի մօտ չգնալ։ Սկռուջը կանգնեց ոչ այնքան հնազանդութիւնից դրդուած, որքան զարմանքից ու վախից, որովհետև հէնց որ նա ձեռքը բարձրացրեց, օդը լցուեց խառն ու անորոշ աղմուկով, լացի ու վայի ձայներով, անասելի տխուր և ինքնամբասան կոծով։ Ուրուականը մի րոպէ լռելուց յետոյ իր ձայնն էլ խառնեց վշտալի աղբին և սուզուեց գիշերուայ սառը մթութեան մէջ։

Սկռուջը յուսակտուր հետաքրքրութիւնով մօտեցաւ պատուհանին և դուրս նայեց։

Օդը լիքն էր հեծող ուրուականներով, որ անդադրում փսաթկոտութիւնով այս ու այն կողմն էին սլանում։ Նրանք ամենքն էլ Մաուլէյի Ուրուականի նման շղթայակապ էին, ոմանք (երևի քաղաքական յանցաւորները) կապուած էին իրար. ոչ մէկն էլ ազատ չէր։ Շատերն Սկռուջի անձնական ծանօթներից էին։ Այն սպիտակ ժիլետաւոր ծերունին նրա մօտ բարեկամն է եղել, որի ոտներին մի հրէշաւոր երկաթէ մեծուկ է կապուած։ Նա մի ողորմելի աղաղակ էր արձակում՝ անկարող լինելով օգնել մի խեղճ կնոջ ու նրա երեխային, որոնց նա տեսնում էր ներքևում մի շէմքի վրայ։ Բոլորի դըժ-

*) Արևելքում էլ պատուհանները չեն բացւում աջ ու ձախ, այլ դէպի վեր են բարձրանում։ Ե. Թ.

բախտութիւնը պարզապէս նրանումն էր, որ նրանք ցանկանում էին միջամտել մարդկանց գործերին բարի նպատակով, բայց մշտապէս կորցրել էին այդ հնարաւորութիւնը։ Արդեօք այդ էակները կորա՞ն մշուշում, թէ՞ մշուշը պատեց նրանց,— Սկռուջը չէր կարող ասել։ Բայց նրանց հոգեղէն երգերն էլ չքացան իրանց հետ միասին, և գիշերը դարձաւ նոյնը, ինչ որ էր նրա տուն մտնելիս։

Սկռուջը պատուհանը փակեց և սկսեց քննել դուռը, որի միջով ներս էր մտել Ուրուականը։ Փականքի բանալին երկու անգամ էր շուռ տուած, որ իր արածն էր, սողնակը նոյնպէս անշարժ էր մնացել։ Նա աշխատեց ասել «դատարկ բան», բայց հէնց առաջին վանկի վրայ դէմ ընկաւ և կրած յուզմունքից, թէ ցերեկուայ յոգնածութիւնից, թէ անտեսանելի աշխարհը գցած իր մի թեթև հայեացքից, թէ ուրուական՝ի տաղտկալի խօսակցութիւնից, թէ ժամանակի ուշ լինելուցը՝ հանգստանալու անդիմադրելի կարիք զգալով, ուղղակի առանց շորերը հանելու պառկեց և խկոյն քնեց։

---

# ՉԱՐԼԶ ԴԻԿԵՆԶԻ

# ԾՆՆԴԵԱՆ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐԻՑ *)

*Թարգմանեց ընագրից Մխիթար Տէր-Անդրէասեանց*

---

*Գլուխ Բ.*

## ԵՐԵՔ ՈԳԻՆԵՐԻՑ ԱՌԱՋԻՆԸ

Երբ որ Սկռուջը արթնացաւ, այնքան մութն էր, որ մահճից նայելով, թափանցիկ պատուհանը հազիւ էր կարողանում ջոկել սենեակի անթափանցիկ պատերից։

Նա աշխատում էր իր սուր աչքերով թափանցել մութը, երբ մեր ձակայ եկեղեցու զանգը չորս քառորդ խփեց։ Նա ականջները սրեց, հաշուելու թէ որ ժամն է։

Մեծ էր նրա զարմանքը, երբ զանգի ծանր հարուածների ձայնը վեցից եօթի անցաւ, եօթից—ութի և այնպէս շարունակ—մինչև տասներկուսը և ապա միայն դադարեց։ Տասներկո՞ւ։ Երկուսից անց էր, երբոր նա պառկեց։ Ժամացոյցը սխալ է լինելու։ Երևի սառցի կաոր է ընկել մէջը։ Տասներկո՞ւ։

Նա հուպ տուեց իր ծոցի ժամացոյցի զանգահարութեան զսպանակը, այդ վերին աստիճանի սխալ ժամացոյցի ցուցմունքն ուղղելու նպատակով։ Սա էլ արագութեամբ տասներկուսը խփեց ու դադարեց։

—«Բա՜, անկարելի է», ասաց Սկռուջը, «որ ես մի ամբողջ օր և յաջորդ գիշերուայ կէսը քնով լինեմ անցած։ Անկարելի է, որ արեգակին մի բան լինի պատահած և այժմ ցերեկուայ տասներկուսը լինի»։

Յուզուած՝ նա վեր թռաւ, խարխափելով մօտեցաւ պա-

---

*) Տես «Մուրճ» № 10

տուհանին։ Խալաթի թևքով սրբեց ապակին, որ կարողանայ մի որևէ բան ջոկել, սակայն շատ քիչ բան էր նրա տեսածը։ Նա հազիւ կարողացաւ ջոկել, որ դուրսը դեռ շատ մռայլ ու ցուրտ էր, չէր լսւում դէսուդէն վազվզող մարդկանց աղմուկը, որ անպայման պիտի լսուէր, եթէ լոյսը բացուած լինէր և տարածուած աշխարհքում։ Այդ մի մեծ մխիթարութիւն էր, որովհետև, այլապէս, եթէ հաշիւ պահելու համար օր ու գիշեր չէին լինէր, էլ ինչ արժէք կ'ունենային «Սոյն առաջին փոխանակագրիս ստանալուց երեք օր յետոյ վճարեցէք պ. Էբենեզար Սկռուջին, կամ ում որ նա հրամայի» այլն մակագրութեամբ թղթերը, եթէ ոչ Միացեալ-Նահանգների արժեթղթերի *) նման մի անպէտք բանի գին։

Սկռուջը կրկին պառկեց ու սկսեց մտածել, բայց անհետևանք։ Քանի շատ էր մտածում, այնքան աւելի էին խառնւում նրա մտքերը. քանի նա աշխատում էր չմտածել—այնքան աւելի մտքի մէջ էր ընկնում։ Մառլէյի Ուրուականը արդէն չափազանց տարել էր նրա գանձն։ Ամեն անգամ, երբ նա խելահաս դատողութիւնով իր մէջ վճռում էր, թէ այդ բոլորը երազ է,—կրկին նրա միտքը, բաց ընկած ուժեղ զսպանակի նման, յետ էր թռչում և կրկին միտքն էր պաշարում նրան. «Երազ էր արդեօք, թէ ոչ»։

Այսպէս Սկռուջը մնաց պառկած, մինչև որ ժամացոյցի զանգը երեք-քառորդ էլ խփեց։ Նա յանկարծ յիշեց, որ Ուրուականը նրան նախազգուշացրել էր, սպասել մի նոր այցելուի ուղիղ ժամը մէկին։ Նա վճռեց պառկած արթուն մնալ մինչև ժամի լրանալը։ Եւ որովհետև քնելը նրա համար նոյնքան անհնար էր, որքան և երկինք հաւբառնալը՝ ճարահատեալ այդ վճիռն ընդունեց։

Այդ քառորդ ժամը այնքան երկարեց, որ նրան երբեմն թւում էր, թէ, երևի, անզգալի կերպով քնով է անցել և չի լսել ժամացոյցի զանգի ձայնը։ Վերջապէս նրա սրած ականջներին հասաւ. «Դինգ-դոնգ»։

—«Մի քառորդ», ասաց Սկռուջը հաշուելով։

—«Դինգ-դոնգ»։

—«Կէս», ասաց Սկռուջը։

—«Դինգ-դոնգ»։

—Երեք քառորդ», ասաց Սկռուջը։

*) Դիկենզի ժամանակ Մ.-Նահանգների արժեթղթերը շատ ընկել էին, և ինքը, հուշակաւոր հեղինակը, նրանցում մեծ փնաս էր քաշել։

Ծ. Թ.



—«Դինգ-դոնգ»։

—«Ահա և ժամի մէկը», ասաց Սկռուջը յաղթական շեշտով, «և ոչինչ էլ չկայ»։

Դեռ ժամերի մեծ զանգը չէր խփել, որ Սկռուջը այս ասաց, ապա այդ զանգն էլ խփեց իր խուլ, խեղդուած և մելամաղձոտ «մէկը»։ Իսկոյն սենեակը լուսաւորուեց, և նրա մահճակալի վարագոյրները մի կողմ քաշուեցան։

Մի ձեռք յետ տարաւ նրա մահճակալի վարագոյրները, ասում եմ։ Ո՛չ ոտների կողմի վարագոյրը և ոչ էլ քամակինը, այլ դիմացինը։ Մահճակալի վարագոյրը քաշուեց, և Սկռուջը գլուխը բարձրացրեց։

Դէմուդէմ կանգնած էր այն չնաշխարհիկ այցելուն, որ յետ էր քաշել վարագոյրը, այն աստիճան մօտ էր կանգնած, որքան ես ձեզնից։ Իսկ ես հօ բոլորովին ձեր կողքին եմ այժմ... հոգեպէս։

Դա մի օտարոտի բան էր—երեխայի նմանող. ոչ էլ այնքան երեխայի—որքան մի ծերունու, շրջապատող անընդունակ մթնոլորտի շնորհիւ, կարծես, դիտողից հեռացած ու երեխայի չափ փոքրացած։ Նրա ծոծրակի ու մէջքի վրայ թափուած մազերը ճերմակ էին, կարճես ծերութիւնից, բայց երեսը, որ ոչ մի կնճիռ չունէր, պատած էր մի ամենաքնքոյշ խաւով։ Բազուկները չափազանց երկայն ու մկնեղ էին։ Նոյնպէս և ձեռները, կարծես մի անսովոր ոյժ լինէր նրանց մէջը։ Նրա վերին աստիճանի նուրբ ոտները, մարմնի վերի անդամների նման տկլոր էին։ Հագին մի մաքրափայլ սպիտակ պատմուճան էր. մէջքին մի գեղափայլ գօտի էր կապած։ Ձեռքին բռնած ունէր դալար ոսնածառի մի կանաչ ճիւղ և՝ ձմեռուայ այդ խորհրդաւոր նշանին իբրև մի եղակի հակադրութիւն՝ նրա զգեստը զարդարուած էր ամարային ծաղիկներով։ Բայց ամենաօտարոտին այն էր, որ նրա գագաթից բղխում էր լուսի մի փայլուն ու պարզ ճառագայթ, տեսանելի անելով այդ բոլորը։ Այդ էր, անկասկած, պատճառը, որ նա՝ տրամութեան բոպէներին մի մեծ շիջուցիչ *) էր գործ ածում գդակի փոխարէն, որ այժմս բռնած ունէր ձեռքին։ Միքիչ էլ զննելով նրան իր անթարթ հայեացքով, Սկռուջը նկատեց, որ այդ չէր նոյնիսկ նրա ամենաօտարոտի յատկութիւնը. ինչպէս որ նրա գօտու՝ մէկ մի մասն էր վառուում ու փայլփլում, մէկ մի ուրիշ մասը, և այն մասը, որ մի բոպէ լուսաւոր էր,—յետոյ խաւարում էր, այնպէս էլ այցելուի դէմքի գծերն էին փո-

*) ձրագ հանգցնելու գործիք (ձագառաձև)։

փոխում. երբեմն—մի ձեռանի, երբեմն մի ոտանի, երբեմն—քսան ոտանի, երբեմն—զոյգ ոտանի, բայց անգլուխ, երբեմն մի գլուխ առանց մարմնի։ Եւ այս անհերևոյթացող մասերի գործագրութիւնից ոչ մի հետք չէր մնում թանձր խաւարում, որի մէջ հալւում—կորչում էին։ Եւ, զարմանք բան, կրկին նոյն տեսիլքն էր դառնում իր նախկին որոշ ու պարզ դէմքով։

—«Դու ես, տէր իմ, այն Ոգին, որի գալուստը նախագուշակել են ինձ», հարցրեց Սկռուջը։

—«Ես եմ»։

Ձայնը փափուկ ու քնքոյշ էր։ Նա հնչում էր մի առանձին մեղմութեամբ, կարծես թէ, կողքին չլինէր, այլ հեռաւորութիւնից լինէր լսւում։

—«Ո՞վ և ի՞նչ ես դու», հարցրեց Սկռուջը։

—«Անցած Ծննդեան Ոգին եմ ես»։

—«Վաղուց անցած», հարցրեց Սկռուջը, զննելով նրա գաճաճանման արտաքինը։

—«Ո՛չ, քո անցած»։

Դուցէ, եթէ մէկը հարցնէր Սկռուջին, նա չկարողանար ասել թէ ինչու, բայց մի առանձին ցանկութիւն ունեցաւ, որ Ոգին գլխաբաց չմնայ. այդ պատճառով խնդրեց նրան, ծածկել գլուխը։

—«Ինչու», բացագանչեց Ոգին. «ինչու ես ուզում այդքան շուտ, աշխարհային ձեռներով, հանգցնել այն լոյսը, որ տարածում եմ ես։ Բաւական չի, որ դու այն անձանց մէկն ես, որոնց կիրքն է ստեղծել այս գդակը և երկար տարիների ընթացքում ստիպել է ինձ խրել մինչև յօնքներս։

Սկռուջը յարգանքով յայտնեց, որ երբէք ցանկութիւն չի ունեցել վիրաւորելու և չի էլ յիշում, որ երբևիցէ իր կեանքում Ոգու գլուխը գդակ լինի դրած։ Ապա՝ սիրտ առնելով, հարցրեց, թէ ինչ գործով է շնորհ բերել Ոգին իրա մօտ։

—«Բարեբախտութիւնդ է ինձ այստեղ բերողը», ասաց Ոգին։

Սկռուջը շնորհակալութիւն արաւ, նրա մտքովն անցաւ, որ աւելի լաւ կը լինէր, եթէ գիշերուայ կիսին չխանգարէին իր քունը։ Երևի Ոգին լսել էր նրա մտքով անցածը, որովհետև անմիջապէս ասաց. «Ուրեմն քո ուղղուելդ է գալուս պատճառը. «զգուշացէր»։

Այս ասելով, նա մեկնեց իր ուժեղ ձեռքը և քնքշաբար բռնեց նրանը։

—«Վեր կաց ու եկ հետս»։

Ապարդիւն կը լինէր, եթէ Սկռուջը սկսէր պատճառաբանել, թէ ոտով ման գալու ոչ յարմար եղանակ է և ոչ յարմար ժամ. թէ անկողինը տաք է, իսկ դուրսը՝ ջերմաչափը սառուցման կէտից շատ ցած, թէ նա շատ թեթև է հագնուած, ոտներին հողաթափ, հագին խալաթ, գլխին գիշերուայ գդակ, թէ, վերջապէս հիւանդ է հարբուխով։ Ոգու ձեռքը՝ թէպէտ կանացի ձեռքի նման քնքոյշ՝ բայց անդիմադրելի էր։ Նա վերկացաւ. բայց՝ նկատելով, որ Ոգին դէպի պատուհանն է գնում՝ բռնեց նրա պատմուճանի փէշը և սկսեց աղաչել։

—«Մահկանացու՞ եմ», աշխատում էր համոզել Սկռուջը, «վայր կ'ընկնեմ ես այստեղից»։

—«Թոյլ տուր միայն, որ շոշափեմ այստեղդ», ասաց Ոգին, ձեռքը նրա սրտին դնելով, «և դու շատ ուրիշ դէպքերում էլ մշտական նեցուկ կ'ունենաս»։

Հէնց որ արտասանեց այդ խօսքերը, նրանք անցան պատի միջից և դուրս եկան մի բաց գիւղական ճանապարհ, որ անցնում էր դաշտի միջով։ Քաղաքը բոլորովին չքացել էր. նրա հետքն անգամ չկար։ Նրա հետ մութն ու մառախուղն էլ էին չքացել, և մի պարզ, ցուրտ, ձմեռնային օր էր, գետինը—ձիւնապատ։

—«Աստուած իմ», ասաց Սկռուջը, աչքերը վեր բարձրացնելով և ձեռները միացնելով. «սա իմ ծնուած տեղս է։ Մանկութիւնս այստեղ է անցել»։

Ոգին իր հեզ հայեացքն ուղղեց նրա կողմը, որ մինչև այժմ դեռ զգում էր Ոգու ձեռքի հետքը, թէպէտ բոպէական ու թեթև էր նրա քնքոյշ ձեռքի հպումը։ Նա զգում էր, որ օդը լիքն է հաղարումի բոյրերով, որոնցից ամենամէկը յիշեցնում էր նրան հաղարումի մտքեր, յոյսեր, ուրախութիւններ և վաղուց անցած, մոռացութեան մատնուած հոգսեր։

—«Շրթունքդ դողում է», ասաց Ոգին։ «Այդ ի՞նչ է երեսիդ վրայ»։

Սկռուջը՝ արտասուոր, խեղդուող ձայնով փնթփնթաց, թէ, երևի, պղուկ է և խնդրեց, որ Ոգին առաջնորդի իրան, ուր որ ուզում է։

—«Ճանաչո՞ւմ ես այս ճանապարհը», հարցրեց Ոգին։

—«Ճանաչո՞ւմ», գոչեց տաքանալով Սկռուջը։ «Աչքերս կապած կարող եմ ման գալ այդ ճանապարհով»։

Զարմանալի՜ է, որ երկար տարիներ մոռացութեան էիր մատնել», նկատեց Ոգին։ «Շարունակենք»։

—Ճանապարհին Սկռուջը ճանաչում էր ամենամի դուռ ամենամի սիւն, ամենամի ծառ, մինչև որ հեռում երևաց վաճառաշահ քաղաք, իր կամուրջով, եկեղեցով և օձապտ

գետով։ Միքանի բրդոտ «պոնի» *) այս կողմն էին վազում մէջքներին մի-մի երեխայ, որոնք բարձրաձայն խօսակցում էին գիւղական սայլերով եկող իրանց ընկերների հետ։ Երեխաները բոլորն էլ ուրախ տրամադրութեան մէջ էին և բղաւելով՝ կանչում էին իրար. լայնարձակ դաշտերը թնդում էին ուրախ երաժշտութեան ձայներից և թարմ օդը ժպտում էր նրանց լսելով։

—«Բայց այս բոլորը երբեմն գոյութիւն ունեցած բանների ստուերներն են», ասաց Ոգին։ «Նրանք չեն զգում մեր ներկայութիւնը»։

Ուրախ զբօսնողները մօտեցան։ Սկռուջը ամենամէկին ճանաչեց և անունը տուեց։ Ինչո՞ւ էր նա այդչափ ուրախանում, նրանց տեսնելիս։ Ինչո՞ւ էին փայլփլում նրա սառած աչքերը, ինչո՞ւ էր թրպրտում նրա սիրտը, երբ որ անցնում էին նրանք։ Ինչո՞ւ էր նրա սիրտը լցւում ուրախութիւնով, նրանց փոխադարձ շնորհաւորութիւնները լսելիս, երբ որ նրանք, ամենամէկը իր տունը գալիս, անջատման ժամին, իրար «Ուրախ Ծնունդ» էին մաղթում։ Սկռուջի համար ի՞նչ նշանակութիւն ունէր Ուրախ Ծնունդը։ Թող կորչի Ուրախ Ծնունդը։ Ի՞նչ լաւութիւն էր տեսել նա Ծնունդից։

—«Ուսումնարանը դատարկ չի», ասաց Ոգին։ «Ընկերների անփութութեան մատնուած միայնակ մանուկ մնացել է դեռ այստեղ»։

Սկռուջն ասաց, թէ գիտէ և սկսեց հեկեկալ։

Գլխաւոր փողոցից դուրս գալով, նրանք՝ Սկռուջին լաւ ծանօթ նեղ անցքով՝ շուտով մօտեցան մի մռայլ, կարմիր աղիւսներից շինած տան, որի տանիքի հողմնացոյցաւոր գմբէթի միջին մի զանգ էր կախած։ Մի մեծ, քայքայուած տուն էր այդ, որովհետև միջի ընդարձակ շինութիւնները, ինչպէս երեւում էր, անբնակ էին, պատերը խոնաւ ու մամռոտ, պատուհանները կոտրտած ու դռները խարխուլ։ Գոմերում աքաղաղներն էին կռթկռթում ու փքւում, իսկ կառքերի սրահում ու ծածկոյթների տակ խոտ էր բուսել։ Տան ներսը աւելի լաւ չէր պահպանուած նախկին կարգն ու սարքը. մտնելով մռայլ սրահը և բազմաթիւ սենեակների բաց դռներով հայեացք գցելով՝ տեսան որ այդ սենեակները աղբատ կահաւորուած, ցուրտ ու ընդարձակ են։ Խոնաւութեան հոտ էր փչում և սառն ամայութիւն էր զգացւում այդտեղ, ուր մարդու յիշողութեան

*) Անգլիական փոքրիկ բրդոտ ձի։



մէջ յղացնում էր մտքեր՝ յաճախ ճրագի լուսով զարթնելու ու շատ սակաւ ուտելու մասին։

Ոգին ու Սկռուջը անցան սրահով դէպի տան քամակի դուռը, որ նրանց առաջ մի երկար, դատարկ ու մռայլ սենեակ բացեց, որի միջի հասարակ եղնեայ նստարանների ու գրասեղանների շարքերը կրկնապատկում էին նրա դատարկութիւնը։ Այդ նստարաններից մէկի վրայ նստած, կրակի աղօտ լուսով, մի միայնակ երեխայ զբաղուած էր ընթերցանութիւնով։ Սկռուջը նստեց մի նստարանի վրայ և սկսեց լալ, տեսնելով իր խեղճ, մոռացուած անձը, ինչպէս որ էր նա երբեմն։ Տան խորքերից լսուող խուլ արձագանգը, տախտակամածի յետևից մկների ծվծվոցն ու աղմուկը, բակի կէս-սառած ջրանցքի ծորակի կաթկթոցը, մռայլ սօսու անտերև ճիւղերի միջից լսուող հառաչը, դատարկ ամբարի դռների ճռճռոցը, կրակի ճռթճռթոցը, բոլորն էլ, Սկռուջի սրտի վրայ մեղմացնող ազդեցութիւն էին անում և նրա արտասուքին աղատ ելք տալիս։ Ոգին շօշափեց նրա ձեռքը և մատնացոյց արաւ մատաղ Սկռուջի վրայ, որ իր ընթերցանութեամբ էր պարապած։ Յանկարծ, օտար հագուստով մի մարդ երևաց պատուհանի միւս կողմից, զարմանալի պարզ ու որոշ տեսանելի, գօտկի մէջ խրած ունէր մի կացին, իսկ ձեռքին բռնած ունէր փայտով բռնած էշի սանձը։—«Բա՜, սա Ալի-Բաբան է», գոչեց ոգևորուած Սկռուջը։ «Սա սիրելի, ազնիւ, ծեր Ալի-Բաբան է։ Այո՛, այո՛, ես ճանաչեցի։ Մի անգամ, երբ այն միայնակ մանուկը Ծննդեան տօնին մենակ այստեղ էր, նա եկաւ, առաջին անգամն էլ իսկևիսկ հէնց այդպէս։ Խեղճ տղայ։ Իսկ Վալենտինը», ասաց Սկռուջը. «նրա կատաղի եղբայր Օռսոնը. ահա գալիս են։ Իսկ ի՞նչ էր նրա անունը, որին քնած՝ միայն վարտիքը հագին՝ թողին Դամասկոսի դռանը, չէ՞ս տեսնում նրան։ Իսկ Սուլթանի ծառան, որին Ոգիները շուռ տուին գլխիվար. ահա նա կանգնած է գլխի վրայ։ Տեղն է։ Ես ուրախ եմ։ Ի՞նչ բան ունէր «իշխանուհու հետ ամուսնանալու *)»։

Հաւատացնում եմ, որ Սկռուջի գործակից բարեկամները «Սիտի»-ում չափազանց կը զարմանային, եթէ լսէին, թէ ի՞նչպէս է նա՝ իր ընութեան ամբողջ լրջութիւնով՝ մի այսպիսի բանի մասին խօսում այդչափ անսովոր ձայնով, որ լացի ու

*) Սկռուջը իր մանկութեան մէջ կարդացածներն է տեսնում «Հազար ու մի գիշեր»-ից, «Վալենտին և Օռսոն» հեքիաթից, ապա Դրֆօի Ռոբինսընից։ Ծ. Թ.

ծիծաղի մի խառնուրդ էր, և տեսնէին նրա ոգևորուած ու յուզուած դէմքը։

«Ահա և թութակը», գոչեց Սկռուջը։ «Մարմինը կանաչ, իսկ պոչը դեղին. գլխին՝ «լատուկի» նման մի բան բուսած։ Ահա նա։ «Խեղճ Ռոբինսըն Կռուսո» էր կոչում նա, երբ վերջինս տուն էր վերադառնում կղզու շուրջը նաւակով պտտելուց յետոյ։ «Խեղճ Ռոբինսըն Կռուսո, ո՞ւր էիր դու, Ռոբինսըն Կռուսո»։ Մարդը կարծեց, թէ երազումն է տեսնում, բայց երազ չէր։ Գիտե՞ս հմ, թութակն էր այդ։ Ահա Ուրբաթը, որ ուժասպառ վազում է դէպի ծովի փոքրիկ խորշը։ Հէյ, ագա՜, էյ»։

Ապա, իրա բնութեան համար մի անսովոր արագութեամբ, «խեղճ երեխայ», ասաց նա, խղճալով նախկին փոքրիկ Սկռուջին և կրկին սկսեց լալ։

—«Ափսո՜ս որ...» բարբաջեց Սկռուջը, ձեռը կոխելով գրպանը և թեքով աչքերը չորացներով ու նայելով իր շուրջը. «բայց շատ ուշ է այժմ»։

—«Ինչո՞ւմն է բանը», հարցրեց Ոգին։

—«Ոչինչ», ասաց Սկռուջը, «ոչինչ։ Անցեալ գիշեր մի «աւեսիս» երգող տղայ էր եկել իմ դուռս։ Ափսոսում եմ, որ նրան մի բան չտուի, ուրիշ ոչինչ»։

Ոգին ժպտաց մտքամոլոր և՝ ձեռքը շարժելով՝ ասաց. «Միւս Ծննդեան տօնին կը տեսնենք»։

Այդ խօսքերի վրայ նախկին, փոքրիկ Սկռուջը սկսեց մեծանալ, սենեակը մի քիչ աւելի մթնեց ու աւելի կեղտոտուեց։ Տախտակները կծկուեցան, պատուհանները ճաքտեցան, առաստաղից թափուեց ծեփի կտորտանքը, տակի փայտեայ ցանցը մերկացնելով։ Բայց թէ ինչպէս կատարուեց այդ բոլորը, դրա մասին Սկռուջն էլ ձեղնից աւելի բան չգիտէր։ Նա գիտէր միայն, որ ամեն ինչ կատարուել էր իսկևիսկ այդպէս. որ նա կրկին մենակ էր մնացել, երբ մնացեալ բոլոր երեխայքը տուն էին գնացել ուրախ տօն անելու։

Այժմ նա չէր կարդում, այլ յուսահատ՝ այսուայն կողմն էր գնում։ Սկռուջը նայեց Ոգուն և գլուխը տխուր թափ տալով՝ անձկութիւնով աչքերն ուղղեց դէպի դուռը։

Դուռը բացուեց և մի մանկահասակ աղջիկ՝ որ տղայիցն էլ պտիկ էր, վազէվազ ներս մտաւ, ձեռները զցեց տղայի վզովն ու պաչպչելով, դիմեց նրան—«իմ սիրելի, սիրելի եղբայրս»։

—«Եկել եմ, որ քեզ տուն տանեմ, սիրելի եղբայրս», ասաց երեխան, ծափ տալով իր փոքրիկ ձեռներովն ու ծիծաղելով։



—«Տանեմ տո՞ւն, տո՞ւն, տո՞ւն»։

—«Տո՞ւն, փոքրիկ Ֆէն», պատասխանեց տղան։

—«Այո՛», ասաց երեխան ուրախ-ուրախ։ Տո՞ւն... առանց հանաքի։ Ընդմի՞շտ տուն։ Հայրիկն այնքան բարի է դարձել իր սովորութեան հակառակ, որ տունը կատարեալ դրախտ է։ Մի անմոռանալի գիշեր անկողին մտնելուցս առաջ այնքան քաղցրութեամբ սկսեց խօսալ հետս, որ ես, առանց երկիւղի մի անգամ էլ խնդրեցի, որ քեզ թոյլ տայ գալ տուն։ Նա համաձայնուեց և ուղարկեց ինձ կառքով, որ տանեմ քեզ։ Կատարեալ տղամարդ ես դառնում դու», ասաց երեխան, զարմացած նայելով. «և երբէք այլևս չես վերադառնալու այստեղ. նախ՝ ամբողջ Ծննդեան տօներին մենք միասին ենք լինելու և ամենաուրախ տօն ենք անելու»։

—«Դու կատարեալ կինարմատ ես դարձել, փոքրիկ «Ֆէն», բացագանչեց տղան։

Աղջիկը ձեռներն իրար խփեց, ծիծաղեց և ձեռները մեկնեց դէպի եղբօր գլուխը, բայց այնքան պտիկ էր, որ ձեռքը տեղ չհասաւ, կրկին ծիծաղեց և մատների ծայրերի վրայ բարձրացաւ, որ գրկի նրան։ Ապա սկսեց մանկական եռանդով ձգձգել նրան դէպի դուռը և եղբայրը, հակառակելու ցանկութիւն չունենալով, հետևեց նրան։

Մի սարսափելի ձայն սրահից կանչեց.«Այստեղ բերէք պ. Սկռուջի մնդուկը», և սրահում երևաց ինքը, ուսումնարանի տէրը, որ կատաղի ներողամտութեամբ նայեց փոքրիկ Սկռուջին և նրա ձեռքը թափ տալով՝ սարսափելի ժատանջութեան մէջ դցեց տղային։ Ապա առաջնորդեց նրան իր քրոջ հետ մի ցուրտ փոս, որ նրա հիւրասենեակն էր և որի միջի սառցապատ քարէղները, երկրագնդերն ու երկնագնդերը սառսուռ էին ազդում տեսնողին։ Այստեղ նա մի շիշ օտարոտի թեթև գինի և մի կտոր զարմանալի ծանր կարկանդակ հանեց ու բաժանեց երեխաներին. միևնոյն ժամանակ լղար ծառային հրամայեց կառապանին «մի բան» խմացնել, բայց վերջինս պատասխանեց, թէ շնորհակալ է պարոնից, բայց եթէ նոյն խմիչքն է, որի համը առաջներումը տեսած կայ,—չխմելն աւելի բարուրք է համարում։ Որովհետև այդ ժամանակ պ. Սկռուջի մնդուկը արդէն կապած էր կառքի վրայ, քոյր ու եղբայր մեծ հաճութեամբ հրաժեշտի ողջոյն տալով ուսումնարանի տիրոջ, մտան կառքը և ուրախ-ուրախ սլացան ծառազարդ ճանապարհով, մշտադալար մուգ տերևների վրայից ձեան ու եղեամի ամպեր բարձրացնելով։

—«Միշտ էլ այսպէս քնքոյշ արարած էր այդ փոքր աղ-

ջիկը, որ դողում էր ամենամի թեթև քամուց», ասաց Ոգին։ «Բայց բարի սիրտ ունէր»։

—«Այո, բարի էր», գոչեց Սկռուջը։ Արդարացի է ասածդ, Ոգի, Աստուած օրհնի նրան»։

—«Ամուսանացաւ, կարծեմ», ասաց Ոգին, «և, եթէ չեմ սխալւում, երեխաներ էլ թողեց»։

—«Մէկը միայն», պատասխանեց Սկռուջը։

—«Ճշմարիտ է», ասաց Ոգին, «մի քրոջորդի ունեմ»։

Սկռուջը շփոթուեց և կարճ «այո» պատասխանեց։

Թէպէտ նրանք հէնց նոյն բոպէին էին դուրս եկել ուսումնարանից, բայց այժմ արդէն մի քաղաքային բանուկ փողոցում էին, ուր անցուդարձ էին անում անմարմին անցորդներ, անհնարաբանական սայլեր ու կառքեր, որոնցից ամենամէկը կռուով իրա համար ճանապարհ էր բաց անում, իսկական քաղաքային աղմուկ ու ժխոր բարձրացնելով։ Խանութների արդուզարդից պարզ էր, որ այստեղ դեռ շարունակւում է Ծնունդեան տօնը, բայց արդէն երեկոյ էր, և փողոցները լուսաւորուած էին։ Ոգին կանգ առաւ մի խանութի դռան և Սկռուջին հարցրեց, թէ ճանաչում է, արդեօք, նա այդ խանութը։

—«Ճանաչում, ասաց Սկռուջը։ «Այստեղ եմ անցրել աշակերտութիւնս»։

Ներս մտան։ Մի ծեր պարոն նստած էր այն աստիճանի բարձր գրասեղանի առաջ, որ՝ եթէ երկու մատ էր հասակով բարձր լինէր՝ գլուխը կը հասնէր առաստաղին։ Տեսնելով նրան, Սկռուջը ոգևորուած բացագանչեց.

—«Բա, սիրելի Ֆեզըվիգ. օրհնեալ հոգի. կրկին Ֆեզըվիգն է... կենդանացած»։

Ծեր Ֆեզըվիգը վայր դրեց գրիչը, նայեց ժամացոյցին, որի սլաքը եօթի վրայ էր։ Ձեռները սրբեց, դրստեց հագի լայն ժիլետը, սկսեց ամբողջ մարմնով ծիծաղել և իր խղալի, հաստ, ուրախ ձայնով գոչեց.

—«Հէյ, այստեղ եկէք, Էբենազար, Դիկ»։ Նախկին Սկռուջը, այժմ մեծ տղայ դարձած, իր ընկերոջ հետ փութով ներս մտաւ։

—«Սա հո Դիկ Ուիլկինսն է», ասաց Սկռուջը Ոգուն։ «Տէր-Աստուած, այո, նա է, որ այնքան սիրում էր ինձ։ Խեղճ Դիկ, սիրելիդ իմ Դիկ»։

—«Դէ, տղերքս», ասաց Ֆեզըվիգը։ «Հերիք բանեցինք։ Այս երեկոյ թաթախման երեկոյ է, Դիկ, Ծնունդ է, Էբենազար։ Դէ, շուտ», գոչեց ծեր Ֆեզըվիգը, ձեռքերը իրար խփելով. «շուտ արէք, փեղկերը փակեցէք»։



Չէք կարող երևակայել, թէ պատանիները ինչ սրտով կպան գործին։ Մէկ, երկու—և նրանք արդէն փեղկերը ձեռնարին փողոցումն էին, երեք— և տեղը դրին, չորս, հինգ, վեց—պնդացրին, և լաւ նժոյգների նման ծանր շունչ քաշելով, յետ եկան այնքան շուտ, որ մինչև տասներկուսը չէիք կարող համրել։

—«Դէ», գոչեց Ֆեզըվիգը զարմանալի աշխուժով իր բարձր աթոռից վար թռչելով։ «Շուտ, հաւաքեցէք ամէն ինչ և տեղ բացէք այստեղ։ Դէ, Դիկ, եալլահ, Էբենազար։

Հաւաքեցէ՛ք։ Աշխարհիս երեսին բան չկար որ նրանք չկամենային, կամ չկարենային անել, երբ ծեր Ֆեզըվիգի աչքը նրանց վրան էր։ Մի բոպէում - պրծան։ Ամէն կահ-կարասիք դուրս տարուեց, կարծես այլևս գործածուելու չլինէր։ Յատակն աւելուեց ու լուացուեց, լապտերները վառուեցան, վառելիք աւելացրուեց կրակին և խանութն այնպէս մաքրուեց, տաքացաւ, չորացաւ ու լուսաւորուեց, որ մի ձմեռ գիշեր մարդուս ուզածն էլ հէնց այդ կը լինէր։

Եկաւ ջութակահարը՝ նոտերի գիրքը ձեռքին, բարձրացաւ, նստեց բարձր աթոռի վրայ սեղանի առաջ և սկսեց նուագել, կարծես յիսուն՝ փորացաւով բռնուած մարդկանց զողոց հանելով։ Ներս մտաւ տիկին Ֆեզըվիգը—մի յաղթանդամ էակ։ Ներս մտան երեք օրիորդ Ֆեզըվիգները—ուրախ ու սիրասուն։ Սրանց հետևեցին վեց երիտասարդ, որոնց սրտերը զարնուած էին։ Ներս մտան նրանց մօտ ծառայող բոլոր երիտասարդներն ու կանայք։ Ներս եկաւ աղախինը իր հացթուխ հօրեղբօր որդու հետ։ Ներս եկաւ խոհարարուհին իր եղբօր սրտակից բարեկամ կաթնավաճառի հետ։ Ներս մտաւ դիմացի խանութի տղան, որին երևի տերը շատ էլ չէր կշտացրել. սա աշխատում էր թագ կենալ հարևան տնից եկած աղջկայ քամակը, որի ականջները, ինչպէս երևում էր, քեօքել էր իր տիրուհին։ Սրանք բոլորն էլ մէկը միւսի յետևից ներս մտան, որը քաշուելով, որը համարձակ, որը շնորհքով, որն անշնորհք, ոմանք իրար հրելով, ոմանք իրար քաշելով, այսպէս թէ այնպէս, սրանք բոլորն էլ ներս մտան։ Բոլոր քսան զոյգն էլ միասին պար բռնեցին։ Պարի վերջում ծեր Ֆեզըվիգը ձեռները իրար խփելով «բաւական է» գոչեց, և ջութակահարը իր շառագունուած երեսը խոթեց գարեջրի գաւաթի մէջ, որ յատկապէս նրա համար էր դրած։ Բայց՝ հանգիստն արհամարհելով՝ նա կրկին տեղը բռնեց և կրկին սկսեց նուագել, թէպէտ այլևս պարող չկար, կարծես յոգնած ջութակահարին տախտակի վրայ դրած տուն էին տարել, իսկ սա կատարեալ նոր մարդ էր,

որ աշխատում էր, ինչ որ էլ լինի, գերազանցել նախորդին։

Կրկին պարեցին, ֆանտ խաղացին ու կրկին պարեցին. ապա մէջ եկաւ քաղցր գաթան, գլինտվէյնը *), մի-մի ահագին կտոր տապակած ու խաշած հորթի սառը միս, մսալից արգանակներ և ուզածիդ չափ գարեջուր։ Բայցը քէֆը դեռ սրանից յետոյ էր, երբ ջութակահարը (որ մի շատ խորամանկ անիծածն էր, այն տեսակ մարդկանցից, որ իրա գործը ինձնից կամ ձեզնից սովորելու կարիք չունի. երբ այդ ջութակահարն ասում եմ) սկսեց իր շնորհքը ցոյց տալ։ Այն ժամանակ ծեր Ֆեզըվիգը վերկացաւ ու տիկին Ֆեզըվիգի հետ պարի գընալուն անցաւ։ Հեշտ բան չիմանաք քսաներկու-քսաներեք զոյգ կառավարելը, մանաւանդ երբ որ բոլորն էլ այնպիսի խալխ են որ հանաք չեն սիրում. բոլորն էլ պարել են ուզում և ոչ թէ հէնց էնպէս դէսուդէն գնալ-գալ։ Քսաներկու-քսաներեք զոյգ էին պարողները, բայց եթէ այդքանի կրկնապատիկն էլ լինէր—ահ, ինչ եմ ասում, չորեքտակն էլ,—ծեր Ֆեզըվիգն ու տիկին Ֆեզըվիգը չէին դժուարանալ։ Իսկ տիկինը հօ իր աժուանու արժանի ընկերն էր բառիս ամենաընդարձակ նշանակութեամբ։ Եթէ ասածս մեծ գովասանք չհամարէք, աւելի մեծ ասացէք՝ այն գործածեմ։ Ծեր Ֆեզըվիգի ոտներից կատարեալ կրակ էր թափւում։ Այդ ոտներն էին, որ պարի ամենի մասում մի զոյգ լուսնի նման փայլփլում էին։ Երբէք չէիք կարող դուշակել, թէ ինչ է լինելու մի րոպէից յետոյ։ Եւ երբ ծեր Ֆեզըվիգն ու տիկ. Ֆեզըվիգը պարը վերջացրին, յետ ու առաջը, իրար ձեռք տալը, շնորհակալութիւնը, պատյարը և յետ դարձան իրանց տեղը, Ֆեզըվիգը վերջ տուեց, այնպիսի հարպիկութեամբ վերջ տուեց պարին, ոտները կարծես թափ տուեց և կրկին, առանց օրօրուելու, ոտի կանգնեց։

Երբ ժամացոյցը տասնումէկը զարկեց, ընտանեկան խընջոյքը վերջացաւ։ Գ. և տիկ. Ֆեզըվիգները կանգնեցին դռան այսուայն կողմը և ամեն դուրս գնացողի ձեռքը սեղմելով «Ուրախ Ծնունդ» էին ասում։ Երբ, բացի երկու աշակերտներից, ամենքն էլ քաշուեցին, այդ բարեմաղթութիւնը սրանց էլ արին. վերջիններս վերադարձրին նոյն բարեմաղթութիւնը, ապա ուրախ ձայները լռեցին և տղերքը մնացին մենակ ու անցան խանութի քամակը՝ քնելու իրանց տեղերում։

Այս բոլոր ժամանակը Սկռուջը բոլորովին կորցրել էր գինքը։ Այդ տեսարանը և իր նախկին անձնաւորութիւնը կը-

*) Համեմներով եփած գինի։



լանել էին նրա սիրտն ու հոգին։ Նա հաստատում էր ամենինչ, յիշում էր ամենինչ, զուարճանում էր ամենինչով և յուզում էր մի օտարոտի յուզմունքով։ Երբ նախկին Սկռուջի և Դիկի լուսաւոր երեսները չքացան, յանկարծ նա յիշեց Ոգուն և զգաց, որ նա ուղղակի իրան է նայում. մինչդեռ նրա գագաթից ըղխող լոյսը պլպլում է պայծառօրէն։

—«Մի չնչին բան», ասաց Ոգին, «այդ յիմարների սիրտը լցնում է երախտագիտութեամբ»։

—«Չնչին», արձագանգ տուեց Սկռուջը։ Ոգին նշան արաւ նրան, ականջ դնել երկու աշակերտներին, որ գովաբանում էին Ֆեզըվիգին. և երբ Սկռուջը կատարեց նրա պատուէրը, Ոգին ասաց.

—«Նա ծախսել է միայն մի քանի ֆունտ ձեր ժանտ մետալից. երեք, կամ՝ շատ-շատ չորս ֆունտ *)։ Մի՞թէ արժէ դրա համար այդքան գովել։ Այդպէս չէ՞»։

—«Այդպէս չէ», ասաց Սկռուջը, տաքանալով այդ նկատողութեան վրայ և խօսելով նախկին՝ և ոչ այժմեան Սկռուջի նման։ «Այդպէս չէ, Ոգի։ Նրա ձեռքումն էր մեզ բախտաւորացնել կամ անբախտացնել, մեր ծառայութիւնը թեթեւացնել, կամ դժուարացնել, զուարճալի կամ տաժանելի անել մեր գործը։ Մի խօսքով նրանից էր կախուած ուրախացնել, թէ տրտմացնել մեզ ամենմի րոպէ։ Նրա տուած բախտաւորութիւնը այնքան մեծ է, որ մի ամբողջ հարստութիւն արժէ»։

Նա զգաց Ոգու հայեացքը և լռեց։

—«Ինչու լռեցիր», հարցրեց Ոգին։

—«Մի առանձին բան չկայ», ասաց Սկռուջը։

—«Ես կարծում եմ մի բան կայ», պնդում էր Ոգին։

—«Ո՛չ, ասաց Սկռուջը, ո՛չ։ Սիրտս ուզում է հէնց այժմ մի երկու խօսք ասել գրագրիս։ Ուրիշ ոչինչ»։

Հէնց որ Սկռուջը այս ցանկութիւնը արտայայտեց, նախկին Սկռուջը հանգցրեց լապտերները և Ոգու հետ բաց օդումը մնացին կրկին։

—«Ժամանակս մօտենում է, նկատեց Ոգին։ Շուտ»։

Այս խօսքերը չէին ուղղուած Սկռուջին, կամ մի այլ անձի, բայց անհետևանք չմնացին։ Իսկոյն Սկռուջը կրկին տեսաւ իրան։ Այժմ նա մեծացել էր. իր լաւագոյն հասակումն էր նա։ Նրա դիմագծերը այժմեանի պէս կոշտ ու կոպիտ չէին, բայց արդէն հոգսի ու ագահութեան հետքեր ունէին։ Աչքերի աշխոյժ, ա-

գահ ու անդադրուն փայլն ապացոյց էր, որ կիրքը արժատ էր բռնել նրա սրտում և աճում ու ստուէր է անում։

Նա մենակ չէր. նրա կողքին նստած էր մի սեազգեստ, գեղեցիկ, ժատաղ աղջիկ, որի աչքերում արտասուքը փայլփլում էր «անցեալ Ծննդեան Ոգուց» բղխող լուսով։

—«Դատարկ բան է», ասաց աղջիկը կամացուկ. «բոլորովին դատարկ բան քեզ համար։ Մի ուրիշ կուռք է բռնել իմ տեղս և, եթէ ապագայում նա կարողանայ քեզ ուրախացնել ու մխիթարել իմ փոխարէնս, իսկապէս այլևս տրտմելու պատճառ չպիտի ունենամ»։

—«Ի՞նչ կուռք է տեղդ բռնողը»։

—«Ոսկէ հորթը», պատասխանեց աղջիկը։

—«Ահա աշխարհքիս անկողմնապահութիւնը... Որքան անտերողամիտ են դէպի աղքատութիւնը և ի՜նչ խստութեամբ են դատապարտում նրանց, որոնք ձգտում են հարստանալ...»

—«Շատ ես վախենում աշխարհքի կարծիքից», պատասխանեց օրիորդը քնքշաբար։ «Դու պատրաստ ես ամեն բան զոհել աշխարհքիս ստոր կշտամբանքից խոյս տալու համար։ Իմ աչքիս առաջ քո աղնիւ տենչերդ մէկիկ-մէկիկ չքացան, մինչև որ գլխաւոր կիրքդ—շահասիրութիւնը—կլանեց քեզ։ Այդպէս չէ՞»։

—«Ի՞նչ փոյթ», պատասխանեց Սկռուջը։ «Ի՞նչ փոյթ, եթէ մեծանալով խելօքացել եմ այդչափ։ Դէպի քեզ հո՞ չե՞մ փոխուել»։

Օրիորդը գլուխը թափ տուեց։

—«Փոխուե՞լ եմ»։

—«Վաղուցուայ բան է մեր պայմանը, որ կապուած է դեռ այն ժամանակ, երբ մենք երկուսս էլ աղքատ էինք և զոհ մեր դրութիւնից։ Այժմ, երբ դու յամառ աշխատանքովդ բարուրուել ես քո նիւթական կացութիւնդ,—փոխուել ես դու։ Այն ժամանակ ուրիշ էիր»։

—«Դեռ տղայ էի», նրա խօսքը կտրեց Սկռուջը անհամբերութեամբ։

—«Քո սեփական զգացմունքդ ասում է քեզ, որ դու առաջուանը չես», պատասխանեց աղջիկը։ «Ես—նոյնն եմ։ Այն որ «երջանկութիւն էր խոստանում, երբ մենք «մէկ» էինք սրտով,—այժմ դժբախտութեան աղբիւր պիտի դառնայ մեզ համար, երբ մենք «երկու» ենք։ Չեմ ասում այլևս, թէ քանի՞քանի անգամ եմ սրտաբեկ մտածել դրա մասին։ Բաւական է գիտենաս, որ ես մտածել եմ դրա մասին և կարող եմ ազատութիւն տալ քեզ»։



—«Երբևիցէ ցանկացե՞լ եմ ես ազատուել քեզնից»։

—«Խօսքո՞վ.—ո՛չ, երբէք»։

—«Ինչո՞վ, ապա»։

—«Փոխուած ընութիւնովդ ու ոգովդ, կեանքիդ մի ուրիշ մթնոլորտովը, ուրիշ յոյսով, որ այժմ նպատակ ես շինել քեզ համար։ Ամեն բանով, որ գին ու նշանակութիւն էր տալիս իմ սիրուս քո աչքումդ։ Եթէ այդ պայմանը եղած չլինէր մեր մէջ», ասաց աղջիկը մի քնքոյշ, բայց անյողդողդ հայեացք գցելով նրա վրայ, «ասա՛ ինձ, կ'ուզէիր դու, արդեօք, այժմ ինձ։—Ա՜հ, ո՛չ»։

Այս ենթադրութիւնը, նրա ցանկութեան հակառակ, արդարացի թուաց նրան։ Բայց նա խեղդեց այդ ներքին ձայնը և ասաց.—«Մի հաւատալ»։

—«Երկինքն է վկայ, որ ուրախութեամբ չէի հաւատալ, եթէ կարելի լինէր», պատասխանեց օրիորդը։ «Գիտեմ, թէ որքան ծանր և անդիմադրելի պիտի լինի մի այսպիսի ճշմարտութիւն, երբ արդէն հաժոգմունք է դարձել։ Եթէ դու ազատ լինէիր այսօր, վաղը, երեկ,—կարող եմ արդեօք ենթադրել, թէ դու մի անօժիտ աղջիկ կ'ընտրէիր,—դու, որ, ոչ մի գին ու նշանակութիւն չտալով «մտերմութիւն» ասածին, ամենինչ չափում ես «շահով» կամ, մի այդպիսին ընտրելով. եթէ մի բոպէ ենթադրենք, որ դու քո գլխաւոր սկզբունքդ ժխտելով ընտրէիր էլ նոյնիսկ մի այդպիսին, չգիտե՞մ ես, որ շուտով պիտի փոշմանէիր, զղջայիր։ Ինձ յայտնի է այդ և ես, պնդացընելով սիրտս, ազատում եմ քեզ ի սէր այն բարի զգացմունքի, որ երբեմն տածում էի դէպի քեզ»։

Երիտասարդը ուզում էր պատասխանել, բայց օրիորդը շուռ տալով իր գլուխը նրանից, շարունակեց.

—«Դուցէ անցած-գնացածի յիշատակը վշտացնի քեզ։ Շատ շուտով դու ուրախութեամբ դուրս կը քշես մտքիցդ այդ յիշատակը, մի անպէտք երազի նման, որ մոռացութեան է մատնուում արթնանալուց։ Բախտաւոր լինես ապագայ կեանքիդ շաւղումը, որ դու ընտրել ես»։

Առաջ օրիորդը և ապա երիտասարդը հեռացան։

—«Ոգի», ասաց Սկռուջը, «այլևս ոչինչ մի ցոյց տալ ինձ։ Տար ինձ տուն։ Հերիք է խնդաս իմ տանջանքներիս վրայ»։

—«Էլի մի հատիկ Ուրուական», բացագանչեց Ոգին։

—«Ոչ», գոչեց Սկռուջը, «չեմ ուզում այլևս նայել։ Մի ցոյց տալ այլևս»։

Բայց անխիղճ Ոգին կաշկանդեց նրան իր զոյգ բազուկներով և ստիպեց տեսնել հետևեալը։

Նրանք արդէն մի այլ տեղ էին. շատ էլ ընդարձակ ու գեղեցիկ չէր այդ սենեակը, բայց յարմար կահաւորուած էր։ Զմեռուայ կրակի առաջ նստած էր մի գեղեցիկ, ջահիլ աղջիկ, այն աստիճան նման նախորդ տեսարանի աղջկան, որ Սկռուջը կարծում էր թէ նոյնն է, մինչև որ նրան տեսաւ արդէն մի վայելչակազմ տիկին դարձած, իր աղջկայ դիմացը նստած։ Անասելի ազմուկ ու ժխոր կար սենեակում, որովհետև այնքան երեխայ կար այնտեղ, որ Սկռուջը մտքի այս անհանգիստ բոպէին չէր կարող նոյնիսկ հաշուել։ Բայց ըստ երևոյթին, այս բաբելոնեան խառնաշփոթութիւնը ոչոքի չէր անհանգստացնում, ընդհակառակը մայր ու աղջիկ սրտանց ծիծաղում էին և զուարճանում դրանով. և վերջինս, խաղի մէջ խառնուելով, անողորմաբար կողոպտուեց փոքրիկ աւազակներից։ Ի՞նչ չէի տալ, արդեօք, որ նրանցից մէկն էլ ես լինէի, թէպէտ երբէք ես չէի կարող այնքան կոպտաբար վարուել նրա հետ։ Ո՛չ, ո՛չ։ Եթէ ամբողջ աշխարհն էլ տային ինձ, ես երբէք չէի քանդիլ ու խճճիլ նրա ծամը։ Երբէք չէի թոցնիլ նրա թանդագին փոքրիկ ոտնամանը. Աստուած հեռու տանի։ Իսկ նրա մէջքով փաթթուելը... երբէք չէի համարձակուիլ, այդ աներես փոքրիկների նման։ Ես կը ցանկանայի, որ իմ ձեռքս դատապարտուած լինէր կռած մնալ այդ իրանի շուրջը և երբէք չկարողանար այլևս ուղղուել։ Ուղիղն ասեմ, ես սրտանց կ'ուզէի շոշափել նրա շրթունքները. նայել նրա խոնահեցրած աչքերի թերթևանունքին, որ երբէք չկարմրի ամօթխածութիւնից. արձակել նրա մազերը, որոնց մի չնչին մասը անգին յիշատակ կը համարէի. մի խօսքով խոստովանում եմ, որ կը ցանկանայի երեխայի ազատութիւն ունենալ հետը խաղալու և միևնոյն ժամանակ մեծ մարդու իմացականութիւն—գնահատելու այդ բախտաւորութիւնը։

Բայց ահա դուռը բաղխեցին և երեխայքը սկսեցին հրհրել իրանց քրոջ, որ ժպտերես, հագուստն անկարգ, այդ ազմկող ուրախ խմբով շրջապատուած, դիմաւորեց դռանը իր հօրը, որի հետ մի մշակ էլ կար, բեռնաւորուած ծննդեան ընծաներով ու խաղալիքներով։ Եւ ահա բացագանչութիւններ, հրհրոց ու յարձակումն անպաշտպան մշակի վրայ։ Կախ ընկան նրանից, բարձրացան նրա ուսերը, փոքրիկ թաթիկները խոթեցին ծրարների մէջ, խլեցին նրանից թղթում փաթթած կտորները, պինդ կպան նրա փողպատին, փաթաթուեցան նրա վզովը և անդիմադրելի թափով ծեծում էին նրա մէջքն ու ոտնահարում նրա ոտները։ Ամենմի փաթեթ բացւում էր ցնծութեան ու զարմանքի աղաղակներով։ Սարսափելի աղմուկ բարձրացաւ, երբ նկատեցին, որ փոքրիկը խաղալիքի «թաւա»-ն բերանն է խոթել, իսկ փայտաշէն արուեստական հնդուհաւը գուցէ և կուլ է տուել... Եւ ինչ մեծ ուրախութիւն, երբ պարզուեց, որ կուլ տուած բան չկար։ Ուրախութիւն, գոհութիւն և յափշտակութիւն։ Մի աննկարագրելի բան։ Երեխաները, ոտքոնց հետ և աղմուկը աստիճանաբար ընդունարանը բարձրացան, ապա, աստիճան-աստիճան մինչև ամենավերին յարկը, *) ուր անկողին մտան ու հանգստացան վերջապէս։

Այժմ, երբ տանտէրը, քնքուշութեամբ գրկելով իր աղջկան, նստեցրեց նրան ու նրա մօրը իր կողքին, վառարանի մօտ,—Սկռուջը աւելի ևս լարեց իր ուշադրութիւնը, և երբ մտածեց, որ մի այլ սրա նման արարած, այսքան սիրուն ու յուսատու կարող էր իրան էլ հայր անուանել ու նրա կեանքի գառնաշունչ ձմեռը գարուն դարձնել,—նրա աչքերը մթնեցին արտասուքից։

—«Բէլ» ասաց ամուսինը, ժպտերես դիմելով իր կնոջ, այսօր քո վաղեմի բարեկամներից մէկին եմ տեսել»։

—«Որի՞ն»։

—«Փուշակիր»։

—«Ի՞նչպէս գուշակեմ։ Կաց, գիտեմ», իսկոյն աւելացրեց տիկինը ամուսնու պէս ժպտալով.—«պ. Սկռուջին»։

—«Պ. Սկռուջն էր։ Անցնում էի նրա գրասենեակի պատուհանի մօտով, որ փակ չէր, ներսն էլ ճրագ կար վառ։ Տեսնեմ՝ նրա ընկերը մահուան անկողնում՝ իսկ նա—մենակ կողքին նստած։ Բոլորովին միայնակ աշխարհքումս...»

—«Ոգի», ասաց Սկռուջը խզուած ձայնով, «տար ինձ այստեղից»։

—«Ասում եմ որ այս բոլորը անցած-գնացած բաների ստուերներն են», ասաց Ոգին։ «Եղած բաներ ես տեսնում, իզուր մի բարկանալ ինձ վրայ»։

—«Տար ինձ այստեղից», գոչեց Սկռուջը, «անտանելի է այս բոլորը ինձ համար»։

Շուռ գալով դէպի Ոգին և նկատելով, որ նա նայում է իրան մի այնպիսի հաճոյքով, որի մէջ, զարմանք բան, կարե-

*) Անգլիական բնակարանները մերոնց նման մի յարկում չեն լինում։ Առաջին յարկում ընդունարանն ու սեղանատունն է լինում, որի տակը խոհանոցը, երկրորդում՝ ննջարանը, երրորդում՝ երեխաների սենեակը կայն։

Ծ. Թ.

լի էր ջոկել բոլոր նրա ցոյց տուած դէմքերի կտորները։
—Սկռուջը սկսեց կռուել նրա հետ։

—«Թող ինձ, ետ տար ինձ։ Հերիք է տանջեց»։

Այդ կռուի ժամանակ,—եթէ կարելի է կռիւ անուանել այն, որ Ոգին իր հակառակորդին կարծես չէր դիմադրում նը-կատելի կերպով,—Սկռուջը նկատեց, որ նրա լոյսը վառուում է աղատ ու պայծառ. և այդ լոյսին վերադրելով Ոգու ազդեցու-թիւնը, խլեց նրանից շիջուցիչ-գդակը և յանկարծակի գցեց նրա գլխին ու սկսեց հուպ տալ։

Գդակը ծածկեց ոգու ամբողջ մարմինը։ Թէպէտ Սկռուջը իր բոլոր ուժով հուպ էր տալիս, բայց չէր կարողանում մարել լոյսը, որ անընդհատ դուրս էր բղխում գդակի տակից, գետնի վրայով։

Նա զգաց, որ ուժասպառուում, յաղթուում է ընելու անդի-մադրելի փափագով. ապա իր սեփական ննջարանումն զգաց իրան։ Վերջին անգամ նա հուպ տուեց գդակը, ապա նրա ձեռ-քը թուլացաւ և՝ հազիւ անկողնին հասնելով՝ ծանր քնի մէջ ընկաւ։

---

Գլուխ Գ.

## ԵՐԵՔ ՈԳԻՆԵՐԻՑ ԵՐԿՐՈՐԴԸ

Անասելի խոմփոցից արթնացած ու անկողնումը նստած խելքը գլուխը ժողովող Սկռուջին յիշեցնելու կարիք չկար, թէ ժամացոյցի զանգը «մէկը» պիտի տայ։ Նա զգում էր որ իսկ-ևիսկ ժամանակին էր ուշքի եկել, այն իսկ ժամին, երբ պի-տի տեսակցութիւն ունենար Յակոբ Մաղէյի Ոգու միջամուխ-թեամբ իրա այցելութեանը գալիք երկրորդ Ուրուականի հետ։ Բայց, ցուրտ զգալով, այլ ևս նստած չմնաց իր հետաքրքրու-թիւնը բաւականացնելու, թէ այս նոր Ոգին վարագոյրներից ո՞ր-ն է քաշելու, այլ ինքը իր ձեռքով բոլոր վարագոյրներն էլ յետ քաշեց և, կրկին պառկելով, ուշադրութեամբ աչք ածեց չորս կողմը։ Որովհետև ուզում էր երևալուն պէս կանչել Ոգուն և ոչ թէ անպատրաստ լինելով յանկարծակի «վեր թռչել»։

«Ընկած-դուրս-եկած» մարդիկ, որ պարծենում են թէ ի-րանք ամեն դժուար դրութիւնից ելք կը գտնեն և ընդունակ են ամեն բանի, սկսած «արծիւը թէ գիրը» խաղից մինչև մարդասպանութիւնը, որպիսի ծայրայեղ հակադրութիւնների միջև անպայման մեծ անդունդ և՝ գործողութիւնների ու առար-



կանների տեսակին՝ շարք կայ։ Չհամարձակուելով Սկռուջի մա-սին այսպիս լեզու գործածել, խնդրում եմ, սակայն, հաւատալ, որ, նա պատրաստ սպասում էր շատ օտարոտի երևոյթների և ոչ մի բան՝ սկսած մի երեխայից մինչև մի ռնգեղջիւր՝ ոչ մի բան —չէր կարող զարմացնել նրան բաւականին։

Արդ, ամեն կերպ պատրաստուած ամեն բանի, նա ոչ մի կերպ պատրաստ չէր ոչնչի։ Հետևապէս, երբ զանգը խփեց «մէկ» և ոչոք չ'երևաց, նա սկսեց սաստիկ դողալ։ Հինգ բոպէ, տասը բոպէ, մի քառորդ ժամ անցաւ, կրկին ոչինչ։ Բոլոր ժամանակ Սկռուջը պառկած էր անկողնում, որ կենտրոն էր դարձել կարմրագոյն փայլուն լոյսի, որի ճառագայթ-ները, զանգը խփած բոպէից հեղեղել էին նրան, և որ պարզապէս լոյս լինելով հանդերձ—մի խումբ Ոգիներից աւելի սարսափելի էր, որովհետև նա անկարող էր ըմբռնել, թէ ի՞նչ է այդ, կամ ի՞նչ պիտի լինի։ Մէկ՝ ենթադրեց, թէ մի գուցէ ինքն է հէնց նոյն բոպէին այդ հետաքրքիր երևոյթի աղբիւրը, զուրկ նոյնիսկ գիտակից լինելու մխիթարութիւնից։ Վերջապէս, նա սկսեց մտածել, ինչպէս ես կամ դուք կը մտա-ծէինք հէնց սկզբից, որովհետև միշտ կողմնակի դիտողը լաւ գիտի թէ ի՞նչ պէտք է անել և, սակայն ինքը նոյն դրութեան մէջ,—ամենից վերջը կ'անէր ինչոր հարկն է,—ասում եմ, նա սկսեց մտածել, թէ այդ չնաշխարհիկ լոյսի աղբիւրն ու պատ-ճառը, երևի, կողքի սենեակումն է և հէնց այդպէս էլ էր, ո-րովհետև հէնց այնտեղից էր լոյսը։ Եւ երբ այլևս կասկած չկար թէ ո՞րտեղից է բղխում լոյսը, նա հանդարտ վեր կացաւ անկողնից, և հողաթափները շփշփացնելով, մօտեցաւ դռանը։

Այն բոպէին երբ Սկռուջը ձեռքը մեկնեց դէպի դուռը, մի օտարոտի ձայն նրա անունը տուեց և ներս հրաւիրեց։

Նա հնազանդուեց։

Անկասկած իր սեփական սենեակն էր, բայց մի զարմա-նալի փոփոխութիւն էր տեղի ունեցել։ Պատերն ու առաստա-ղը զարդարուած էին թարմ կանաչով, կարծես կատարեալ ծա-ռաստան լինէր, լիքը հասած, գեղեցիկ պտուղներով։ Բաղեղի և ճագոմի փայլուն թերթիկները, մանր հայելիների նման, անդրադարձնում էին լոյսը. ահագին կրակ էր բոցավառուում վառարանում, որի նմանը վաղուց չէր տեսնուած այդ ողորմե-լի տանը ոչ Սկռուջի և ոչ Մաղէյի օրով, շատուշատ ձեռ գի-շերներ։ Յատակին ահագին դեզ էին կազմում հնդուհաւերը, սագերը, երէները, հաւերը, խոզերը, մսեղէնը, կաթնակեր խոճկորները, երշիկների երկար շարքերը, մսալից արգանակնե-ը, պլոմ-պուդդինգները, խեցգետնով լիքը տակառները,

տաք-տաք խորոված շագանակը, կարմրաթուշ խնձորը, հիւթալի նարինջը, հրաշալի տանձերը, ահագին քաղցր գաթաները, որ լցնում էին սենեակը իրանց նուրբ բոյրով։ Եւ այդ դէղից գահ էր յարմարեցրել իրա համար մի ուրախ հսկայ, փառահեղ արտաքինով, ձեռքին մի վառ կերոն, ոչ այնքան Առատութեան Եղջիւրի նման, որ բռնած էր բարձր-բարձր, որպէսզի լոյսն ընկնէր Սկռուջի վրայ, երբ որ նա դուրս կը նայի դռան քամակից։

—«Ներս արի», գոչեց Ոգին։ «Ներս արի, մարդ, և լաւ ճանաչիր ինձ»։

Սկռուջը քաշուելով ներս մտաւ և գլուխ խոնարհեց Ոգու առաջ։ Այլ ևս նախկին Սկռուջը չէր. և թէպէտ պայծառ ու սիրալիր էին Ոգու աչքերը, այնուամենայնիւ նա խոյս էր տալիս նրանցից։

—«Ես այս Ծննդեան Ոգին եմ», ասաց նա. «նայիր ինձ»։

Սկռուջը յարգանքով նայեց։ Հագին մի հասարակ մուգ-կանաչ շոր էր, ծայրերը սպիտակ մորթի զրած։ Ազատ գցած էր վրէն, բաց պահելով նրա հուժկու կուրծքը, որ չէր ուզում, կարծես, պահուել կամ թաղնուել որևէ արհեստական բանի տակ։ Զգեստի լայն ծալքերի տակից երևացող ոտները—նոյնպէս մերկ էին. գլխին կանաչ պսակ ունէր, որի վրայ այսուայն կողմից պսպղում էին սառցի կաթիլներ։ Նրա մուգ մազերը երկար էին և արձակ. ազատ, ինչպէս ուրախ դէմքը, պայծառ աչքերը, բաց ձեռքը, զուարթ ձայնը, համարձակ վարուեցողութիւնը, գեղաթիթաղ երեսը։ Մէջքին կապած ունէր մի հին սրի պատեան, բայց սուր չկար մէջը և մաշուած ու ժանգոտած էր պատեանը։

—«Երբէք չե՞ս տեսել ինձ նմանը», գոչեց Ոգին։

—«Երբէք», պատասխանեց Սկռուջը։

—«Մօտ չե՞ս եղել մեր ընտանիքի կրտսեր անդամների հետ երբևիցէ, ուզում եմ ասել վերջին տարիներս ծնած մեծ եղբօրցս հետ, որովհետև ես չափազանց ջահիլ եմ», շարունակեց Ոգին։

—«Չեմ կարծում», ասաց Սկռուջը, «դժուար թէ տեսած լինեմ նրանց։ Քանի՞ եղբայր էք դուք»։

—«Հազար ութ հարիւրից աւելի», ասաց Ոգին։

—«Սարսափելի բան է դրանց հաց հասցնելը», մրթմրթաց Սկռուջը։

Ներկայ Ծննդեան Ոգին ոտի կանգնեց։

—«Ոգի», ասաց Սկռուջը խոնարհութեամբ, առաջնորդիր ինձ ուր որ ուզես։ Անցեալ գիշեր զոռով տարան ինձ, սակայն



մի դաս առայ, որ դեռ չեմ մոռացել։ Թէ դու էլ դաս ունես տալու, ուզում եմ առնել այս գիշեր։

—«Շօշափիր հանդերձս»։

Սկռուջը կատարեց Ոգու հրամանը և պինդ բռնեց նրան։

Տօնածառ, բաղեղ, կարմիր պտուղներ, ճագում, հնդուհաւ, սագ, երէ, հաւ, խոզեղէն, մսեղէն, կոճկոր, երշիկ, խեցգետին, արգանակ, պուդդինգ, պտղեղէն, պունչ... ամեն բան չքացաւ իսկոյն։ Նոյնպէս և սենեակը, կրակը, կարմրագոյն լոյսը, գիշերային, ժամը. և ահա նրանք մի քաղաքային փողոցում են։ Ծննդեան առաւօտ էր, սաստիկ ցուրտ։ Ամբոխը աղմկում էր. ամենամէկը իր տան առաջի սալայատակի նոյնպէս և տանիքի ձիւնը քերելով ուրախ և ոչ անախորժ աղմուկ էր անում. իսկ փողոցում վազվզող երեխայքը հրճւում էին, կտուրներից թափուող ձիւնից առաջացող տարափով։

Տները բաւականին մութն էին երևում, իսկ պատուհանները աւելի մութ՝ կտուրների ձեան հարթ սպիտակութեան և գետնի վրայի գորշագոյն ձիւնի հակադրութեամբ, ուր որ երեսի խաւի վրայ երևում էին ծանր կառքերի անիւների խորը հետքերը. հետքեր, որ մեծ փողոցների անկիւններին հարիւրաւոր ձևերով այսուայն կողմն էին ծռմռւում և իրար հետ հիւսւում ու ակօսների մի խառը ցանց կազմում, որին հետևելը այդ թանձր դեղնագոյն ցեխում ու սառած ջրում—հեշտ չէր։ Երկինքը մռայլ էր և ամենակարճ փողոցներն էլ լիքն էին կեղտոտ՝ կէս-հալած ու կէս-սառած մառախուղով, որի մանրիկները խտանալով, մրի տարափ էին կազմում, կարծես, Մեծ-Բրիտանիայի բոլոր վառարանները, խօսք մէկ արած, վառուել՝ քէֆ էին անում։ Ո՛չ եղանակը և ոչ քաղաքն էին ուրախ, բայց մի այնպիսի ուրախութիւն էր տիրում այստեղ, որ ամառային ամենապայծառ օրն ու ամենափայլուն արևն էլ չէին կարող առաջացնել։

Տանիքների ձիւնը սրբողներն էլ էին ուրախ ու զուարթ. կտուրների վրայից իրար ձայն էին տալիս և ծնագունդ խաղում, ի սրտէ ծիծաղելով իրար դիպցնելիս և ոչ պակաս զուարճանալով վրիպելիս։ Հաւավաճառների կրպակները դեռ կիսաբաց էին, մրգավաճառներն էլ ճաճանչում էին լուսափայլ։ Ահագին, կլոր, հաստափոր, շագանակով լիքը քթոցները նմանում էին ուրախ «պատուելի»-ների ժիլետներին, որ՝ թեք ընկած գոտների առաջ, կարծես, չափազանց առատութիւնից կաթուածահար, վայր էին ընկնում փողոցը։ Կարմիր, գորշագոյն, հաստափոր իսպանական սոխը՝ չաղութիւնից պսպղում էր իսպանացի վարդապետի նման և խորամանկ հեշտասիրութեամբ

աչքով էր անում անցուդարձ անող աղջկերանց, համեստութեամբ աչքը գցելով վերևից կախ ճաղոմին *)։ Տանձ ու խընձորի դեղերը կարծես բլուրներ լինէին։ Աչքի ընկնող չանգալներից՝ բարեգութ մանրավաճառները կախել էին խաղողի ողկոյզները, որ անցուդարձ անողների բերանի ջուրը գնայ... ձրիաբար։ Վայրի ընկոյզների գորշ դեղերը իրանց բոյրով յիշեցնում էին մարդու անցած-գնացած ախորժելի զբօսանքները ծառաստաններում, երբ մարդու ոտներ խրւում են չորացած տերևների մէջ։ Նոռֆոլկի մսալի, մգագոյն, եփած խնձորների կողքին—աչքի էին ընկնում դեղնագոյն, հիւթալի նարինջներն ու լիմոնները, որ կարծես, սպասելիս լինէին «մուշտարու», որ թղթում փաթթի, տուն տանի ու ճաշից յետոյ անուշ անի։ Ընտիր պտղեղէնների հետ ի ցոյց դրուած ոսկեփայլ ու արծաթափայլ ձկները նոյնիսկ, սառնարիւնների տաղտուկ ընտանիքի անդամներ լինելով հանդերձ, կարծես զգում էին, որ մի արտասովոր բան է կատարւում իրանց շուրջը, և ամենի ձուկ՝ դանդաղ ու անկիրք՝ պտտում ու պտտում էր իր փոքրիկ աշխարհում։

Իսկ մանրավաճառները, ծ, մանրավաճառները, հաստաբան դանփակ, պատուհանները գոցող տախտակներից միայն մէկը կամ երկուսը հանած, սակայն ինչ հրաշալի տեսարան էր բացւում այդ նեղլիկ ճեղքերից։ Կշեռքների թաթերը զընգզընգում էին ուրախ-ուրախ, կծիկները պտտւում, թելերը բացւում, արկղիկները վեր-վար թռչկոտում, կարծես ձեռնածուի հրամանով. թէյի և սուրճի խառն անուշահոտութիւնը ախորժելի էր ու գրգռիչ, խաղողն առատ ու ընտիր էր, նուշը—անչափ սպիտակ, դարչինը այնքան ձիգ-ձիգ և ուղիղ, ուրիշ համեմները այնքան նուրբ, շաքարապտուղները այնչափ առատօրէն շաքարած, որ ամենասառնասիրտ նայողին անգամ ճանապարհից կը հանէին և, հետևապէս, միտքը կը պղտորէին։ Հիւթալի ու մսալի թուզը, ֆրանսիական գեղեցիկ արկղիկներում դարսած մեխաշ սալորը, ամեն ինչ, մի խօսքով, այնքան համեղ ու գեղեցիկ էր իր տօնական տեսքով. գնողներն էլ, մեծայոյս տօնի բերելիք բարիքների վրայ, այնպիսի փութով էին շտապում, որ ընդհարւում էին իրար դռանը, կատաղաբար ջարդոտում իրար ուռէ քթոցները, մոռանում իրանց գնածները խանութպանի սեղանի

*) Ծննդեան տօնին տներն ու կրպակները զարդարուած են լինում ի միջի այլոց և ճաղոմով. եթէ մէկին յաջողուից մի կին կամ աղջիկ կանգնացնել ճաղոմի տակը, իրաւունք ունի համբուրելու նրան, կամ հետը պարելու։

Ծ. Թ.



վրայ, կրկին վազելվազ վերադառնում, յետ վերցնում, և հաբիւրաւոր այսպիսի սխալներ անում, չփոխելով սակայն նոյն ուրախ տրամադրութիւնը։ Իսկ խանութպանն ու նրա գործակատարներն այնչափ ուշադիր և եռանդուն էին, որ նրանց գոգնոցների յղկած սրտաձև ճարմանտները, կարծես հէնց նրանց սեփական սրտերը լինէին, դուրս դրած ի տես ամենքի, որպէսզի Ծննդեան թռչնակները *) կտցահարեն, եթէ ուզենալու լինեն։

Բայց շուտով զանգահարութիւնը եկեղեցի հրաւիրեց ժողովրդին և ամենքը իրանց ամենալաւ շորերով և ամենաուրախ դէմքերով գնում են ու գնում։ Միևնոյն ժամանակ բազմաթիւ կողնակի փողոցներից, նեղ ու ծուռ անանուն անցքերից, անթիւ ժողովուրդ դուրս թափուեց, փռում եփելիք կերակուրները ձեռներին, փուռը տալու։ Այս աղքատ-շուայլների տեսքը երևի սաստիկ հետաքրքրեց Ոգուն, որովհետև նա Սկռուջի հետ կանգ առաւ մի փռան առաջ և ամենամի ներս մտնողի ամանի խուփը բարձրացնելով, անդադար սրսկում էր նրանց իր ձեռքի կերոնով։ Այդ մի արտասովոր կերոն էր. մէկ-երկու անգամ երբ կերակուր բերողները՝ դռանը իրար հետ ընդհարուելով՝ սառը խօսք ասացին իրար, նա միքանի կաթիլ հեղուկ կթացրեց կռուողների վրայ իր կերոնից և անմիջապէս նրանց քէֆը տեղն եկաւ։ Եւ հէնց իրանք նկատեցին, որ ամօթ է Ծննդեան օրը կռիւ անել։ Եւ ճիշտ որ ամօթ է, Աստուած վկայ, ամօթ է։

Կամաց-կամաց զանգահարութիւնը դադարեց և փուռը փակուեցան. սակայն այս բոլոր ճաշերն ու եփութիւնը իրանց ախորժելի հոտը դրոշմեցին այս հացթուխների վառարաններին. նոյնիսկ սալայատակը ծխում էր, կարծես քարերն էլ էին եփութիւն անում։

—«Սրսկած հեղուկդ առանձին համ ու հոտ ունի», հարցրեց Սկռուջը։

—«Ա՛յո, իմ համ ու հոտս»։

—«Ամեն մի ճաշի այսօր նա հաղորդելու է այդ համ ու հոտը», հարցրեց Սկռուջը։

—«Ամեն մի բարի ճաշի։ Աւելի ևս աղքատների ճաշին»։

—«Ինչո՞ւ աղքատներին աւելի՞», հարցրեց Սկռուջը։

—«Որովհետև ամենից շատ նրանց է հարկաւոր»։

—«Ոգի», ասաց Սկռուջը մի բոպէ մտածելուց յետոյ,

*) Օրիորդներին է ակնարկում այդ «թռչնակ» խօսքով։

Ծ. Թ.

զարմանում եմ, որ մեզանից վերը բնակող արարածներից դու ես հէնց, որ ուզում ես այս մարդկանց զրկել այդ անմեղ զուարճութեան հեշտութիւնից»։

—«Ե՞ս», գոչեց Ոգին։

—«Դու ուզում ես զրկել նրանց ամէն կիրակի ճաշելու հնարաւորութիւնից, յաճախ դա միակ օրն է, երբ նրանց կերածին կարելի է ճաշ անունը տալ», ասաց Սկռուջը։ «Ա՞յդ է ուզածդ»։

—«Ե՞ս», գոչեց Ոգին։

—«Հօ դո՞ւ ես, որ ամէն կիրակի փակել ես տալիս այս տեղերը», ասաց Սկռուջը։ «Իսկ իմ ասածս էլ հէնց դրա հետևանքն է»։

—«Ե՞ս», բացագանչեց Ոգին։

—«Ներիր, եթէ սխալուած եմ։ Սակայն քո, կամ ձեր ընտանիքի անունիցն է միշտ այդ կատարուել», ասաց Սկռուջը։

—«Ձեր երկրի վրայ շատ մարդ կայ», պատասխանեց Ոգին, որ յայտարարում է, թէ ճանաչում է մեզ և մեր անունից բաւականութիւն է տալիս իրա կրքերին, հպարտութեանը, չարութեանը, ատելութեանը, նախանձին, փարիսեցութեանն ու եսականութեանը, սակայն այդ մարդիկ բոլորին օտար են մեզ ու մերայնոց։ Ցիշիր ասածս ու նրանց արածների մեղքը իրանց շլնքին դիր և ոչ թէ մեր *)»։

Սկռուջը խոստացաւ յիշել և նրանք անտեսանելի, ինչպէս և առաջ, անցան ու մտան քաղաքի արուարձանները։ Ոգին մի նշանաւոր յատկութիւն ունէր (որ Սկռուջը արդէն փոքր մօտ նկատել էր). չնայած իր հսկայական մեծութեանը, կարողանում էր ամէն տեղի հեշտութեամբ յարմարուել. չնաշխարհիկ արարածի շնորհքով կանգնել ցած տանիքի տակ նոյն հեշտութեամբ, ինչպէս մի ահագին սրահում։

Գուցէ իր այս կարողութեան ի ցոյց դնելու ցանկութիւնը, կամ թէ նրա բարի, մեծահոգի, սրտագին բնութիւնը և դէպի աղքատները տածած համակրանքը՝ բարի Ոգուն առաջնորդեցին ուղղակի դէպի Սկռուջի գրագիրը, որի բնակարանն եկաւ, Սկռուջն էլ հետը, Ոգու փէշքիցը բռնած. դռան շէմքին Ոգին ժպտաց, կանգ առաւ ու Բոբ Կռեչիտի բնակարանը սըրսկեց իր կերոնից։ Մի լաւ միտք արէք։ Բոբը միայն 15 բոբ**)

*) Անգլիայում կիրակին չափազանց խիստ պահելու պատճառով, խեղճ մարդիկ, որ միայն այդ օրն են լինում ազատ, զուրկ են մնում ամէն զուարճութիւնից։ Ե. Թ.

**) Բառախաղ. Բոբ—Ռոբերտ անուան փաղաքշականն է և բոբ (փոքր տառով)—շիլինգ ասել է։ Ե. Թ.



էր ստանում շաբթեկան. իր սեփական անուան պատճէններից միայն 15-ը ամէն շաբաթ, այնուամենայնիւ ներկայ Ծննդեան Ոգին օհնեց նրա համեստ բնակարանը։

Ոտքի կանգնեց Բոբի կին տիկին Կռեչիտը, հագին մի խունացած, երկու անգամ երեսը շուռ տուած, շոր, բայց էժանագին ժապաւէններով զարդարած, որ վեց պենսով գեղեցկութիւն են տալիս հին շորին։ Իր երկրորդ աղջկայ, Բելինդա Կռեչիտի օգնութեամբ, որնոյնպէս զարդարուած էր ժապաւէններով, սփռոցը գցեց. մի չանգալ էլ գետնախնձորի կաթսայի մէջ էր գցել Պետրոս Կռեչիտը, որի բերանն էին մտնում շապկի հրէշաւոր օձիքի ծայրերը (Բոբի անձնական սեփականութիւնը, տօնի առիթով իր որդուն ու ժառանգին անցած). սակայն Պետրոսը հիանում էր իր «վայելուչ» զարդարանքով և սաստիկ ցանկութիւն ունէր երևալ ամենաընտիր ճեմելիքներում իր ճերմակ օձիքը հագին։ Վազելազ ներս ընկան զոյգ փոքրիկ Կռեչիտները, աղջիկ ու տղայ, բղաւելով թէ փռան մօտ սագի հոտ էր գալիս և իրանք ճանաչեցին իրանց սագի հոտը։ Սոխի և եղեսպակի անուշահոտութիւնից ոգևորուած փոքրիկ Կռեչիտները պարում էին սեղանի շուրջը և Պետրոս Կռեչիտին մինչև երկինքը փառաբանում, մինչդեռ սա, առանց հպարտութեան (թէպէտ օձիքը շատ էր բարձր պահում նրա ծնօտը) փչում էր կրակը, մինչև որ յաժառ գետնախնձորը բլթփլթալով սկսեց բաղխել բարձրաձայն իր խուփը, որ դուրս տան ու կճպեն իրան։

—«Ի՞նչ եղաւ տեսնես, ձեր ազիզ հայրը», ասաց տիկ. Կռեչիտը։ Նոյնպէս ձեր եղբայրը, Տայնը Տիմը։ Անցեալ Ծնընդեան Մարթան էլ կէս ժամ առաջ արդէն տանն էր»։

—«Մարթան այստեղ է, մայրիկ», ասաց մի աղջիկ, որ նոր էր ներս մտնում։

—«Մարթան եկաւ, մայրիկ», գոչեցին երկու փոքրիկ Կռեչիտները։ «Հռռռռա... Մի այնպիսի սագ ունենք, Մարթա, որ»...

—«Ինչո՞ւ ես, սիրելիս, այսքան ուշացել», ասաց տիկին Կռեչիտը, պաչպչելով նրան ու վերցնելով նրա շալն ու գլխարկը եռանդուն հոգատարութեամբ։

—«Անցած գիշեր մի քիչ գործ ունէինք վերջացնելու, մայրիկ, պատասխանեց աղջիկը, իսկ այս առաւօտ հաւաքում էինք ամենինչ»։

—«Լաւ, հիմա թողնենք այդ, երբ որ դու եկել ես արդէն», ասաց տիկ. Կռեչիտը։ «Նստիր, սիրելիս, կրակի մօտ ու տաքացիր, Տէրը քեզ հետ»։

—«Ո՛չ, ո՛չ, հայրիկը գալիս է», գոչեցին երկու փոքրիկները, որ միաժամանակ ամեն տեղ էին։ «Թագնուիր, Մարթա, թագնուիր»։

Մարթան թագնուեց. ներս մտաւ ինքը՝ հայրը—փոքրիկ Բոբը, օրօրելով առջևիցը կախ շալի ծայրերը, ամենապակասը երեք ոտաչափ երկարութեամբ, դեռ ծոպերը չհաշուած։ Նրա հնամաշ շորը կարկատոտած էր ու մաքրած տօնի առիթով։ Տայնը Տիմին էլ շալակել էր, որովհետև, աւաղ, վերջինս, ոտների տեղ, երկաթի կտորների վրայ էր քաշքշում իր մարմինը։

—«Բա, ո՞ւր է մեր Մարթան», գոչեց Բոբ Կռեչիտը, նայելով շուրջը։

—«Չի եկել դեռ», ասաց տիկ. Կռեչիտը։

—«Չի եկե՞լ», ասաց Բոբը, կորցնելով իսկոյն իր ուրախ տրամադրութիւնը (եկեղեցուց մինչև տուն Տիմի նժոյգի պաշտօնը կատարելով, ուրախ սրտով էր տուն մտել). «Ծննդեան թաթախման գիշերն էլ չեն թողել տուն»։

Մարթան, որ չէր սիրում հօր տխրութիւնը նոյնիսկ հանաքի համար, անժամանակ դուրս պրծաւ պատուհանից և ընկաւ նրա գիրկը, մինչև երկու փոքրիկները քարշ էին տալիս Տայնը Տիմին դէպի լուացքի սենեակը, պուդդինգի քլթփլթոցին ականջ դնելու։

—«Իսկ փոքրիկ Տիմը ի՞նչպէս էր պահում իրան, հարցրեց տիկ. Կռեչիտը, ամուսնու դիւրահաւատութեան վրայ մի կուշտ ծիծաղելուց յետոյ, երբ Բոբն էլ ուզածի չափ փաղաքշել էր աղջկան։

—«Շատ լաւ, անչափ լաւ», ասաց Բոբը։ «Մենակ նստած մնքան միտք է անում նա ինքնիրան, որ չլսուած բաներ են անցնում մտքովը։ Տուն գալիս նա ինձ պատմեց, թէ յոյս ունի, որ եկեղեցում ժողովուրդը նկատած կը լինի հաշմանդամութիւնը, որ թաթախման երեկոյ առանձին ախորժանքով յիշեցրած կը լինի Նրան, որ բժշկում էր կաղերին ու կոյրերին»։

Բոբի ձայնը դողդոջուն էր այս պատմութիւնն անելիս, իսկ երբ ասաց, որ Տայնը Տիմը մեծանալով կաղդուրւում ու ամրապնդւում է, աւելի ևս դողդողաց։

Բայց դեռ ոչ մի խօսք չարտասանած, լսուեց նրա երկաթէ ոտների աշխոյժ թրխկթրխկոցը և ներս մտաւ Տայնը Տիմը, որին փոքրիկները տարան նստացրին կրակի կողքին, աթոռի վրայ. Բոբը, թևքերը ետ տալով (կարծես ողորմելի շորի վրայ մաշուելու տեղ լինէր մնացած), մի թաս «ջին» *) պատրաստեց լիմոնով, խառնեց գդալով ու դրեց վառարանի մօտ. Պետրոսն ու փոքրիկները գնացին սագը բերելու ու շուտով վերադարձան, մեծ շքով բերելով սագը։

Մի այնպիսի աղմուկ բարձրացաւ, կարծես սագը թռչուններից ամենահազուագիւտը լինէր. մի թեւաւոր հրաշք, որի մօտ սև կարապն էլ ոչինչ բան է. և, իսկապէս, այդ տան մէջ սագը—սև կարապի նման մի չտեսնուած բան էր։ Տիկ. Կռեչիտը նախօրօք պատրաստած «սօուս»-ն էր տաքացնում ու քլթփլթացնում, Պետրոսը անասելի ուժով գետնախնձորն էր տրորում, օրիորդ Բելինդան եփած խնձորն էր համեմում, Մարթան տաք-տաք պնակներն էր սրբոտում, Բոբը—Տայնը Տիմին էր տեղաւորում իր կողքին սեղանի նեղլիկ անկիւնում, փոքրիկներն ամենքի համար աթոռներ էին գնում, իրանց համար էլ չմոռանալով, և իրանց տեղերը բռնած, գդալները բերաններն էին դրել, որպէսզի ձայն չհանեն, մինչև սագ վերցնելու հերթը իրանց հասնի։ Վերջապէս կերակուրները սեղան դրուեցան ու աղօթքն ասուեց։ Հետևեց խորին լռութիւն և տիկ. Կռեչիտը հանդարտութեամբ վերցնելով դանակը ու աչքի անցնելով, պատրաստուեց խրել սագի կուրծքը. և երբ որ վերջապէս սագի փորը ճղուեց ու այնտեղից դուրս թափուեց վաղուց սպասած «միջուկը», հիացքի շշուկ բարձրացաւ, և նոյնիսկ Տայնը Տիմը, որին դրդում էին երկու փոքրիկները, դանակի կոթը խփեց սեղանին և մի թոյլ «հուռռա» գոչեց։

Երբէք այսպիսի սագ չի տեսնուած։ Բոբն ասաց, թէ, հաւատաս, երբէք այսպիսի սագ չլինի տապակուած։ Նրա քնքշութիւնը, համ ու հոտը, մեծութիւնն ու էժանութիւնը—ամենքին զարմացնում էին։ Եփած խնձորի ու տրորած գետնախնձորի հետ միասին—կուշտ ճաշ էր ամբողջ ընտանիքի համար. իսկապէս, ինչպէս որ ուրախ սրտով նկատեց տիկ. Կռեչիտը (ակնարկելով սեղանի վրայ մնացած մի փոքրիկ ոսկորի կտորին), սագը ամբողջովին դեռ չեր կերուել—պրծել։ Եւ ահա ամեն մէկը կուշտ էր, նամանաւանդ կրտսեր Կռեչիտները կոր-ել էին սոխի ու եղեսպակի մէջ մինչև ունքերը։ Ապա օր. Բելինդան փոխեց պնակները, իսկ տիկ. Կռեչիտը միայնակ դուրս եկաւ սենեակից, պուդդինգը կաթսայից հանելու ու բերելու։ Միայնակ, որովհետև սիրտը տրոփում էր, թէ միգուցէ հում լինի, միգուցէ ճվլուի հանելիս, միգուցէ դող լինի մտած յետի բակից ու թոցրած պուդդինգը, մինչդեռ իրանք քէֆ էին

*) Մի տեսակ արաղ։ Ն. Թ.

քաշում սագն անուշ անելիս. այդ ենթադրութիւնից փոքրիկները գունաթափ եղան։

Օհ՜, գոլորշուն նայէք, պուդդինգը հանել են։ Լուացքի հոտի պէս մի հոտ, որ երևի քսակիցն *) էր գալիս։ Մի հոտ, որ կարծես սեղանատան մի կողքին գաթա են թխում, իսկ միւս կողքին—լուացք անում։ Պուդդինգն էր։ Կէս բոպէից ներս մտաւ տիկ. Կռեչիտը, շիկնած, սակայն հպարտ ժպիտն երեսին, բերաւ պուդդինգը, Թնդանօթի գնդի նման ամուր ու պինդ, կէս-բոցավառ (մի քիչ խաղողի օղի էր ածել վրէն ու կպցրել), ուռնածառի ճիւղով զարդարած։

Օ՜, հրաշալի՜ պուդդինգ։ Բոբ Կռեչիտը լրջօրէն ասաց, որ տիկ. Կռեչիտը, իր ամուսնութեան օրից, երբէք այսպիսի յաջող բան չի շինել։ Տիկ. Կռեչիտն ասաց, թէ այժմ նրա սիրտը ճնշող բեռը վերացաւ վերջապէս, որովհետև, խոստովանք լինի, նա կասկած ունէր պուդդինգի յատկութեան վրայ ալիւրի պակասութեան պատճառով։ Ամենքն էլ մի բան ասացին, բայց ոչոք չասաց, կամ չմտածեց, թէ այդ պուդդինգը չափազանց քիչ է մի այդպիսի մեծ ընտանիքի համար։ Այդպիսի մի միտք կատարեալ հերետիկոսութիւն կը լինէր և Կռեչիտներից ամենամէկը կը շիկնէր այդպիսի մտքից։

Վերջապէս ճաշը վերջացաւ, սփռոցն հաւաքուեց, վառարանը մաքրուեց ու կրկին վառուեց։ Բոբի պատրաստած ըմպելիքի համը տեսնուեցաւ. շատ լաւն էր։ Սեղանի վրայ խնձոր ու նարինջ դրուեց և մի թիակ լիքը կաղին (մաշկամիրգ) ածուեց վառարանը։ Ապա Կռեչիտների ամբողջ ընտանիքը բազմեց կլոր կրակի շուրջը, երկու բաժակ ու մի անկոթ թաս, որ ընտանիքի ունեցած-չունեցած ապակեղէնն էր, ի ցոյց դրուեց Բոբի կողքին։

Տաք-տաք ըմպելիքը այդ ամաններն ածելիս այնպէս էին փայլփլում Բոբի աչքերը, կարծես ոսկէ գաւաթներ լինէին նրա առաջին։ Իսկ մաշկամիրգը ճռթճռթում ու տրաքռտում էր կրակի մէջ։ Բոբը բաժակն առաւ և առաջարկեց։

—«Ուրախ Ծնունդ ամենքիս, սիրելիներս, Աստուած օրհնի մեզ»։

Ամբողջ ընտանիքը արձագանգ տուեց։

—«Աստուած օրհնի ամենամէկիս», ասաց Տայնը Տիմը ամենքից վերջը։

Իր փոքրիկ աթոռի վրայ նա նստած էր հօր կողքին։ Բոբը ձեռքիցը բաց չէր թողնում նրա փոքրիկ չոր ձեռքը, կարծես ուզում լինէր ասել, թէ սիրում է իր զաւակին ու ցանկանում է նրան միշտ իր կողքին պահել և երկիւղ է կրում, թէ մի՞ գուցէ խլեն իրանից։

—«Ոգի», ասաց Սկռուջը կարեկցութեամբ, որ առաջ անծանօթ էր իրան. «ասա ինձ, կ'ապրի արդեօք Տայնը Տիմը, թէ ոչ»։

—«Մի դատարկ աթոռ եմ տեսնում աղքատիկ վառարանի մօտ և խնամքով պահուող մի անտէր ցուպ», պատասխանեց Ոգին, «եթէ այդ ուրուականները չփոխուեն ապագայում, ապրելու պիտի մեռնի»։

—«Ո՛չ, ո՛չ», ասաց Սկռուջը։ «Օ՜հ, ոչ, բարի Ոգի, խնայի՛ր նրան»։

—«Եթէ այս ուրուականները անփոփոխ թողնի գալիք Ծննդեան Ոգին, իմ ցեղիցս ոչոք այլևս չի տեսնի նրան», պատասխանեց Ոգին։ «Բայց դէ՞ ի՞նչ մեծ բան, մեռնում է, թող մեռնի ու պակսեցնի աւելորդ ազգաբնակութեան թիւը»։

Սկռուջը, լսելով իր սեփական խօսքերը Ոգու բերանից, գլուխը քաշ գցեց, խղճի խայթ զգալով։

—«Մարդ», ասաց Ոգին, «եթէ մի կտոր քար չի սրտիդ տեղումը, այլևս չկրկնես այդ անսիրտ, անհոգի խօսքերը, քանի որ չգիտես, թէ ո՞վ է աւելնորդը և ո՞ւր է նա։ Դու՞ պիտի վճռես, թէ ով պիտի ապրի և ո՞վ մեռնի։ Գուցէ Ամենաբարձրեալի տեսակէտից միլիոնաւոր այսպիսի խեղճ մարդկանց որդիք քեզնից աւելի արժանաւոր են և կեանքի արժանի։ Տէր Աստուած, տերևի վրայի մէջատը ահի է դատապարտում փոշու մէջ ապրող իր քաղցած եղբայրներին»...

Ոգու նկատողութիւնից Սկռուջը կախ գցեց գլուխը և դողալով չէր համարձակւում բարձրացնել, բայց յանկարծ իր անունը լսելով, աչքերը բարձրացրեց։

—«Պ. Սկռուջի կենացը», ասաց Բոբը. «առաջարկում եմ պ. Սկռուջի կենացը, որ միջոց է տալիս մեզ այս խնջոյքը վայելելու»։

—«Ի՞նչպէս չէ, ինչպէս չէ», գոչեց տիկ. Կռեչիտը կարմրելով։ «Երանի այստեղ լինէր։ Մի լաւ ձեռքովս կը տայի. սրտումս հաւաքուածը մի լաւ կ'ուտեցնէի»։

—«Սիրելիս», ասաց Բոբը, «երեխայոց ներկայութեամբ... և Ծննդեան օրը...

—«Անկասկած», ասաց տիկինը, «միայն Ծննդեան օրն է, որ մարդ խմում է պ. Սկռուջի նման մի հրէշաւոր, ժլատ, ան-

*) Պուդդինգը քսակի մէջ է եփում։

սիրտ, անհոգի մարդու կենացը։ Դու հո լաւ ես ճանաչում նը-
րան, Ռոբերտ։ Ոչոք քեզ պէս չի ճանաչում նրան, խեղճ
մարդ»։

—«Սիրելիս», պատասխանեց Բոբը մեղմութեամբ, «Ծնունդ
օրը»...

—«Խմում եմ նրա կենացը քո խաթրիդ ու այս օրուայ
պատճառով», ասաց տիկ. Կռեչիտը, «և ոչ թէ նրա խաթրին։
Աստուած կեանք տայ նրան։ Ուրախ Ծնունդ ու բախտաւոր
նոր տարի նրան։ Անկասկած նա ուրախ ու բախտաւոր է...
շատ»...

Ապա խմեցին նոյն կենացը երեխայքը։ Այդ առաջին բա-
նը էր, որ առանց զգացմունքի էին կատարում։ Տայնը Տիմը
ամենից վերջը խմեց, մի քոռ-կոպէկի արժէք չտալով նոյնիսկ։
Սկռուջը այդ ընտանիքի հրէշն էր, որի անուան յիշատակու-
թիւնը մայլ ամպով պատեց ամենքին և ամբողջ հինգ րոպէ չէր
ցրւում։

Յետոյ կրկին նրանց քէֆը տեղն եկաւ և ուրախութիւնը
տանապատկուեց։ Բոբ Կռեչիտը պատմեց, որ Պետրոսի հա-
մար մի պաշտօն ունի աչքի առաջ, որ եթէ աջողուի, շաբթե-
կան հինգ շիլլինգ ու վեց պենս ռոճիկ կ'ունենայ։ Երկու փոք-
րիկները ծիծաղից պայթում էին, Պետրոսին պաշտօնում երե-
ւակայելով. իսկ ինքը Պետրոսը մաքամոլոր կրակին էր նայում
իր օձիքի միջից, կարծես շուարած, թէ ինչ կերպով պիտի
շահեցնէր այդ ահագին եկամուտը։ Մարթան, որ մի կար ա-
նող կնոջ մօտ աշակերտուհի էր, պատմեց, թէ ինչեր էր կա-
րել, քանի՞ ժամ էր աշխատում, առանց գլուխը բարձրացնելու,
և թէ որքան ուշ է վեր կենալու վաղն առաւօտ անկողնից ու
հանգստանալու է մի լաւ. տօնի պատճառով վաղը տանն էր
մնալու։ Նոյնպէս, թէ միքանի օր առաջ նա մի կոմսուհի ու
մի լորդ էր տեսել, որ համարեա «Պետրոսի բոյին» էր, այս
խօսքերի վրէն Պետրոսը այնքան վեր քաշեց իր օձիքը, որ՝
եթէ այնտեղ լինէիք, այլ ևս չէիք կարող տեսնել նրա գլուխը։
Իսկ մաշկամիրգն ու թասը շրջան էին անում ձեռքից ձեռք, և
Տայնը Տիմը երբեմնակի երգում էր ձիւնի մէջ կորած մի թա-
փառական երեխայի մասին, թէպէտ և թոյլ ու մղկտան ձայ-
նով, սակայն շատ լաւ էր երգում։ Աչքի ընկնող բան չկար այս-
տեղ, ոչ էլ ընտանիքն էր մի փայլուն ընտանիք։ Լաւ հագ-
նուած չէր կարելի անուանել դրանց. կօշիկները կարկատուած,
հանդերձները մաշած, իսկ Պետրոսը երևի անծանօթ չէր «գրաւ
դնելու» ձեռնարկութիւններին։ Սակայն դրանք բախտաւոր ու
գոհունակ էին, սիրում էին իրար ու յարմարւում հանգամանք-



ներին։ Իսկ մեկնելու բոպէին Սկռուջին աւելի ևս բախտաւոր
թուաց Ոգու կերոնով լուսաւորուած ընտանիքը. նա մինչև վեր-
ջը զմայլում էր նրանցով, մանաւանդ Տայնը Տիմով։

Մինչ այս մինչ այն, խաւարը խտացաւ և ձիւնը սաստ-
կացաւ. մինչդեռ Սկռուջն ու Ոգին ընթանում էին փողոցով,
խոհանոցներում ճռթճռթացող կրակը, հիւրանոցների ու միւս
սենեակների լոյսը—հրաշալի էր։ Մի տեղ երերուն բոցը լուսա-
ւորում էր ախորժելի ճաշի պատրաստութիւնները, թէ ինչպէս էին
կրակի առաջ տաքացնում պնակները, իսկ կարմիր, ծանր վարա-
գոյրները պատրաստւում էին ընկնելու ու սենեակն ապահովե-
լու դրսի ցրտից ու խաւարից։ Մի ուրիշ տեղ տան բոլոր մա-
նուկները դուրս էին թափւում ձիւնի տակ, իրանց ամուսնա-
ցած քոյրերին, եղբայրներին, հօրեղբայրներին, մօրեղբայրնե-
րին, հօրաքոյրերին և այլ ազգականներին՝ առաջինը դիմաւո-
րելու։ Մի տեղ, կրկին, հաւաքուած հիւրերի ուրուականներն
էին նկարւում պատուհանների վարագոյրների վրայ, մի ուրիշ
տեղ մի խումբ սիրուն աղջկերք տաք հագնուած, ամենքը
միասին չռթվռթալով ու թռվռալով հարևանի տունն էին անցը-
նում. և վայ ամուրի մարդուն, որ կը պատահէր այդ կարմրա-
թշիկ չարաճճի հրեշտակներին։

Բարեկամների տներ գնացող այս բազմաթիւ խմբերը
տեսնելով—մարդ կարծում է, թէ տներում այլևս մարդ չի լի-
նելու մնացած, որ այս եկող հիւրերին բարի գալուստ մաղթի,
մինչդեռ ամենամի տան բոցկլտող վառարանի մօտ շրջան կազմած
սպասում էին հիւրերին։ Օրհնեալ լինին. ինչ բերկրանք էին
պատճառում Ոգուն. նա, կուրծքը բաց, սաւառնում էր բազ-
կատարած, և մեծահոգաբար տարածում հզօր ձեռքով իր լոյսն
ու անմեղ ուրախութիւնը ամենուրեք։ Մինչև անգամ փողոց-
ների լապտերները վառողը, որ առաջ էր վազում, մութ փողո-
ցը զարդարելով լոյսի բծերով և զուգուած էր ու երևի հիւր
էր գնալու այս երեկոյ. Ոգուն հանդիպելով՝ բարձրաձայն ծի-
ծաղեց, թէպէտ զգում էր, որ բացի Ծննդից, ուրիշ ընկեր
չունի։

Եւ յանկարծ՝ առանց նախազգուշացնելու նոյնիսկ մի
խօսքով՝ Ոգին կանգ առաւ մի մռայլ ու անապատ ճահճի մէջ,
որ լիքն էր անտաշ քարերի հրէշաւոր կաղնիներով, կարծես
հսկաների գերեզմանատուն լինէր, և ջուրը հոսում էր իր ու-
զած տեղից կամ, եթէ որևէ տեղից չէր հոսում, սառնամանիքն
էր պատճառը, որ սառցրել, կաշկանդել էր նրան։ Եւ բացի
մամռից, տատասկից և վայրի խոտից՝ ոչինչ չէր բանում այդ-
տեղ։ Արևմուտքում՝ արևի մայր մտած տեղը՝ մի կաս-կար-

մեր շերտ էր մնացել, որ այդ ամայութեան վրայ բոպէական պայծառ հայեացք գցեց, ապա՝ հետզհետէ մռայլելով, կորաւ խաւարչային գիշերուայ մթութեան մէջ։

—«Այս ի՞նչ տեղ է», հարցրեց Սկռուջը։

—«Այստեղ են ապրում այն բանուորները, որոնք աշխատում են ստորերկրեայ հանքերում», պատասխանեց Ոգին։ «Սակայն, տես, սրանք էլ են ճանաչում ինձ»։

Մի խրճթի պատուհանից լոյս երևաց և նրանք շտապով դէպի լոյսը դիմեցին։ Քար ու ցեխից շինած մի պատի միջով անցնելով, նրանք մի ուրախ խումբ գտան բոցկլտացող կրակի շուրջը հաւաքուած։ Մի զառամեալ ծերունի ու մի պառաւ, իրանց որդոց, թոռների ու ծոռնիկների հետ բոլորն էլ զարդարուած իրանց ամենալաւ տօնական զարդերով։ Ծերուկը, որի ձայնը լսւում էր յաճախ քամու շառաչից այս ամայի անապատում, Ծննդեան երգ էր երգում իր թոռնիկների համար։ Հինաւուրց երգ էր դա, մանկութիւնից սովորած և ամբողջ խումբը արձագանգ էր տալիս տեղ-տեղ խմբովին։ Հէնց որ թնդում էր խմբի ձայնը, ծերուկը ոգևորւում էր ու բարձրացնում ձայնը, և հէնց որ խումբը լռում էր, նրա ձայնն էլ էր մարում։

Ոգին այդտեղ մնացողը չէր. նա պատուիրեց Սկռուջին բռնել իր փէշը և պատի միջից անցնելով դիմեց—բայց ո՞ւր։ Ծովը չէ՞ր, արդեօք։ Հէնց այդ էր։. Յետ նայելով, Սկռուջը զարհուրեց. ցամաքը վերջանում էր մի շարք սարսափելի ժայռերով, որ իրանց քամակն էր մնացել։ Ալիքների որոտը խլացնում էր նրա ականջները. ծովը գոռում, ալեկոծում, փոթորկում էր իր յորձանքներով փորոտած զարհուրելի այրերի մէջ և աշխատում էր տակնուվրայ անել երկիրը։

Ծովափից մի քանի մղոն հեռու, մի ցած ու ամայի ժայռի վրայ, որ տարին տասներկու ամիս հեղհեղւում էր ալիքներով,—մի մենաւոր փարոս կար։ Նրա հիմքը ծածկուած էր ծովախոտի խուրձերով, իսկ ծովային թռչունները (կարծես հողմի ծնունդ, ինչպէս որ ծովախոտը ջրի ծնունդ է) վերուվար էին անում ալիքների նման, որոնց փրփուրն էին ուզում քաշել, կարծես, իրանց թևերով։

Եւ նոյնիսկ այստեղ, փարոսին հսկող երկու պահապանը կրակ էին արել, որ հաստ պատի լուսամտից գցում էր իր փայլը ահռելի ծովի վրայ։ Մէկը մի լուսի կոշտ ձեռքը սեղմելով անտաշ սեղանի վրայ նրանք ուրախ Ծնունդ մաղթեցին միմեանց մի թաս արաղով և նրանց մէջ տարիքով մեծը, որի դէմքը հին նաւի գլուխը զարդարող փայտաշէն դէմքի նման



պլոկուած ու մաշուած էր եղանակի խստութիւնից, մի կոպիտ երգ սկսեց, որ մի ներքին փոթորիկ էր կարծես։

Կրկին Ոգին սլացաւ խաւար ու փոթորկալից ծովի վրայ հեռու-հեռու, ինչպէս ասաց Սկռուջին, շատ հեռու որևէ ցամաքից և նրանք կանգ առան մի նաւի վրայ։ Մօտեցան նաւաստիներին ու տանտպետներին. կարծես մռայլ ուրուականներ լինէին ամենամէկը իր տեղում. բայց նրանցից ամենամէկը մի Ծննդեան երգի եղանակ էր մռմռում, կամ միտք էր անում Ծննդեան մասին, կամ անցած-գնացած Ծննդեան տօնի մասին մի պատմութիւն էր փսփսում իր ընկերոջը, իսկ ուշ ու միտքը իրա օջաղումն էր։ Եւ նաւի վրայ ամեն մարդ՝ քնած թէ արթուն, բարի թէ չար, աւելի այս օրը, քան թէ տարուայ որևիցէ օր, մի բարի խօսք էր գտնում ուրիշի համար. և ամեն մէկը ըստ կարելւոյն տօնում էր այդ օրը. յիշում էր հեռում գտնուող սիրելիներին և գիտէր, որ նրանք էլ իրան են յիշում սիրով։

Սկռուջը ականջ էր դնում քամու շառաչին և մտածում էր, թէ որչափ հանդիսաւոր բան է եղել սլանալ անապատ մըթութեան մէջ անյայտ անդունդների վրայ, որոնք Մահի չափ խորհրդաւոր ու խորն են. և որքան մեծ էր նրա զարմանքը, երբ յանկարծ մի կուշտ ծիծաղի ձայն հասաւ նրա ականջին։ Նրա զարմանքը աւելի ևս սաստկացաւ, երբ նա ճանաչեց, որ այդ իր քրոջ որդու ծիծաղն էր, իսկ ինքն էլ գտնուում է մի լուսաւոր, չոր, ուրախ սենեակում, Ոգին էլ իրա կողքին ժըպտերես նայում է այդ քրոջ որդուն խրախուսիչ փաղաքշանքով։

—«Հա, հա», ծիծաղում էր Սկռուջի քրոջ որդին. «հա, հա, հա...»

Եթէ բախտի բերմամբ դուք մի որևէ տեղ պատահած կաք մէկին, որ Սկռուջի քրոջ որդուց աւելի կուշտ ծիծաղ ունի, կարող եմ ասել, որ կ'ուզենայի տեսնել այդ մարդուն։ Ծանօթացրէք ինձ նրա հետ, որ նրա ամենալաւ բարեկամը դառնամ։

Աշխարհիս սիրուն ու ազնիւ կարգերից մէկն էլ այն է, որ եթէ ցաւն ու վիշտը վարակիչ են, աւելի ևս անդիմադրելի վարակիչ են ծիծաղն ու ուրախութիւնը։ Մինչդեռ Սկռուջի քրոջ որդին թուլանում էր ծիծաղից, կողքերը բռնում, գլուխը պտտացնում ու երեսը ծռմռում ամենաօտարոտի ձևերով,—նրա կինն էլ էր ծիծաղում ամուսնու նման կուշտ-կուշտ։ Նրանց մօտ հաւաքուած բարեկամներն էլ յետ չէին մնում ու հռհռում էին բարձրաձայն։

—«Հա, հա։ Հա, հա, հա»։

—«Նա ասաց, թէ դատարկ բան է Ծնունդը. իմ արևս», գոչեց Սկռուջի քրոջ որդին։ «Եւ դեռ հաստատած էլ է...»

—«Մեծ ամօթ նրան, Ֆռեդ», ասաց կինը վրդովուած։ Օրհնեալ լինին կանայք. նրանք երբէք կիսատ բան չեն անում։ Ամէն բան ծայրայեղութեան են հասցնում։

Տիկինը շատ սիրուն էր. անչափ սիրուն... Հրաշալի դէմքի արտայայտութիւնը—մի քիչ, կարծես, զարմացած, թշերին—փոսիկներ, փոքրիկ, վարդագոյն բերանը, որ կարծես համբոյրների համար էր ստեղծուած, անկասկած քիչ չէր համբուրուում. զանազան սիրուն փոքրիկ փոսիկներ նրա ծնօտի վրայ, որ ծիծաղելիս խառնուում էին իրար. և մի զոյգ արեգակնափայլ աչք, որոնց նմանը, երևի, երբէք չէք տեսել մի ուրիշ սիրուն գլխի վրայ։ Առհասարակ մի հրապուրիչ և սակայն հանգստացնող արարած։ Օ՜հ, կատարելապէս հանգստացնող։

—«Բանն այն է, որ մի զարմանալի ծերուկ է նա», ասաց Սկռուջի քրոջ որդին. «և այդպիսով ընկնում է ամենքի աչքից։ Այնուամենայնիւ նրա վատութիւնը աւելի իրան է մնում և ես սրտումս ոչինչ չունեմ նրա դէմ»։

—«Հաւատացած եմ, որ շատ հարուստն է», ընդհատեց կինը։ «Գոնէ դու մեզ այդպէս ես ասում»։

—«Որ ի՞նչ, սիրելիս», ասաց Սկռուջի քրոջ որդին։ «Նա ոչ մի օգուտ չի քաղում իրա հարստութիւնից։ Ո՛չ մի բարի գործ չի անում։ Նոյնիսկ սեփական անձի յարմարութիւններին չի ծառայեցնում։ Նոյնիսկ այդ հարստութիւնը մի օր մ՚ուզ թողնելու միտքը - հա, հա, հա—չի մխիթարում նրան»։

—«Համբերութիւն չունեմ», նկատեց Սկռուջի քրոջ որդու կինը։ Վերջինիս քայլերը և ուրիշ տիկիններին նոյն կարծիքը յայտնեցին։

—«Օ՜հ, իսկ ես ունեմ», ասաց Սկռուջի քրոջ որդին։ «Ես վշտանում եմ նրա համար և չեմ կարողանալ նրանից, եթէ ուզենամ էլ։ Ո՞վ է նրա ընութիւնից վնասուողը։—Ինքը, միշտ ինքը։ Օրինակ, նա մոցրել է իրա գլուխը՝ չսիրել մեզ և չի գալիս մեզ հետ ճաշելու։ Հետևանքը։ Հէնց ինքն է զրկուում այսպիսի ճաշից»։

—«Իսկապէս ես կարծում եմ, որ նա մի շատ լաւ ճաշից է զրկուում», ընդհատեց կինը։ Ամենքն էլ նոյնը կրկնեցին, որովհետև հէնց նոր էին վերջացրել ճաշը և ճրագը վառած, խմբուել էին վառարանի ժամ, քաղցրեղէնի սեղանի շուրջը։

—«Լաւ, շատ ուրախ եմ», ասաց Սկռուջի քրոջ որդին,



«որովհետև ես շատ էլ բարձր կարծիք չունեմ այս ջահիլ տընտեսուհիների մասին։ Դո՞ւք ինչպէս, Տոպեռ»։

Տոպեռը, որ աչքը գցել էր Սկռուջի քրոջ որդու քենիներից մէկի վրայ, պատասխանեց, թէ ամուրի մարդը մի այսպիսի թշուառական է, որ իրաւունք չունի այդ հարցի մասին կարծիք յայտնելու։ Այդ խօսքերի վրայ քենիներից մէկը (այն փափլիկը, օձիքը ժանեակներով զարդարածը և ոչ այն, որ վարդերով էր զարդարած) շրկնեց։

—«Շարունակիր, Ֆռեդ», ասաց կինը ծափահարելով։ «Զարմանալի մարդ, երբէք չի վերջացնում սկսած խօսքը»։

Սկռուջի քրոջ որդու ծիծաղը կրկին բռնեց, և որովհետև անհնար էր զերծ մնալ նրա վարակիչ ազդեցութիւնից, թէպէտ փափլիկ քենին շատ էր աշխատում հոտաւէտ քացախով զսպել իրան, ամենքն էլ հետևեցին նրա օրինակին։

—«Ուզում էի ասել», ասաց Սկռուջի քրոջ որդին, որ նրա մեզ հետ չհաշտուելու հետևանքը այն է, ինչպէս ես կարծում եմ, որ զրկուում է միքանի բոպէ մեզ հետ զուարճանալուց, որից նա երբէք վնաս չէր քաշի։ Հաւատացած եմ, որ իր մրոայլ մտքերից, խոնաւ գրասենեակից, փոշոտ սենեակից աւելի դուրեկան ընկերներ կը գտնէր այստեղ։ Ես մտադիր եմ ամեն տարի հրաւիրել նրան, որովհետև խղճում եմ նրան. իսկ դալն ու չգալը իրա բանն է։ Թող մինչև իր մահը հայհոյի նա ինձ Ծնունդ օրը, բայց հօ նա չի կարող ասել, թէ լաւ բանի է։ Ես չեմ վախենում և տարէցտարի, լաւ տրամադրութեամբ գնալու եմ ժամն ու ասելու. «Ի՞նչպէս ես, քեռի Սկռուջ»։ Եթէ երբևիցէ այդպիսով նրա տրամադրութիւնը փոխուի և նա տասնևհինգ ֆունտ աւելացնի իր գրագրի ռոճկի վրայ,—այդ էլ մի բան է, և կարծում եմ որ երևի ազդեցի նրա վրայ»։

Այժմ միւսների հերթն էր ծիծաղելու նրա վրայ, որ խօսում էր Սկռուջի վրայ «ազդելու» մասին։ Բայց՝ ի ընէ բարեբարոյ լինելով և շատ էլ ուշադրութիւն չդարձնելով թէ ինչի վրայ են ծիծաղում, որովհետև առհասարակ ամեն բանի վրայ ծիծաղում էին, նա խրախուսում էր նրանց ուրախութիւնը, խմիչքի շիշը առաջարկելով հիւրերին ուրախ-ուրախ։

Թէյից յետոյ մի քիչ երաժշտութեամբ զբաղուեցին։ Երաժշտասէր ընտանիք էր, որ վարժ էր թէ խմբական ուրախ և թէ եկեղեցական երգեր երգելում։ Կարող եմ հաւատացնել ձեզ. մանաւանդ Տոպեռը, որ շատ բարձ ձայն ունէր, սակայն ոչ նրա ճակատի երակներն էին ուռում և ոչ էլ երեսն էր կարմրում։ Սկռուջի քրոջ որդու կինը լաւ տաւիղ էր ածում. իսիլի այլոց նա նուագեց մի եղանակ էլ (մի դատարկ բան, որ երկու բոպէում կա-

բող էք սովորել ու սուլել)։ Անցեալ Ծննդեան Ոգին յիշեցրեց Սկռուջին որ այդ այն երեխայի սիրած եղանակն է, որին ուղարկում էին փոքրիկ Սկռուջին գիշերօթիկ ուսումնարանից տուն բերելու։ Երբ որ այդ եղանակը հնչեց, Սկռուջը յիշեց Ոգու ցոյց տուած անցեալը, նա աւելի կակղեց ու մտածեց, որ եթէ յաճախ լինէր լսած այդ եղանակը տարիներ առաջ, նա իր բարի կենցաղով կարող էր բախտաւորուած լինել իր սեփական ձեռքով և կարիք չէր ունենալ հանգուցեալ Յակոբ Մարլէյին գերեզմանից դուրս բերելու։

Սակայն ամբողջ երեկոն երաժշտութեան չնուիրեցին։ Մի քիչ յետոյ նրանք սկսեցին ֆանտ խաղալ. և լաւ բան է երբեմն երեխայութիւն անելը նամանաւանդ Ծննդեան ոտնին, որ յիշեցնում է Մեծ-Մանկան երեխայութիւնը։ Ներողութիւն. առաջ սկսեցին աչքակապուկի խաղալ։ Այո, աչքակապուկի։ Բայց Տոպեռի աչքերի կապ լինելուն ես նոյնքան կը հաւատամ, որքան դուք կը հաւատաք՝ թէ նրա աչքերը կօշիկների մէջն էին։ Իմ կարծիքով Սկռուջի քրոջ որդու հետ նախօրօք պայմանաւորուած էր և Ներկայ Ծննդեան Ոգուն անյայտ չէր այդ խորամանկութիւնը։ Ժանեակաւոր շալով չաղլիկ քենուն յետամուտ լինելու ձևը—մարդկային դիւրահաւատութեան կատարեալ անարգանք էր։ Ոտնատակ տալով կրակի ունելիքները, աթոռների վրայով թռչկոտելով, ընդհարուելով դաշնամուրին, վարագոյրների մէջ շփոթուելով, նա ամէն տեղ հետևում էր օրիորդին։ Նա միշտ գիտէր թէ ո՞րտեղ է չաղլիկ քենին և ուրիշ ոչոքի չէր ուզում բռնել։ Ոմանք զիտմամբ ընկնում էին նրա գիրկը, իսկ նա ձևացնում էր, թէ աշխատում է դրանց բռնել. սակայն պարզապէս ամենքից խուսափելով, իսկոյնևեթ չաղլիկ քենու յետևից էր ընկնում։ Օրիորդը յաճախ բողոքում էր և արդարացի, որովհետև այդ չի ազնիւ խաղի կարգը։ Որքան էլ աշխատում էր օրիորդը աննկատելի սլլուել, այնուամենայնիւ վերջապէս բռնուեց։ Տոպեռը նրան մի այնպիսի անկիւն դցեց, որ այլևս ոչ մի ելք չկար. այդտեղ դատապարտելի էր Տոպեռի վարմունքը։ Նրա պատճառաբանութիւնը, թէ իբր չի ճանաչում, թէ իբր պիտի շօշափի նրա գլուխը, և իբր թէ հաստատապէս որոշելու համար թէ ո՞վ է բռնուածը, նա պիտի շօշափի նրա որոշ մասի մատանին ու նրա պարանոցի մանեակը, —այս բոլոր խորամանկութիւնները հրէշաւոր ստորութիւններ էին։ Անկասկած օրիորդը յայտնեց իր կարծիքը դրա մասին, երբ արդէն մի ուրիշն էր հրապարակ եկել աչքերը կապ, իսկ այս զոյգը վարագոյրների քամակին զրոյց էր անում առանձնացած։



Սկռուջի քրոջ հարսը չէր մասնակցում աչքակապուկի խաղին. նա նստած էր մի ընդարձակ բազկաթոռի մէջ, մի մենաւոր անկիւնում, ուր որ կանգնած էր Սկռուջն էլ Ոգու հետ միասին։ Բայց ֆանտախաղին մասնակցեց և սիրախաղի մէջ այբուբենի ամենմի տառով սկսուող՝ յարմար խօսք գտնելու վարժութեամբ—ամենքին զարմացրեց։ Նոյնպէս «Ի՞նչ, ո՞ւր և ի՞նչպէս» խաղում նա շատ զուարթ էր և Սկռուջի քրոջ որդուն մեծ զուարճութիւն էր պատճառում, իր քոյրերին գերազանցելով. թէպէտ նրանք էլ պակասը չէին, եթէ Տոպեռին հարցընէինք։ Այդտեղ մօտ քսան մարդ կը լինէր ջահիլ ու ծեր և ամենքն էլ խաղում էին. Սկռուջն էլ մեծ հետաքրքրութեամբ մասնակցում էր խաղին, մոռանալով որ նրա ձայնը չէր հասնում նրանց ականջին, նա շատ անգամ բարձրաձայն արտասանում էր գտած խօսքը և յաճախ ճիշտ էր լինում նրա գըտածը, որովհետև ամենասուր փշից էլ սուրն էր Սկռուջի միտքը, թէպէտ զինքը բթամտութեան էր տուել։

Ոգին գոհ էր Սկռուջի տրամադրութիւնից և այնպիսի սիրով էր նայում նրան, որ վերջինս երեխայի նման սկսեց թոյլատրութիւն խնդրել՝ մնալ մինչև հիւրերի մեկնելը։ Բայց Ոգին չէր համաձայնւում։

—«Էլի մի խաղ». ասաց Սկռուջը. «մի կէս ժամ, Ոգի, կէս ժամ միայն»։ «Այո ու ոչ» անուանուած խաղն էր. Սկռուջի քրոջ որդին մի որևէ բան էր մտածում, իսկ մնացեալը աշխարհում էին գտնել. բոլոր հարցերին նա միայն «այո» կամ «ոչ» էր պատասխանում ըստ հանգամանքի։ Հարցերի անընդհատ տարափի ենթարկելով, խոստովանեցրին նրան, որ մի կենդանու մասին է մտածում. մի անախորժ, վայրենի կենդանու, որ երբեմն մրթմրթում է, երբեմն խօսում. ապրում է Լոնդոնում, մեն է գալիս փողոցներում, նրան մեն չեն ածում ցոյց տալու համար. նա գազանանոցում չի ապրում. մորթելու ու միսը ծախելու բան չի. ոչ ձի է, ոչ էշ, ոչ կով, ոչ գոմէշ, ոչ վագր, ոչ շուն, ոչ խոզ, ոչ կատու, ոչ արջ։ Ամեն նոր հարցի վրայ, նորից բռնում էր նրա ծիծաղը. վերջապէս այնպէս թուլացաւ ծիծաղից, որ, տեղիցը վերկենալով սկսեց ոտները թափահարել։

Վերջապէս չաղլիկ քենին էլ ծիծաղից թուլանալով, գոչեց.

—«Գտել եմ, գիտեմ ով է այդ, Ֆրեդ, գիտեմ ով է»։

—«Ո՞վ է, ասա», գոչեց Ֆրեդը։

—«Բեռիդ, Սկռուջը»։

Հէնց այդ էր իսկապէս։ Ամենքը հիացած էին, թէպէտ ոմանք նկատեցին, թէ երբ հարց տուին, թէ «արջ հ՞ չի»,

հարկաւոր էր պատասխանել «այո». բացասական պատասխանը նրանց ուշադրութիւնը հեռացնում էր պ. Սկռուջից, մինչդեռ նրանք քանիցս մտածել են նրա մասին։

—«Անչափ զուարճութիւն պատճառեց նա մեզ», ասաց Ֆռեդը», երախտաժողութիւն կը լինի նրա կենացը չխմելը։ Ահա մի շիշ պատրաստ գլինովէյն և ես առաջարկում եմ քեռի Սկռուջի կենացը»։

—«Լաւ, քեռի Սկռուջի կենացը», գոչեցին նրանք։

—«Ուրախ Ծնունդ ու բարի կաղանդ եմ ցանկանում ծերուկին, ինչևիցէ», ասաց Սկռուջի քրոջ որդին։ «Նա չկամեցաւ այդ շնորհաւորութիւնները ընդունել ինձանից, այնուամենայնիւ ես բարեմաղթում եմ։ Իմ քեռի Սկռուջի կենացը»։

Քեռի Սկռուջի սիրտը աննկատելի կերպով լցուեց ուրախութեամբ և հաճոյքով. եթէ Ոգին ժամանակ տար նրան, նա ցանկութիւն ունէր իր կողմից պատասխանել մի քանի ջերմ խօսքով, թէկուզ ոչ տեսնող և ոչ լսող կար նրան։ Բայց մի ակընթարթում տեսարանը փոխուեց, հէնց որ նրա քրոջ որդին արտասանեց իր վերջին խօսքը. իսկ նա Ոգու հետ կրկին սլացաւ։

Շատ բան տեսան, հեռաւոր տեղեր ու բազմաթիւ մարդկանց այցելեցին և ամեն տեղից գոհ սրտով մեկնեցին։ Ոգին կանգ էր առնում հիւանդ մարդկանց անկողինների մօտ և նրանք ուրախանում էին, զարիբները իրանց հայրենիքի կարօտն էին առնում, նեղութեան մէջ տառապողներին—յոյս էր ներշնչում, աղքատները—իրանց հարուստ էին զգում։ Անկեւանոցներում, հիւանդանոցներում, բանտերում, ամեն տեսակ թշուառութիւնների ապաստաններում՝ ուր որ ունայնամիտ մարդը իր անցաւոր իշխանութեամբ դուռը չէր փակել Ոգու վրայ, սա տանում էր իր օրհնութիւնը և Սկռուջին իր պատուիրաններն էր ուսուցանում։

Երկար գիշեր էր, եթէ միայն գիշեր էր այդ. բայց Սկռուջը կասկածում էր, որովհետև նրան թւում էր, թէ բոլոր Ծննդեան տօնները խառնել են այն ժամանակամիջոցի մէջ, որ նա անցրել էր Ոգու հետ։ Եւ, զարմանք բան. մինչդեռ Սկռուջը նոյնն էր մնացել, անփոփոխ այդ ժամանակամիջոցում, Ոգին մեծացել ու ակներև ծերացել էր։ Սկռուջը նկատել էր այդ փոփոխութիւնը, բայց խօսք չէր ասել դրա մասին մինչև մի մանկական խաղից մեկնելը, երբ մի բաց տեղ, աչք գցելով Ոգու վրայ, նկատեց, որ նրա մազերը ճերմակել են։

—«Մի՞թէ այդքան կարճ է Ոգիների կեանքը», հարցրեց Սկռուջը։



—«Իմ կեանքս երկրագնդի վրայ շատ կարճ է», պատասխանեց Ոգին, հէնց այս գիշեր խզուելու է նրա թելը»։

—«Ա՞յս գիշեր», գոչեց Սկռուջը։

—«Հէնց այս գիշերուայ կիսին։ Այո, և մօտ է ժամը»։

Հէնց այդ բոպէին ժամացոյցի զանգը խփեց երեք քառորդ տասնումէկից անց։

—«Ներիր համարձակութեանս», ասաց Սկռուջը, ուշադրութեամբ նայելով Ոգու շորին, «բայց ես մի օտարոտի և քեզ չպատկանող բան եմ նկատում փեշիդ տակից։ Ո՞տ է դա արդեօք, թէ թաթ»։

—«Վրայի մսին նայած, կարող էր դա մի թաթ լինել», տխրութեամբ պատասխանեց Ոգին։ «Նայիր»։

Փեշքի տակից նա երկու մանուկ հանեց. ողորմելի, զզուելի, հրէշաւոր, սարսափելի։ Նրանք ընկան Ոգու ոտների մօտ և կախուեցին նրա փեշքերից։

—«Նայիր, օ մարդ։ Նայիր, նայիր ցած», գոչեց Ոգին։

Տղայ ու աղջիկ էին։ Դեղնած, նիհար, ցնցոտիներում կորած, մռայլ, քաղցած ու ստորութեան չափ խոնարհ։ Ուր որ գեղածիծաղ մատաղ հասակը պիտի փայփայուած լինէր նրանց դիմագծերը և ներկած իր թարմ գոյներով, մի չոր ու կոպիտ ձեռք (կարծես ծերութեանը) կնճռոտել, ճմլել ու խեղաթիւրել էր։ Ուր որ հրեշտակներ պիտի լինէին բազմած—դևերն էին բոյն դրել և սպառնալից հայեացքներ գցում այսուայն կողմ։ Ոչ մի դիպուած, ոչ մի անարգութիւն, ոչ մի մարդկային մեղք, ոչ մի կերպ չէր կարող առաջացնել հրէշներ, որ սրանց կիսի չափ զզուելի ու զարհուրելի լինէին։

Սկռուջը՝ սարսափած՝ յետ քաշուեց։ Այս ամենից յետոյ նա աշխատեց ասել՝ «Ինչ սիրուն երեխերք են», բայց այդ խօսքերը նրա բկումը մնացին և նա չկարողացաւ այդ աստիճանի պոռաւոր սուտ ասել։

—«Ի՞նն են դրանք, Ոգի», կարողացաւ միայն արտասանել Սկռուջը։

—«Մարդկանցն են», ասաց Ոգին ցած նայելով նրանց վրայ։ «Եւ նրանք կպչում են ինձ, բողոքելով իրանց հայրերի դէմ։ Այս տղան տգիտութիւնն է, իսկ աղջիկը—աղքատութիւնը։ Զգուշացիր այդ զոյգից և դրանց նմաններից. ես առաւել զգուշացիր այս տղայից, որովհետև անէծք է գրոշմուած նրա ճակատին, եթէ միայն ջնջուելու չլինի այդ գրոշմը։ Մի՞ համաձայնուիր ինձ հետ», գոչեց ոգին, ձեռքը դէպի քաղաքը մեկնելով։ «Բամբասիր նրանց, որոնք համաձայն են ինձ հետ։

Դու այդպէս վարուիր, ղեկավարուելով քո ինչին հաշիւներովդ։ աւելի վատ քեզ համար։ Վերջը կը տեսնեք»։

—«Ոչ մի ապաստան կամ միջոց չունե՞ն դրանք», գոչեց Սկռուջը։

—«Բանտեր չկա՞ն», ասաց Ոգին, վերջին անգամ դարձնելով նրան իր սեփական խօսքերը։ «Աշխատանքի տներ չկա՞ն։

Զանգը տասներկուսը խփեց։

Մէկ էլ Սկռուջը բարձրացրեց աչքերը, բայց Ոգին չկար այլևս։ Երբ որ մարեց վերջին հարուածի արձագանգը, նա յիշեց ծեր Մարլէյի գուշակութիւնը և, աչքերը բարձրացնելով, տեսաւ մի հանդիսաւոր երևոյթ, որ ոտքից մինչև գլուխ քողարկուած, մօտենում էր նրան, երկրի վրայ տարածուող մառախուղի նման։

---

# ՉԱՐԼԶ ԴԻԿԵՆՋԻ

## ԾՆՆԴԵԱՆ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐԻՑ *)

*Թարգմանեց բնագրից Մխիթար Տէր-Անդրէասեանց*

---

*Գլուխ Դ.*

### ՈԳԻՆԵՐԻՑ ՎԵՐՋԻՆԸ

Կամացուկ, հանդարտ ու լռելեայն երևոյթը մօտեցաւ։ Երբ կանգնեց նրա մօտ, Սկռուջը չոքեց նրա առաջին, որովհետև նոյնիսկ այս Ոգուն շրջապատող օդը, կարծես, խորհրդաւոր խաւար էր տարածում։

Նա փաթաթուած էր մի մուգ—սև շորի մէջ, որ ծածկում էր նրա գլուխը, դէմքը, մարմինը։ Երևում էր միայն մի մեկնած ձեռք, որ այդ շորից դուրսն էր մնացել։ Առանց դրան դժուար կը լինէր տեսնել նրան մութի մէջ, կամ ջոկել շրջապատող խաւարից։

Նա զգաց, որ մի հսկայ բան է մօտեցել իրան և նրա խորհրդաւոր ներկայութիւնը հանդիսաւոր երկիւղով լցրեց իր սիրտը։ Աւելի ոչինչ չգիտէր նա, որովհետև Ոգին ոչ խօսում էր և ոչ շարժւում։

—«Գալիք Ծննդեան Ոգի՞ն ես դու», հարցրեց Սկռուջը։

Ոգին չպատասխանեց, միայն ձեռքը մեկնեց առաջ։

—«Դու այն բաների ստուերն ես ցոյց տալու ինձ, որ դեռ տեղի չեն ունեցած, բայց ապագայում պիտի տեղի ունենան», շարունակեց Ոգին։ «Այդպէս չի՞, Ոգի»։

Հանդերձի վերին մասը ծալծլոտուեց մի վայրկեան, կարծես Ոգին խոնարհեցրեց գլուխը։ Այդ էր Սկռուջի ստացած միակ պատասխանը։

---

*) Տես «Մուրճ», № 11.

Թէպէտ այս վերջին ժամանակս Սկոուջը բաւականին ընտելացել էր Ոգիներին, բայց այդ համբ երևոյթը այնպէս վախեցրեց նրան, որ նրա ոտները սկսեցին դողալ և երբ որ պատրաստուեց հետևելու Ոգուն, զգաց, որ դժուար թէ կարողանայ ոտի վրայ մնալ: Ոգին մի լոպէ կանգ առաւ, կարծես, նրա դրութիւնը նկատելով, ուզում էր միջոց տալ նրան ուշքի գալու:

Իսկ Սկոուջի բանը դրանով աւելի ևս վատացաւ: Մի անորոշ սարսափով նա գուշակեց, որ այդ մայլ ամպի միջից երկու ոգեղէն աչքի հայեացք է յառած իր վրայ, մինչդեռ ինքը, ինչքան էլ լայն է բաց անում աչքերը, ոչինչ չի կարողանում ջոկել խաւար զանգուածի միջից, բացի ոգեղէն ձեռքից:

—«Ապագայի Ոգի», գոչեց նա, «իմ տեսած ոգիներին մէջ ամենից շատ քեզնից եմ սարսափում: Բայց որովհետև յայտնի է ինձ քո նպատակը, որ բարի է և որովհետև ես յոյս ունիմ այսուհետև բոլորովին ուրիշ կերպ ապրել և ուրիշ մարդ դառնալ,—պատրաստ եմ երախտապարտ սրտով կրել ներկայութեանդ ծանրութիւնը: Դու չե՞ս խօսելու ինձ հետ»:

Պատասխան չկար: Ձեռքը ուղիղ դէպի առաջ էր մեկնած:

—«Առաջնորդիր ինձ», ասաց Սկոուջը: «Տար ինձ: Գիշերը շուտ է անցնում, և ժամանակը թանգ է ինձ համար, գիտեմ: Տար ինձ, Ոգի»:

Երևոյթը ինչպէս որ եկել էր, այնպէս էլ սկսեց հեռանալ: Սկոուջը հետևում էր նրա հանդերձի ստուերի միջով, որ կարծես նրան բարձրացնում ու տանում էր հետը:

Հազիւ թէ նրանք քաղաքը մտան, աւելի գուցէ քաղաքը մտցաւ ու նրանց իր մէջն ամփոփեց: Ինչ և իցէ, նրանք քաղաքի սրտի մէջն էին արդէն, բորսայում, վաճառականների շրջանում, որոնք տակնուվրայ էին լինում և փողի զընգզընգոց հանում իրանց քսակներից, խմբերով խօսակցում, նայում իրանց ժամացոյցներին, մտամոլոր խաղում իրանց ահագին ոսկէ կնիքներով և այլն և այլն, ինչպէս որ տեսել էր յաճախ Սկոուջը:

Ոգին կանգ առաւ «գործի մարդկանց» մի փոքրիկ խմբակի մօտ: Սկոուջը, նկատելով, որ Ոգու ձեռքը դէպի այդ խումբն է մեկնած, մօտեցաւ որ ականջ դնի նրանց խօսակցութեանը:

—«Ոչ», ասաց մի խոշոր, չաղ մարդ, հրէշաւոր կզակով: «Մի առանձին բան չգիտեմ նրա մասին: Գիտեմ միայն որ նա մեռել է»:

—«Ե՞րբ է մեռել», հարցրեց մի ուրիշը:



—«Կարծեմ, այս գիշեր»:

—«Բա, ի՞նչ է պատճառը», հարցրեց երրորդը, իր ընդարձակ ծխախոտի ամանից բաւականին ծխախոտ հանելով»: Ես կարծում էի, թէ նա երբէք չի մեռնելու»:

—«Աստուած գիտի», ասաց առաջինը յօրանջելով:

—«Ի՞նչ արաւ, տեսնենք, իր կարողութիւնը», հարցրեց մի՝ կարմիր երեսաւոր՝ պարոն, որի քթի ծայրին մի կտոր աւելամիս կար կախ, որ օրօրւում էր, հնդուհաւի կատարի կարմիր մսի նման:

—«Չեմ լսել», ասաց լայնակզակ մարդը կրկին յօրանջելով: «Գուցէ ընկերութեանն է թողել: Այնքանը գիտեմ, որ ինձ չի թողել»:

Այս հանաքը ընդհանուր ծիծաղով ողջունուեց:

—«Երևի թաղումը շատ հասարակն է լինելու», ասաց նոյն պարոնը. «որովհետև կեանքումս նրա մօտ գնացող-եկող մարդ չեմ տեսել: Եկէք մենք մի խումբ հաւաքուենք, գնանք»:

—«Ես հակառակ չեմ, եթէ հոգեհաց է լինելու», նկատեց այն պարոնը, որի քթի վրայ աւելամիս կար: Իսկ եթէ քելեխ չլինի, ես գնացողը չեմ»:

Կրկին ծիծաղ:

—«Բանից դուրս է գալիս որ ձեր մէջ ամենաանշահասէրը ես եմ եղել», ասաց առաջին խօսողը, «որովհետև ես երբէք ոչ սև ձեռնոց եմ հագնում, ոչ էլ քելեխ եմ ուտում: Այնուամենայնիւ ես առաջարկում եմ գնալ, թէ կ'ուզէք: Որ միտ եմ առնում, դուրս է գալիս, որ նրա ամենամօտ բարեկամը ես եմ եղել, որովհետև երբեմն իրար հանդիպելիս կանգ կ'առնէինք ու մի երկու խօսք կասէինք: Յոտեսութիւն, ցը՜»...

Խօսողներն ու ականջ դնողները ցրուեցան և ուրիշ խմբերի խառնուեցան: Սկոուջին ծանօթ էին դրանք, այդ պատճառով հարցական հայեացք գցեց Ոգու վրայ, այդ խօսակցութեանց բացատրութիւնը խնդրելով:

Երևոյթը դուրս սահեց մի փողոց ու մատով ցոյց տուեց իրար հետ զրոյց անող երկու մարդու: Սկոուջը կրկին ականջները սրեց, յուսալով իր ուղած բացատրութիւնը սրանցից իմանալ:

Սրանց էլ նա շատ լաւ էր ճանաչում: Շատ հարուստ ու ազդեցիկ գործի մարդիկ էին: Նա իր պարտքն էր համարում միշտ աշխատել այդ մարդկանց աչքում բարձր պահել իրան «գործի մարդու» տեսակէտից. միմիայն այդ տեսակէտից, իհարկէ:

—«Ի՞նչպէս էք», ասաց մէկը:

—«Դուք ինչպէս», պատասխանեց միւսը։

—«Լաւ եմ», ասաց առաջինը։ «Քեօփաքը պրծաւ, հա...»

—«Ասում են», պատասխանեց երկրորդը։ «Ի՞նչ ցուրտ է...»

—«Ժամանակն էլ է ցրտի, Ծննդեան տօներին էլ ցուրտ չլինի՞։ Դուք էլ, հօ, սառցի վրայ սահողներից չէ՞ք»։

—«Ո՛չ, ոչ, ինարկէ. էլ բան ու գործ չունե՞մ։ Ցտեսութիւն»։

Էլ ոչ մի խօսք։ Դրանով էլ վերջացաւ նրանց խօսակցութիւնն ու նրանք հեռացան իրարից։

Առաջ մի տրամադիր էր զարմանալու, որ Ոգին կարեւորութիւն է տալիս այդպիսի, ըստ երեւոյթին, դատարկ խօսակցութիւնների. բայց՝ ինքնքուստ համոզուած՝ որ այստեղ մի որեւէ անյայտ խորհուրդ պիտի լինի, մտքի տակ ընկաւ, թէ ո՞րն է, արդեօք, այդ խորհուրդը։ Դժուար թէ մի որեւէ առընչութիւն լինէր նրա վաղեմի բարեկամ Յակոբի մահուան հետ, որովհետեւ այդ անցած բան էր, իսկ այս Ոգու բանը ապագայի հետ էր։ Ոչ էլ նրա մօտ ծանօթներից որեւէ մէկին կարող էր վերաբերուել այդ խօսակցութիւնը։ Սակայն անկասկած էր մի բան. ում էլ վերաբերուելու լինէր, սակայն իրա համար այդտեղ մի խորհրդաւոր խրատ կար։ Նա վճռեց ժտաբերել ականջին հասած խօսքերը, տեսած բաները, առանձին ուշք դարձնել իր սեփական ուրուականի վրայ, երբ նա կ'երեւայ, և յոյս ունէր այդպիսով հեշտութեամբ գտնել հանելուկի բանալին։

Նա իր հայեացքը ուղղեց հէնց այն անկիւնը, ուր որ առհասարակ կանգնում էր ինքը, բայց մի ուրիշ մարդ էր կանգնած նրա սովորական տեղում և թէպէտ ժամացոյցի սլաքը՝ նրա այդտեղ լինելու ժամն էր ցոյց տալիս, բայց իրան նմանող ոչոքի չէր գտնում ներս խուժող բազմութեան մէջ։ Սակայն այդ շատ էլ չզարմացրեց նրան, որովհետեւ նա իր մտքումը վճռել էր փոխել իր կեանքի եղանակը. մտածում էր ու յոյս դնում, թէ ահա այդպիսով կատարում է նրա նոր-կեանք սկսելու խորհուրդը։

Նրա կողքին՝ հանգիստ ու մռայլ՝ կանգնած էր Ուրուականը, ձեռքը դէպի առաջ մեկնած։ Երբ նա սթափուեց իր մտաժոլոր դրութիւնից, Ուրուականի ձեռքի շարժուածքից ու նրա դէպի ինքը բռնած դիրքից նրան թուաց, թէ մի զոյգ աներեւոյթ աչք յառած են իր վրայ։ Նա սկսեց դողալ, կարծես ցրտից։

Նրանք թողին «գործի» բեմը և քաղաքի մի մռայլ մասը գնացին, ուր առաջ Սկրուջը երբէք չէր եղել, սակայն ծանօթ էր նրա դիրքին ու վատ համբաւին։ Փողոցները կեղտոտ ու նեղ էին, կրպակներն ու տները—ողորմելի, մարդիկ կիսամերկ, հարբած, ոտարոտիկ, զզուելի։ Կեղտոտ և ծուռումուռ փողոցներից ու տների դարպասներից՝ ազբակոյտների գարշահոտութիւն էր փչում. ամբողջ թաղը յանցանքների, անառակութեան ու թշուառութեան մի բոյն էր։

Այս անարգ որջում մի տան կողքի ծածկոցի տակ մի կրպակ կար, լիքը երկաթեղէնով, ցնցոտիներով, շիշերով, ոսկորներով ու ուտելեղէնի կեղտոտ փշրանքով։ Կրպակի յատակին կուտուած էին ժանգոտած բանալիների, մեխերի, շղթաների, չանգալների, սղոցների, կշեռքների ու կշռաքարերի, ամեն տեսակ անպէտք երկաթեղէնի դէզեր։ Ո՞ւմ դարդն էր կտրուած՝ քրքրել ու լոյս աշխարհ հանել զզուելի ցնցոտիների, գարշահոտ ճարպի ու ոսկրների տակ սնուած ու թագնուած գաղտնիքը։ Այս կրպակում, հին աղիւսներից շինած բուխարու առաջ, նստած էր գլուխը ճերմակ մի ստանակ, մօտ եօթանասուն տարեկան, որ մի գարշահոտ, կարկատոտած վարագոյրով իրան ցրտից ապահոված, իր չիբուխն էր ծխում ու իր փառահեղ հանգիստը վայելում։

Սկրուջն ու Ուրուականը այս մարդուն մօտեցան հէնց այն ժամին, երբ կրպակը մտաւ, մի ծանր կապոցով բեռնաւորուած կին։ Հազիւ սա ներս էր մտել, երբ մի ուրիշ կին էլ մտաւ, նոյնպէս բեռնաւորուած, սրա յետքից ներս մտաւ մի մարդ, հնամաշ հագուստով, որ պակաս զարմացած չէր սրանց տեսնելով, քան թէ սրանք—իրար ճանաչելով։ Մի քանի վայրկեան զարմանքից սառած մնալուց յետոյ, երեքն էլ չիբուխը բերնին ծերունու հետ միասին թուլացան ծիծաղից։

—«Թող առաջինը օրավարձով բանող կինը լինի», գոչեց նա, որ ամենից առաջ էր մտել։ «Լուացարարուհին թող երկրորդը լինի, իսկ կապալառուի ծառան - թող լինի երրորդը։ Լսիր, Զօ (Յովսէփ), մի բան կայ երեւի, որ մենք երեքս էլ այստեղ հանդիպեցանք իրար։

—«Սրանից լաւ տեղ չէիք կարող գտնել», ասաց պառաւ Զօն, չիբուխը բերնից հանելով։ «Համեցէք դահլիճը։ Դուք հօ վաղուց էք ստացել այդ իրաւունքը, այն միւս երկուսն էլ նոյնպէս օտար չեն մեզ համար։ Սպասեցէք կրպակիս դուռը փակեմ։ Ա՜հ, նրա ճռռոցը։ Հաւատաս այստեղ թափուած երկաթի կտորտանքի մէջ սրա չանգալների չափ ժանգոտածը չգտնուի. ինչպէս որ, հաւատացած եմ, ոսկորի կտոր չէք գտնել այստեղ, իմոնցից հին, հա, հա։ Մենք ամենքս էլ հաւատարիմ

ենք մեր կոչմանը. լաւ ենք գտել իրար։ Մտէք դահլիճը, դահլիճը մտէք»։

«Դահլիճը»—ցնցոտի վարագոյրի քամակի տարածութիւնն էր։ Ծերուկը կրակը հաւաքեց մի հին երկաթի կտորով և, իր ծխող լապտերի պատրոյգը չիբուխի գլխովն ուղղելով, (որովհետև գիշեր էր)—կրկին բերանը դրաւ։

Այդ միջոցին կանանցից այն մէկը, որ խօսում էր քիչ առաջ՝ իր կապոցը յատակը նետեց և լրբաբար նստեց աթոռի վրայ, ձեռները խաչեց ծնկներին ու համարձակ հայեացք գցեց միւս երկուսի վրայ։

—«Ուրեմն ի՞նչ, ի՞նչ կայ, որ տիկին Դիլբը», ասաց կինը։ «Ամեն մարդ իրաւունք ունի իր հոգսը քաշելու։ Նա միշտ այդպէս էր անում»։

—«Իսկ որ ճշմարիտ է. մանաւանդ Նա», ասաց լուացարարուհին։

—«Դէ՛, ուրեմն ի՞նչ ես աչքերդ պլշած կանգնել, վախեցածի նման, այ կնիկ. ո՞վ է իմաստունը, որ իմանայ մեր արածը։ Իսկ մենք հօ իրար չե՞նք մեղադրելու կարծեմ»։

—«Ի՞հարկէ, ո՛չ», ասացին միասին տիկ. Դիլբը և տղամարդը։ «Յոյն ունենք—ո՛չ»։

—«Ուրեմն շատ լաւ», գոչեց կինը։ «Բաւական է։ Այս մի քանի բանը կորցնելով, ո՞վ է զրկւում, տեսնենք։ Մեռելի ընչի՞ն են պէտք որ»...

—«Ի՞հարկէ, պէտքը չեն», ասաց տիկ. Դիլբը։

—«Թէ ուզում էր մահից յետոյ էլ պահել այս իրերը այդ անպիտան քեաֆթառը», շարունակեց կինը, «ինչո՞ւ կենդանութեան ժամանակ ոչոքի հետ բարեկամութիւն չէր անում, որ մեռնելիս նրա աչքերը փակող մէկը գտնուէր նրա կողքին և մեն-մենակ չփչէր վերջին շունչը»։

—«Ճշմարիտ խօսք ու արդար դատաստան», ասաց տիկ. Դիլբը։

—«Ես կը ցանկանայի, որ այդ դատաստանը մի քիչ աւելի ծանր լինէր», պատասխանեց կինը. «և կը լինէր էլ, հաւատացնում եմ, եթէ կարողանայի մի երկու ուրիշ բանի էլ հասցնել ձեռքս։ Բա՛ց արա կապոցս, պառաւ Ջօ, և գլխին ասա։ Պարզն ասա։ Ոչ առաջինը լինելուցս եմ վախենում և ոչ էլ քաշւում եմ, թէ կը տեսնեն դրանք։ Այստեղ իրար հանդիպելուց առաջ էլ մենք շատ լաւ գիտէինք, կարծեմ, թէ ի՞նչ գործի տէր ենք մենք։ Մեղք բան չի։ Բա՛ց արա կապոցը, Ջօ։

Սակայն՝ սիրալիր բարեկամները թոյլ չտուին. հնամաշ սև



շորաւոր մարդը, առաջ ընկնելով, ի ցոյց դրեց իր աւարը, որ շատ էլ ճոխ չէր։ Մի-երկու կնիք, մի գրչման, մի զոյգ թեքի կոճակ, մի էժանագին քորոց—ուրիշ ոչինչ։ Այս բոլորը խիստ քննութեան ու գնահատութեան ենթարկեց ծեր-Ջօն, ամեն մէկի գինը, որ տրամադիր էր տալ, նշանակեց պատի վրայ և, նկատելով որ այլևս բան չմնաց,—գուժարը տուեց։

—«Ահա ձեր հաշիւը», ասաց Ջօն, և նոյնիսկ եթէ սպանէք էլ ինձ, վեց պէնս էլ չեմ աւելացնի։ Ո՞վ է յաջորդը»։

Յաջորդը տիկ. Դիլբը էր։ Միքանի սաւան ու երեսսրբիչ, միքանի շորեղէն, մի զոյգ թէյի գդալ, հին ձևի, մի զոյգ շաքարի ունելի և միքանի կօշիկ։ Նրա հաշիւն էլ նոյն կերպով գրուեց պատի վրայ։

—«Տիկիններին ես միշտ աւել եմ տալիս։ Դա իմ թուլութիւնս է, որ քանդում է ինձ», ասաց ծեր-Ջօն։ «Ահա ձեր հաշիւը։ Եթէ մի հատ պէնս աւելին պահանջէք, փոխանակ այս բոպէիս հարցը վերջացնելու,—ես կը փոշմանեմ իմ առատաձեռնութիւնից ու կէս-կռոն կը պակսեցնեմ տուածիցս»։

—«Այժմ իմ կապոցս բա՛ց արա, Ջօ», ասաց առաջին կինը։

Ջօն չոքեց, որ աւելի յարմար լինի բանալ և կապերը քանդելով, մի մեծ կտոր ծանր, մթագոյն ճոթ հանեց դուրս։

—«Այդ ի՞նչ է», ասաց Ջօն։ «Երևի անկողնի վարագոյրներն են»։

—«Հա՛,» պատասխանեց կինը ծիծաղելով և իր ծալած ձեռների վրայ յենուելով։ «Վարագոյրներն են»։

—«Երևի օղերի հետ միասին թոցրել ես վրիցը, հէնցոր աչքերը խփել է»։

—«Ի՞հարկէ», պատասխանեց կինը. ինչո՞ւ չանէի։

—«Հարստանալու համար ես ծնուած դու», ասաց Ջօն, «և անկասկած կը հարստանաս»։

—«Անկասկած, ես ձեռքս ետ չեմ քաշում, երբ նա մեկնելում է մի բան թալացնելու, մանաւանդ մի այդպիսի մարդու խաթեր, ինչպիսին որ նա էր. կարող եմ հաւատացնել քեզ, Ջօ», սառնասրտութեամբ պատասխանեց կինը։ «Այդ իւղը չկթացընես վերմակի վրայ»։

—«Նրա՞ վերմակն է», հարցրեց Ջօն։

—«Բա՞ ուրմինը պիտի լինի», պատասխանեց կինը։ «Կարող եմ հաւատացնել, որ նա առանց վերմակի էլ չի մրսի այժմ»։

—«Յոյս ունիմ վարակիչ հիւանդութիւնից չմեռաւ նա, հա՛», ասաց ծեր—Ջօն գործը թողնելով ու վեր նայելով։

—«Մի վախենալ, պատասխանեց կինը, եթէ այդպէս լինէր, ես նրան մօտեցողը չէի. կարօտ չէի։ Իսկ այս շապիկը տնտղիր մինչև աչքերդ մթնի, այնուամենայնիւ ոչ մի հատիկ ծակ չես գտնի և ոչմի մաշած տեղ։ Նրա շապիկներից ամենալաւն է և շատ էլ քնքուշն է։ Փչանալու էր, եթէ ես չվերցնէի»։

—«Ի՞նչպէս թէ փչանալու», հարցրեց ծեր-Զօն։

—«Անկասկած այդ շապիկը հագին էին թաղելու», պատասխանեց կինը ծիծաղալով։ «Յիսարի մէկը հագցրել էր արդէն, բայց ես կրկին հանեցի։ Եթէ այդ դէպքումն էլ մարդ հասարակ կտաւ չբանեցնի, էլ ի՞նչ բանի է պէտք ուրեմն կտաւը։ Մի քիչ էլ դեռ աւել է նրան կտաւը։ Տգեղանալու տեղ չունի, որ կտաւը տգեղացնի նրան»։

Սկռուջը այս խօսակցութիւնը սարսափով էր լսում։ Ծերունու լապտերի աղօտ լուսով իրանց աւարի շուրջը ժողովուած, սրանք շարժեցին նրա ատելութիւնն ու զզուանքը, որ հազիւ թէ աւելի սաստիկ լինէր, եթէ դրանց փոխարէն չարաստանները լինէին, մարդկային մսի առևտուր անելիս։

—«Հա, հա», ծիծաղեց նոյն կինը, երբ ծեր-Զօն մի ֆլանելի քսակ հանելով գրպանից, վճարեց ամեն մէկին հասանելիքը։ Տեսնում էք, թէ ի՞նչ եղաւ նրա վախճանը։ Ամենքին փախցնում էր նա իրանից, քանի որ կենդանի էր, որպէսզի մեռնելուց յետոյ մեզ խանգարող չլինի։ Հա, հա, հա»...

—«Ոգի», ասաց Սկռուջը, ոտքից մինչև գլուխը դողալով։ «Տեսնում եմ, տեսնում եմ։ Այդ դժբախտ մարդու վիճակը կարող է կրկնուել և իմ գլխիս։ Այդ ճանապարհն եմ բռնել ես էլ։ Տէր ողորմած, ի՞նչ բան է այս»։

Սարսափած յետ քաշուեց նա, որովհետև տեսարանը փոխուել էր և այժմ նրա առաջը մի մահճակալ էր, մերկ ու անվարագոյր, որի վրայ, մի հնամաշ սաւանի տակ մի բան կար, որ, թէպէտ և անձայն, սակայն սարսափահար էր անում նրան։

Սենեակը խիստ մութն էր, այնպէս որ ոչինչ չէր կարող տեսնել, թէպէտ Սկռուջը, մի գաղտնի դրդման հպատակուելով, այսուայն կողմն էր նայում, աշխատելով իմանալ, թէ ի՞նչ սենեակ է այդ։ Դրսից մի աղօտ ճառագայթ ընկաւ անկողնի վրայ, որի մէջ, պլոկուած—կողոպտուած, անխնամ, ընկած էր այն մարդու մարմինը առանց հսկողի կամ սգացողի։

Սկռուջը նայեց Ուրուականին։ Նրա անյողդողդ ձեռքը ուղղուած էր դէպի դիակի գլուխը։ Այն աստիճան անխնամ էր ծածկուած նա, որ Սկռուջը մի մատով կարող էր բանալ նրա



երեսը։ Նա մտածում էր դրա մասին, զգում դրա հեշտութիւնը և ցանկանում էր անել,—բայց չէր կարողանում ոչ ծածկոցը յետ քաշել և ոչ աղատուել այդ տեսարանից։

Ո՜հ սառը, սառը, խիստ, զարհուրելի Մահ, կանգնիր այստեղ սեղանդ և շրջապատիր նրան իշխանութեանդ տակ գտնուած բոլոր ահռելարսափով, որովհետև քոնն է այստեղ։ Բայց սիրեցեալ, յարգելի ու պատուաւոր գլխից դու չես կարող մի մազ էլ փոխել քո սարսափելի նպատակներիդ համար կամ թէ դէմքի մի հատիկ գիծը զզուելի դարձնել։ Ո՛չ այն պատճառով, որ նրա ձեռքը ծանրացած չի լինում և վայր չընկնում, երբ բարձրացնում ես, ոչ էլ այն, որ սիրտը բաբախում է, կամ, բազկերակը խփում, այլ այն պատճառով՝ որ նրա ձեռքը բաց է եղել, առատ ու արդար, սիրտը ազնիւ ջերմ ու քնքուշ, իսկ բազկերակի արիւնը—մարդկային։ Հարուածիր, Ուրուական, հարուածիր և իսկոյն նրա բարի գործերը դուրս կը բղխին նրա վէրքից և նրա անմահ անունը կը յաւէրժացնեն աշխարհքում։

Ոչ մի ձայն չարտասանեց այս խօսքերը Սկռուջի ականջին, սակայն նա լսեց այդ խօսքերը, անկողնին նայելով։ Նա մտածում էր, թէ արդեօք ի՞նչ կը լինի այդ մարդու առաջին միտքը, եթէ նա յարութիւն առնի։ Ժլատութիւն, ընչաքաղցութիւն ու վաստակ, որ նրան այս «ճոխ» վախճանին են հասցրել. լաւ տեղ են հասցրել...

Նա ընկած էր մութ ու դատարկ տանը, մէկ-մէնակ. ոչ մի մարդ կամ կին, ոչ մի երեխայ չկար, որ ասէր. «նա բարի էր, նա այս կամ այն բարութիւնն է արել ինձ. ես էլ ի յիշատակ նրա մի հատիկ բարի խօսքի, բարութիւն կ'անեմ նրան»։ Կատուն էր դուռը չանգռտում, իսկ վառարանի տակից մկների կրծտոցի ձայն էր գալիս։ Ի՞նչ էին փնտռում նրանք մահուան այս օթևանում կամ ինչու էին նրանք այդպէս անհանգիստ ու կատաղած։

Սկռուջը չէր համարձակւում մտածել։

—«Ոգի» ասաց նա, «սարսափելի տեղ է այս։ Ես չեմ մոռանա, հաւատացնում եմ, այս դասը։ Գնանք»։

Բայց Ոգին իր անշարժ մատով շարունակում էր նրա ուշադրութիւնը դիակի գլխի վրայ հրաւիրել։

—«Հասկանում եմ, թէ ի՞նչ ես ուզում», պատասխանեց Սկռուջը։ «Կը կատարէի ցանկութիւնդ, եթէ կարենայի։ Բայց չեմ կարող Ոգի։ Չեմ կարող»։

Կրկին, կարծես, նայեց նրան։

—«Եթէ այս մարդու մահը յուզել է որևէ մէկին այս քա-

դաքում, ասաց Սկռուջը, համարեա շնչասպառ, ցոյց տուր ինձ նրան, Ոգի, աղաչում եմ քեզ»։

Ոգին մի բոպէ թաերի նման բացեց իր սև հանդերձը նրա առաջ և կրկին հաւաքելով, ցոյց տուեց մի սենեակ, ուր օր ցերեկ էր, մէջն էլ մի կին իր որդկերանցով։

Հոգսերից անհանգիստ նա սենեակում յետ ու առաջ էր անում մէկին սպասելով. ամեն մի ձայնից կանգ էր առնում, դուրս նայում պատուհանից, նայում ժամացոյցին, աշխատում էր կար անել, բայց իզուր... համբերութիւն չունէր նոյնիսկ խաղացող երեխայոց ձայնը լսելու։

Վերջապէս լսուեց դռան ցանկալի թրխկ-թրխկոցը։ Նա շտապեց դէպի դուռը և դիմաւորեց ամուսնուն, որի դէմքը մտամոլոր ու ճնշուած էր, թէպէտ երիտասարդ էր նա։ Արտայայտութիւնը աչքի ընկնող էր. մի տեսակ լուրջ ուրախութիւն էր այն, որից նա ամաչում էր և որ աշխատում էր ղրսպել։

Նա նստեց ճաշի, որ պահել էին նրա համար կրակի վրայ և երբ կինը, երկար լռութիւնից յետոյ, թոյլ ձայնով հարցրեց, «Ի՞նչ նորութիւն կայ». նա կարծես դժուարանում էր պատասխան տալու։

—«Բարի՞ է, թէ չար» հարցրեց կինը, շտապեցնելով։

—«Չար», պատասխանեց նա։

—«Ուրեմն քանդուեց, պրծաւ մեր տունը...»

—Ո՛չ, Կառոլին, դեռ յոյս կայ»։

—«Եթէ նա մեղմանայ», ասաց կինը զարմացած, յոյս կայ։ «Եթէ այդպիսի մի հրաշք տեղի ունենայ—իհարկէ, յոյս կայ»։

—«Նրա բանը մեղմանալուց անցել է այժմ», ասաց ամուսինը։ «Նա մեռել է արդէն»։

Կինը մի քնքոյշ ու բաղմահամբեր արարած էր երևում, եթէ միայն մեզ չի սխալեցնում նրա դէմքի արտայայտութիւնը։ Սակայն նա դոհ մնաց, լսելով ամուսնու ասածը և իր սրտի բաւականութիւնը արտայայտեց ձեռները միացնելով։ Իսկոյն և եթ նա փոշմանեց և տրտմեց, բայց առաջին զգացմունքն էր, որ նրա սրտիցը բղխեց։

—«Այն կէս-հարբած կնոջ ասածը, որ անցեալ երեկոյ, երբ ես ուզում էի տեսնել նրան ու մի շաբաթ յետաձգել տալ մեր պարտքը, ուրեմն նրա ասածը ճի՞շտ է եղել. իսկ ես կարծում էի, թէ պարզապէս չկամեցաւ ինձ տեսնել։ Ո՛չ միայն շատ վատ է եղել ուրեմն նրա դրութիւնը, այլ ուղղակի մեռնելիս է եղել մարդը»։



—«Ո՞ւմն է լինելու կտակած մեր պարտքը»։

—«Չգիտեմ։ Բայց մինչ այս մինչ այն, մենք էլ կը պատրաստենք փողը. և եթէ մինչև անգամ չհասցնենք էլ, դժուար թէ նրանից էլ անխիղճ մի պարտատէր լինի վիճակուած մեզ, յանձին նրա ժառանգի։ Այս գիշեր, յաջենայն դէպս, մենք կարող ենք հանգիստ քնել Կարոլին»։

Այո՛, ասացէք ինչ որ կ'ուզէք, բանն այն է, որ նրանց սրտի քարը կարծես վերցրին։ Երեխայոց դէմքերը, որ հաւաքուած իրանց ծնողաց շուրջը, լուռ ականջ էին դնում, թէպէտև ոչինչ չէին հասկանում նրանց խօսակցութիւնից,—պայծառացան։ Առհասարակ ամբողջ տունը բախտաւորուեց նրա մահով։ Այդ դէպքից առաջացած միակ զգացմունքը—ուրախութիւնն էր անկասկած։

—«Ցոյց տուր ինձ մահի հետ կապ ունեցող գոնէ մի հատիկ քնքշութիւն», ասաց Սկռուջը. «Թէ չէ այն մութ սենեակը, որից այժմ դուրս եկանք, միշտ պիտի մնայ աչքիս առաջը, Ոգի»։

Ոգին առաջնորդեց նրան քաջ յայտնի մթանի փողոցներով. ճանապարհին Սկռուջը այս կողմ այն կողմ էր նայում զինքը գտնելու նպատակով, բայց ոչմի տեղ ինքը չէր երևում։ Նրանք մտան խեղճ Բոբ Կռէչիտի տունը, որ արդէն մի անգամ այցելել էր նա և տեսան որ մայրն ու երեխաները նստոտել են կրակի շուրջը։

Անձայն, անշշուկ։ Զարաճճի փոքրիկ Կռէչիտները արձանների նման նստոտած էին մի անկիւնում և նայում էին Պետրոսին, որի առաջը մի գիրք կար։ Մայրն ու աղջկերքը կար էին անում նոյնպէս անձայն, անշշուկ։

«Եւ առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա... և ընկալեալ զնա ի գիրկս իւր, ասէ ցնոսա։ Որ մի անգամ յայսպիսի մանկտոյն ընկալցի, յանուն իմ, զիս ընդունի և որ զիս ընդունեցի, ոչ զիս ընդունի՝ այլ զայն՝ որ առաքեացն զիս»։

(Մարկոս, թ. 36)

Որտեղ էր լսել Սկռուջը այս խօսքերը։ Երաղում հո չէ՞ր։ Արդեօք, այն տղան հո չէ՞ր կարդացել այդ խօսքերը, երբ ինքն ու Ոգին ներս էին մտնում շէմքից։ Եւ ինչու՞ չի շարունակում այլևս։

Մայրը իր կարը դցեց սեղանի վրայ և ձեռքը դրեց երեսին։

—«Այս գոյնն էլ մթնացրեց աչքերս» ասաց նա։ «Այդ գոյնը... Ա՜խ խե՜ղճ Տայնը-Տիմ...

—«Կրկին պարզուեցան աչքերս», ասաց Կռէչիտի կինը։

«Ճրագի լուսիցն է թուլանում իմ տեսողութիւնս, իսկ ես չեմ կամենում, որ ձեր հայրը, տուն գալով, նկատի աչքերիս թուլութիւնը, չեմ ուզում. նրա գալու ժամանակն էլ պէտք է որ մօտ լինի»։

—«Անցել էլ է», պատասխանեց Պետրոսը գիրքը ծալելով։ «Վերջին օրերս կարծեմ նա սովորականից աւելի դանդաղ է ման գալիս, մայրիկ»։

Կրկին լռութիւն։ Վերջապէս մայրը հաստատ ու ուրախ ձայնով, որ միայն մի անգամ թուլացաւ, ասաց.

—«Այո, որդուն շալակած—ուրիշ էր նրա ման գալը, Տայնը Տիմին շալակած—շատ արագ էր ման գալիս իսկապէս»։

—«Ես էլ եմ յիշում. այո, յաճախ էր հայրիկը շալակում նրան», գոչեց Պետրոսը։

—«Ես էլ», բացագանչեց միւսը, և ապա ամենքն էլ։

—«Եւ նա շատ թեթեւն էր» ասաց մայրը, իր կարը շարունակելով, «հայրն էլ այնպէս էր սիրում նրան, որ շալակած ման ածելուց երբէք չէր նեղանում։ Ահա հայրներդ էլ դոռանն է»։

Կինը շտապեց դիմաւորել և ներս մտաւ փոքրիկ Բոբը, շալը վզովը տուած, որ անհրաժեշտ էր խեղճ մարդուն։ Թէյը նրա համար պատրաստ էր վառարանի առաջին, ամենքն էլ աշխատում էին որքան կարելի է աւելի ծառայութիւն անել նրան։ Ապա երկու փոքրիկները բարձրացան նրա ծնկների վրայ և ամեն մէկը իր փոքրիկ թուշը հօր երեսին դնելով, կարծես, ուզում լինէր ասել. «ոչինչ, հայրիկ, դարդ մի անիլ»։

Բոբի սիրտը բացուեց դրանց հետ և նա ուրախ-ուրախ խօսակցում էր ամենքի հետ։ Նա նայեց սեղանի վրայի կարին և գովեց կնոջ ու աղջիկների շնորհքն ու աշխատասիրութիւնը։ «Կիրակի օրուանից շատ վաղ կը վերջացնէք», ասաց նա։

—«Կիրակի... Ուրեմն, Ռոբերտ, դու այսօր գնացել ես», ասաց կինը։

—«Այո, սիրելիս», պատասխանեց Բոբը։ «Ափսոս, որ դու էլ չկայիր։ Այնպիսի մի կանաչ տեղ է, որ քէֆդ կը գար։ Բայց դեռ շատ անգամ ես տեսնելու։ Ես նրան խոստացել եմ ամեն կիրակի գնալ այնտեղ։ Իմ խեղճ, խեղճ երեխայ», գոչեց Բոբը։ «Խեղճ իմ բալիկ»։

Յանկարծ նրա սիրտը լցուեց և նա չկարողացաւ զսպել իր հեկեկանքը։ Իր զաւակի այդքան մօտ լինելն էր, երևի, պատճառը, որ նա չկարողացաւ զսպել իրան։

Նա դուրս եկաւ սենեակից և սանդուխներով բարձրացաւ վերին յարկի ուրախ ու լուսաւոր սենեակը, որ զարդարուած էր կանաչ ճիւղերով։ Այդտեղ մի աթոռ կար երեխայի մօտ դրած. նկատուում էր, որ մի քիչ առաջ էլ այդտեղ նստող է եղել։ Խեղճ Բոբն էլ նստեց ու միքիչ ուշքի գալուց ու զինքը հաւաքելուց յետոյ, համբուրեց փոքրիկ երեսը։ Ապա ցած իջաւ արդէն հաշտուած իր ճակատագրի հետ։

Հաւաքուեցան կրակի շուրջը և սկսեցին զրոյց անել, մինչդեռ մայրն ու աղջիկները շարունակում էին իրանց կարը։ Բոբը պատմեց նրանց Սկոուջի քրոջ-որդու անչափ բարութեան մասին, որին հազիւ մի անգամ էր միայն տեսել, բայց որը, այսօր փողոցում պատահելով և նկատելով որ միքիչ... շատ քիչ-տխուր է, ինչպէս որ մի ժամ առաջ էր, օրինակ—հարցրեց, թէ ի՞նչ դժբախտութիւն է եկել գլխին։ Եւ, որովհետև դժուար թէ նրա նման դուրեկան մարդ մէկն էլ դտնուի, Բոբը պատմեց նրան գլխին եկածը։ Իսրաէլ ցաւում եմ, «պ. Կռէչիտ, ասաց նա, իսրաէլ ցաւակցում եմ ձեզ ու ձեր բարի կնոջը։ Բայց դէ՞ որտեղից էր նա իմացել այդ»։

—«Ի՞նչն էր որտեղից իմացել, սիրելիս»։

—«Բա, որ դու բարի կին ես», պատասխանեց Բոբը։

—«Ամենքն էլ գիտեն այդ», ասաց Պետրոսը։

—«Հէնց այդ է որ զարմանալի է», գոչեց Բոբը։ «Անպայման ամենքն էլ գիտեն։ Իսրաէլ ցաւակցում եմ», ասաց նա, «ձեր բարի կնոջը։ «Եթէ մի որևէ բանով կարող եմ ծառայութիւն արած լինել ձեզ», ասաց նա, իր այցետոմսը տալով, «եկէք ինձ մօտ, խնդրեմ, ահա ձեզ հասցէն»։ Արդ, ոչ թէ այն օգնութիւնն է գնահատելի որ նա կարող է անել մեզ, գոչեց Բոբը, ոչ այնքան այդ օգնութիւնը, որքան նրա քաղցր խօսքն է հիացնում ինձ։

Այնպէս էր թւում ինձ, թէ այդ մարդը ճանաչում էր Տայնը-Տիմին և իսկապէս ցաւակցում էր մեզ։

—«Հաւատացած եմ որ դա մի բարեհոգի մարդ է», ասաց տիկ. Կռէչիտը։

—«Աւելի ևս կը համոզուէիր, սիրելիս, եթէ տեսած ու խօսած լինէիր հետը։ Զղջամտաս, եթէ նա Պետրոսին մի լաւ պաշտօնի դնի»։

—«Մէկ լսիր է, Պետրոս», ասաց տիկ. Կռէչիտը։

—«Այն ժամանակը», գոչեց աղջիկներից մէկը, «Պետրոսը իրա համար մի լաւ «ընկեր» կը գտնի և կը ջոկուի մեզնից»։

—«Զահլա մի տանիլ դէ», պատասխանեց Պետրոսը դէմքը ծռմռելով։

—«Մի օր հէնց այդ էլ, իհարկէ, կարող է պատահիլ», ասաց Բոբը. «Թէպէտ մինչև այդ դեռ շատ ժամանակ կայ,

սիրելիս։ Բայց ինչպէս, կամ ո՞րը և բաժանուելու լինենք իրարից, ես հաւատացած եմ որ մեզնից ոչոք չպիտի մոռանայ խեղճ Տայնը-Տիմին, որովհետև նա եղաւ առաջինը որ անջատուեց մեզնից. ուրեմն չմոռանանք նրան երբէք»։

—«Երբէք, հայրիկ», գոչեցին ամենքը։

—«Ես շատ բախտաւոր եմ», ասաց փոքրիկ-Բորը, «շատ բախտաւոր»։

Տիկին Կռէչիտը համբուրեց նրան, համբուրեցին և աղջիկերքը, իսկ Պետրոսը սեղմեց նրա ձեռքը։ Ո՜, դու, Տայնը-Տիմի մանկական հոգի, Աստուածանից էիր դու։

—«Ոգի», ասաց Սկռուջը, «ես զգում եմ, որ մօտեցել է մեր անջատման ժամը։ Զգում եմ, թէպէտ չգիտեմ ինչից կամ ինչպէս։ Ասա ինձ, ո՞վ է այն մեռած մարդը, որ մենք տեսանք»։

Ապագայ Ծննդեան Ոգին առաջուան պէս առաջնորդեց նրան,—թէպէտ, կարծես, այժմ արդէն մի ուրիշ ժամանակ էր (իսկապէս վերջին տեսիլքների մէջ, կարծես, ոչ մի հետևողականութիւն չլինէր, բացի մի հանգամանքից, այն է, որ այդ բոլոր տեսիլքներն էլ ապագային էին վերաբերւում)—առաջնորդեց նրան գործի մարդկանց մի ժողովավայր, ուր, սակայն, բացակայ էր ինքը, Սկռուջը։ Ոգին, գլուխը վերցրած գնում էր անդադար կարծես դէպի մի ցանկալի վախճան. բայց Սկռուջը խնդրեց նրան մի բոպէ կանգ առնել։

—«Այս բակը», ասաց Սկռուջը, «որի միջով մենք թռչում ենք այժմ, վաղուց է որ իմ մշտական պարապմունքիս տեղն է։ Ես տեսնում եմ այն տունը։ Թող մի նայեմ, թէ ինչ եմ լինելու ես ապագայում»։

Ոգին կանգ առաւ. նրա ձեռքը միւս կողմն էր ուղղուած։

—«Տունն հակառակ կողմն է, գոչեց Ոգին, ինչո՞ւ ես այդ կողմը ցոյց տալիս։

Անխնայ մատը չփոխեց իր ուղղութիւնը։

Սկռուջը վազեց իր գրասենեակի պատուհանի մօտ և նայեց։ Դա այժմ էլ գրասենեակ էր, բայց իր գրասենեակը չէր։ Կահաւորութիւնը իրանը չէր. ինքը չէր և աթոռի վրայ նստողը։ Ուրուականի մատը այժմ էլ չէր փոխում իր նախկին ուղղութիւնը։

Նա կրկին հասաւ Ուրուականին և զարմացած, թէ ինչո՞ւ և ո՞ւր են գնում, հետևեց նրան մինչև որ հասան մի երկաթէ դռան։ Մտնելուց առաջ նա մի կանգ առաւ ու աչք ածեց շուրջը։

Գերեզմանատուն էր։ Ուրեմն այն ողորմելին, որի անունը այժմ պիտի լսի, այստեղ է թաղուած... հողի տակ։ Նրան վայել տեղ էր այդ։ Շրջափակուած տներով, ծածկուած որոմ-խոտով, որ մահուան և ոչթէ կեանքի արտադրութիւն են, ամեն կողմը գերեզմաններ և զզուելի պարարտութիւն։ Իսկապէս նրան վայել մի տեղ...

Ոգին կանգ առաւ գերեզմանների մէջ ու մատնացոյց արաւ նրանցից մէկը։ Նա դողալով մօտեցաւ։ Ուրուականը նոյնն էր, անփոփոխ, բայց սարսափում էր, մի նոր, խորհրդաւոր նշանակութիւն գտնելով նրա տեսքում։

—«Առաջ քան մօտենամ այդ քարին, որ դու մատնացոյց ես անում», ասաց Սկռուջը, «պատասխանիր հետևեալ հարցիս. այս բոլորը անպատճառ պիտի տեղի ունենայ ապագայում, թէ միայն կարող է տեղի ունենալ»։

Ոգին շարունակում էր մատնացոյց անել նոյն գերեզմանը, որի մօտ կանգնած էր։

—«Մարդուս այս կամ այն ընթացքն է, որ մի որոշ վախճանի է հասցնում նրան, եթէ մարդ յամառում է իր մի անգամ ընտրած ճանապարհում», ասաց Սկռուջը։ «Իսկ եթէ մարդ փոխի իր ընթացքը—վախճանն էլ, յետևապէս, պիտի փոխուի։ Ասա ինձ, որ այսպէս կը լինի և քո ցոյց տուածներդ»։

Ոգին անշարժ էր, ինչպէս միշտ։

Սկռուջը, դողդողալով, մօտեցաւ նրա ցոյց տուած գերեզմանին և անուշադրութեան մատնուած գերեզմանաքարի վրայ կարդաց իր սեփական անունը. Էբենեզար Սկռուջ։

—«Այն մահճակալի վրայի մարդը ե՞ս էի ուրեմն», գոչեց ծնկաչոք Սկռուջը։

Մատը գերեզմանի վրայից դէպի նրան դարձաւ և կրկին—յետ։

—«Ո՛չ, Ոգի, ո՛չ, ո՛չ...»

Մատը անշարժ էր։

—«Ոգի», գոչեց նա, ամուր բռնելով նրա շորը, «լսիր ինձ։ Ես՝ էլ առաջուայ մարդը չեմ։ Ես չեմ կամենում այսուհետև այն մարդը լինել, որ էի քեզ տեսնելուց առաջ։ Իսկ եթէ այլևս ոչմի յոյս չկայ ճակատագիրս փոխելու—էլ ինչո՞ւ ես ցոյց տալիս ինձ այս ամենը»։

Այստեղ առաջին անգամ ձեռքը, կարծես, շարժուեց։

—«Բարի Ոգի», շարունակեց նա մնալով ծնկաչոք, «դու որ միշամտում ու խղճում ես ինձ, ասա ինձ որ դեռ յոյս կայ փոխելու ճակատագիրս, կենցաղիս եղանակը փոխելով։

Ազնիւ ձեռքը—դողաց։

—«Այսուհետև ես կը յարգեմ Ծննդեան տօնը իմ սրտումս

և կ'աշխատեմ ամեն տարի տօնել։ Ես իմ կեանքիս առաջնորդ կ'ընտրեմ Անցեալ, Ներկայ ու Ապագայ Ծննդեան Ոգիներիդ և երբէք չեմ մոռանայ ձեր տուած դասը։ Ո՜, ասա, ինձ, որ հընարաւոր է ջնջել այս քարի վրայ գրածը»։

Այդ հոգևարքի ժամին նա բռնեց Ուրուականի ձեռքը, որ աշխատում էր ազատուել նրանից. բայց նա հեշտ բաց թողնողը չէր։ Ոգին յետ մղեց նրան վճռողաբար։

Յուսաբեկուած, վերջին անգամ պաղատագին ձեռները բարձրացնելով, նա մի փոփոխութիւն նկատեց Ուրուականի հանդերձի ու ձևի մէջ։ Նա կուչ եկաւ, թուլացաւ, փոքրացաւ ու մահճակալի սիւնը դարձաւ։

---

## Գլուխ Ե.

## ՎԵՐՋԱԲԱՆ

Այո, և այդ սիւնը իր սեփական մահճակալինն էր։ Մահճակալն էլ էր իրանը, սենեակն էլ։ Ամենից լաւն ու մխիթարականը այն էր, որ ապաշխարելու ժամանակ էլ ունէր ինչքան ասես։

—«Պիտի ապրեմ Անցեալում, Ներկայում, և Ապագայում», կրկնեց Սկռուջը, վերկենալով տեղից։ «Թող այդ երեք Ոգիներն էլ գործեն իմ մէջս։ Ո՜հ, Յակոբ Մարլէյ։ Փառք Աստծուն ու Ծննդեան տօնին։ Ծնկաչոք եմ փառաբանում, Յակոբ, ծնկաչոք»։

Նա այն աստիճան թեւաւորուած ու ոգևորուած էր իր բարի տրամադրութիւնովը, որ նրա խզուած ձայնը հաղիւ հաղ էր հասցնում նրա հարցերի պատասխանները։ Ոգու հետ ունեցած իր վերջին ընդհարման միջոցին այնքան էր լացել ու կոծել, որ նրա երեսի արտասուքը դեռ չէր չորացել։

—«Սրանք հանուած չեն», գոչեց Սկռուջը, ձեռքը գցելով անկողնի վարագոյրներից մէկին, «սրանք հանուած չեն իրանց օղակների հետ միասին։ Սրանք իրանց տեղումն են, ես էլ եմ այստեղ և այն բաների ստուերները, որ պատահելու էին, կարող են դեռ ցրուել։ Կը ցրուեն, պիտի ցրուեն, գիտեմ»։

Նրա ձեռները այս միջոցին հագուստովն էին զբաղուած. շուռումուռ անելով, աստառն ի վեր հագնելով, այս կամ այն կողմ քաշելով, ամեն կերպ ծալծլելով ու օտարոտի ձև տալով։

—«Գիտեմ, թէ ի՞նչ անեմ», գոչեց Սկռուջը ծիծաղախառն և միաժամանակ լալագին ձայնով. և այդ ժամանակ մի կատարեալ Լաոկօոն ներկայացնելով, երկար գուլպաները մարմնովը տուած։ «Փետուրի նման թեթև եմ, հրեշտակի նման բախտաւոր, աշակերտի նման ուրախ։ Գլուխս պտոյտ է գալիս, կարծես հարբած լինեմ։ Ուրախ Ծնունդ ամենքին ու բախտաւոր Նոր տարի։ Հուռռա, հա»...

Նա թռչկոտել էր, գնացել դահլիճը և այժմ կանգնած էր այնտեղ անհանգիստ։

—«Ահա այն թասը, որի մէջն էր ճաշը», գոչեց Սկռուջը, կրկին ցնցուելով ու պտտուելով վառարանի շուրջը։ «Ահա այն դուռը, որի միջով ներս մտաւ Յակոբ Մարլէյի Ուրուականը։ Ահա այն անկիւնը, որ Ներկայ Ծննդեան Ոգին նստած էր։ Ահա այն պատուհանը, որից ես տեսայ թափառող Ոգիներին։ Ամեն ինչ իր տեղն է, ամենն էլ իսկ որ տեղի է ունեցել։ Հա-հա-հա...»

Իսկապէս դա մի փառաւոր ծիծաղ էր, ևս առաւել նշանաւոր այն պատճառով, որ բղխում էր մի մարդու հոգուց, որ արդէն քանի-քանի տարի չգիտեր, թէ ինչ բան է ծիծաղ ասածը։ Եւ դա ճանապարհ էր բաց անում մի շարք փայլուն ծիծաղների համար։

—«Գիտեմ թէ ամսի ո՞ր օրն է», ասաց Սկռուջը։ «Գիտեմ, թէ ո՞րքան ժամանակ եմ անցկացրել Ոգիների հետ։ Ոչինչ չգիտեմ։ Կատարեալ երեխայ եմ դարձել։ Բայց ինչս չունի։ Դարդ չեմ անում։ Թող երեխայ դառնամ։ Հուռռա, հա...»

Եկեղեցու զանգերի ուրախ ներդաշնակութիւնը, որի նըմանը նա երբէք չէր լսած,—ընդհատեց նրա հիացմունքը։ Զանգի-զանգ եկէք ժամ, զան-գի զանգ, եկէք ժամ... Օ՜, ինչ փառաւոր է, ի՜նչ փառաւոր։

Նա վազեց դէպի պատուհանը, բաց արաւ ու դուրս հանեց գլուխը։ Ո՛չ ամպ, ո՛չ մառախուղ. պարզ, լուսաւոր, ուրախ թարմ ու ցուրտ օր է։ Երկնակամարը, երկնային օդը—թարմ ու քաղցր, զանգահարութիւնը—ուրախ։ Օ՜հ, փառաւոր, փառաւոր...

—«Ի՞նչ օր է այսօր», գոչեց Սկռուջը, դիմելով տօնական շորը հագին մի տղայի, որ այդտեղ անցուդարձ էր անում գուցէ հէնց նրան դիտելու նպատակով։

—«Հ՞ը», հարցրեց տղան, ինչքան որ ասես զարմացած։

—«Ի՞նչ օր է այսօր, լաւ տղայ», ասաց Սկռուջը։

—«Այսօ՞ր», պատասխանեց տղան, «դէ Ծննդեան տօնն է, էլի՞»։

—«Ծննդեան տօնն է», ասաց ինքն իրան Սկռուջը։ «Ու-

բեմն ես քնով չեմ անցրել։ Ուրեմն Ոգիները այն բոլորը մի գիշերումն են արել։ Դէ նրանք ինչ որ ուզենան կարող են անել։ Իհարկէ, կարող են։ Իհարկէ, կարող են։ Էյ-հէյ, լաւ տըղայ»։

—«Հ՞ը», պատասխանեց տղան։

—«Ճանաչո՞ւմ ես այն հաւավաճառի խանութը, երկրորդ փողոցի անկիւնում», հարցրեց Սկռուջը։

—«Պէտք է որ ճանաչեմ», պատասխանեց տղան։

—«Ի՞նչ խելօք տղայ ես եղել», ասաց Սկռուջը։ «Երևելի տղայ, չգիտե՞ս, ծախուել է, արդեօք, այն մրցանակի հնդուհաւը, որ կախ էր այնտեղ։ Ոչ թէ այն փոքր—մրցանակ ստացածը, այլ այն մեծը»։

—«Ո՞ը, այն որ ինձ չափ ֆկա՞յ», հարցրեց տղան։

—«Ի՞նչ շնորհալի երեխայ է», ասաց Սկռուջը։ «Զուարճութիւն է սրա հետ խօսալը։—Այո՛, զոչաղ»։

—«Այժմ էլ այնտեղ կախ է», պատասխանեց տղան։

—«Իսկապէ՞ս, ասաց Սկռուջը, դէ, ուրեմն գնայ, առ»։

—«Ձեռ ես գցել դու ինձ»... գոչեց տղան։

—«Չէ, չէ», ասաց Սկռուջը, «ես լուրջ եմ խօսում։ Գնա՛, առ ու ասա բերեն այստեղ, որ ասեմ իրանց, թէ ո՞ւր պիտի տանեն։ Մշակի հետ յետ արի, ես քեզ մի շիլինգ փող կը տամ։ Իսկ եթէ հինգ բոպէն չվերացած յետ դաս—կէս կռոն կը տամ»։

Տղան գնդակի նման թռաւ։ Ամենահմուտ ձեռքով գցած գնդակն էլ նրանից արագ չէր լինի։

—«Ուղարկելու եմ Բոբ Կռէչիտին», շշնջաց Սկռուջը, ձեռները տրորելով ու ծիծաղից թուլանալով։ «Նա չի իմանայ, թէ ո՞վ է ղրկել։ Երկու Տայնը-Տիմի չափ կը լինի։ Մի այսպիսի հանաք Մոլլա-Նասրէդինն էլ չի արել...»

Հասցէն գրելիս նրա ձեռքը դողում էր, բայց և այնպէս նա գրեց մի կերպ և սանդուխներով իջաւ մուտքի դուռը բանալու և այնտեղ ներքևում սպասելու հաւավաճառի մշակին։ Այդտեղ կանգնած, սպասելիս, նրա աչքովն ընկաւ դռան մուրճը։

—«Մինչև մահս պիտի սիրեմ այս մուրճը», գոչեց Սկռուջը, ձեռքը վրէն դնելով։ «Առաջ հաղիւ թէ նայելիս լինէի նոյնիսկ սրա վրայ։ Ի՞նչ ազնիւ է դէմքի արտայայտութիւնը։ Մի զարմանալի մուրճ է սա։—Ահա և հնդուհաւը։ Եալլա՛, ո՞ւր մնացիք դուք։ Ուրախ Ծնունդ ձեզ»։

Բայց հնդուհաւ եմ ասում, հա։ Այդ մեծութեան թռչունը



երբէք չի կարող ոտների վրայ կանգնել։ Իսկոյն և եթ ոտները նրա տակին կը փշոտուեն կնքամոմի նման։

—«Բահ, անհնար է մինչև Կեսմդէն-Տաուն շալակած տանել», ասաց Սկռուջը։ «Մի կառք վերցրէք»։

Այս խօսքերը նա հազիւհազ կարողացաւ արտասանել, ծիծաղից խեղդուելով, հռհռալով վճարեց հնդուհաւի փողը, ծիծաղից թուլանալով տուեց կառքի փողը, ծիծաղից պայթելով տուեց երեխային խոստացածը, և երբ վերադարձաւ, ընկաւ բազկաթոռի վրայ, այնքան ծիծաղեց, որ շունչը կտրուեց ու սկսեց հեծկլտալ։

Երեսն ածիլելը հեշտ չէր նրա համար, որովհետև ձեռները դեռ դողում էին սաստիկ, իսկ այդ գործը ուշադրութեամբ անելու բան է, ինչպէս յայտնի է։ Բայց եթէ քթի ծայրն էլ կտրէր նոյնիսկ, մի կտոր կպչուն սպեղանի կը կպցնէր ու իսկի էլ դարդ չէր անիլ։

Նա հագաւ իր ամենալաւ շորերն ու վերջապէս փողոց դուրս եկաւ։ Ժողովուրդը դուրս էր թափուում տներից, ինչպէս որ նրան ցոյց էր տուել ներկայ Ծննդեան Ոգին։ Ձեռքերը մէջքին դրած, ժպտերես, Սկռուջը, անցնելիս տնտղում էր ամեն մէկին հիացած։ Նրա հայեացքը այն աստիճան անդիմադրելի դուրեկան էր, որ երեք-չորս քէֆները-քեօք տղայ ասացին բարի լոյս, պարոն, շնորհաւոր Ծնունդ»։ Եւ յետոյ Սկռուջը յաճախ կրկնում էր, որ նա երբէք այդպիսի ուրախ ձայն չէր լսած։

Միքանի քայլից յետոյ նա պատահեց դէմուդէմն եկող մի վայելչակազմ պարոնի, որ նախորդ օրը եկել էր իր գրասենեակը և ասել. «Կարծեմ, Սկռուջ ու Մարլէյին է»։ Նրա սիրտը ճնշուեց, մտածելով, թէ հանդիպելիս ի՞նչ աչքով է նայելու իրան այդ պարոնը, բայց այժմ նա գիտէր իր անելիքը։

—«Ազնիւ պարոն», ասաց Սկռուջը, աւելացնելով իր քայլը ու բռնելով պարոնի զոյգ ձեռքը։ «Ինչպէ՞ս էք դուք։ Յոյս ունեմ, որ յաջողութիւն ունեցաք երէկ. շատ լաւ բան էք անում. Շնորհաւորում եմ, Ուրախ Ծնունդ, պարոն»։

—«Պարոն Սկռուջ»։

—«Այո՛, ասաց Սկռուջը։ «Այդ է անունս, վախենում եմ որ հաճելի չլինի ձեզ։ Թոյլ տուէք ներողութիւն խնդրել ձեզնից։ Եւ չէք բարեհաճիլ, արդեօ՞ք...» այստեղ Սկռուջը փսփսաց նրա ականջին։

—«Տէր-Աստուած», գոչեց պարոնը շնչասպառ։ «Հանաք հո՞ չէք անում, յարգելի պ. Սկռուջ»։

—«Խնդրեմ», ասաց Սկռուջը։ «Եւ ոչմի քոռ-կոպէկ պա-

կաս։ Հաւատացնում եմ ձեզ, որ դրանով ես միայն իմ առաջուայ պարտքերս եմ վճարում։ Արէք ինձ, խնդրեմ, այդ շնորհը»։

—«Աղնիւ պարոն», ասաց միւսը, նրա ձեռքը սեղմելով. «չգիտեմ ինչով բացատրել այդպիսի առատու...»։

—«Ո՛չ մի խօսք այլևս, խնդրեմ», պատասխանեց Սկռուջը։ «Հաճեցէք ինձ մօտ, խնդրեմ. կը գա՞ք»։

—«Կը գամ», գոչեց պարոնը և պարզ է որ կատարելու էր իր խոստումը։

—«Շնորհակալ եմ», ասաց Սկռուջը։ «Անչափ պարտաւորեցրիք ինձ։ Յիսուն անգամ շնորհակալ եմ ձեզնից։ Օրհնեալ լինիք»։

Նա գնաց ժամ, զբօսնեց փողոցներում, նայեց այս կողմ այն կողմ գնացող եկող ժողովրդին, գգուեց երեխայոց գլուխները, հարց ու փորձ արաւ մուրացկաններին, ցած նայեց խոհանոցները *), վերը նայեց պատուհաններին. այդ ամենը նրան զուարճութիւն էր պատճառում։ Երբէք նա չէր երազել, որ մի որևէ զբօսանք, կամ մի որևէ ուրիշ բան, կարող լինի այդ աստիճան բախտաւորեցնել իրան։ Ճաշից յետոյ նա իր քայլերն ուղղեց քրոջ-որդու տունը։

Տասը-տասնուհինգ անգամ նա անցաւ դռան մօտով, սիրտ չանելով բաղխել դուռը։ Վերջը մօտեցաւ ու բաղխեց։

—«Տանն է պարոնը, սիրելիս», ասաց Սկռուջը աղախնին. «ի՞նչ սիրուն աղջիկ ես. շատ»...

—«Այո՛, պարոն»։

—«Որտե՞ղ է, սիրելիս»։

—«Սեղանատանն է, պարոն, տիկնոջ հետ միասին։ Համեցէք վերև, հիւրասենեակը, խնդրեմ»։

—«Շնորհակալ եմ։ Նա ինձ ճանաչում է», ասաց Սկռուջը, ձեռքը մեկնելով դէպի սեղանատան դուռը։ «Ես կը մտնեմ այնտեղ սիրելիս»։

Զգուշութեամբ դուռը բանալով, նա ներսնայեց սենեակը։ Նրանք սեղանն էին մտցրում, թէ կարգի՞ն է, արդեօք, ամեն ինչ. թէպէտ սեղանը պակաս տեղ չունէր, բայց դէ՛, նոր տուն դրածները միշտ նախանձախնդիր են լինում այդ հարցում, աշխատելով որ պակասութիւն չլինի։

—«Ֆռէդ», ասաց Սկռուջը։

Խեղճ հարսը վեր թռաւ վախից։

*) Անգլիական տներում խոհանոցները ներքևի յարկումն են լինում։
Ծ. Թ.



—«Այս ո՞ւմն եմ տեսնում, Տէր Աստուած», գոչեց Ֆռէդը։

—«Ես եմ քո քեռի-Սկռուջը։ Եկել եմ ճաշի։ Թո՞յլ ես տալիս ներս մտնել, Ֆռէդ»։

Թոյլ տա՛լ. դեռ լաւ է, որ քեռու ձեռքը դուրս չընկաւ ուժգին թափահարութիւնից։ Հինգ րոպէում նա այնքան ընտելացաւ, կարծես տանը լինէր։ Դժուար է երևակայել աւելի սրտագին ընդունելութիւն։ Նոյն ընդունելութիւնը ցոյց տուեց հարսն էլ։ Նոյնն արաւ Տոպէռն էլ, երբ որ եկաւ. նոյնը—հաստլիկ քեռին, երբ որ եկաւ. նոյնը՝ և ամեն մի նոր ներս մտնող։ Սքանչելի հասարակութիւն, հրաշալի խաղեր, փոխադարձ սէր ու յարգանք... Կատարեալ բախտաւորութիւն։

Յաջորդ առաւօտը վաղ նա եկաւ իր գրասենեակը։ Օ՜հ, շատ վաղ։ Մտքումը դրել էր այնքան վաղ գնալ գրասենեակ, որ Բոբ Կռէչիտին՝ ուշացած ներս մտնելիս բռնի։ Ահա թէ ի՞նչ էր դրել մտքումը։

Այդպէս էլ արաւ, այո։ Խփեց ժամի ինը—Բոբը չկար։ Քառորդ անցաւ—Բոբը չկար։ Տասնուհինգ ու կէս րոպէ նա ուշ եկաւ իր ժամանակից։ Սկռուջը դուռը բաց էր թողել, որ տեսնի նրան իր տակառանման որջը մտնելիս։

Դեռ ներս չմտած նա վերցրել էր գդակը, յետ տուել իր շալը։ Մի ակնթարթում նա թռաւ իր աթոռի վրայ ու սկսեց գրիչը ճռճռացնել, աշխատելով հանել բաց թողած բոպէների փոխարէնը։

—«Ա՜յ տղայ», մրթմրթաց Սկռուջը, աշխատելով իր սովորական ձայնը բանացնել, որքան որ հնարաւոր է. «ի՞նչ ես ասում, որ օրուայ այս ժամանակն ես գրասենեակ գալիս»։

—«Ես ինքս գիտեմ մեղքս, պարոն», ասաց Բոբը. «այո՛, իսկապէս ուշացել եմ»։

—«Ուշացե՞լ», կրկնեց Սկռուջը։ «Այո՛, իհարկէ, ուշացել ես։ Մէկ շնորհ բեր այստեղ, պարոն»։

—«Տարին մէկ անգամ է միայն պատահում այսպէս», առարկեց Բոբը, դուրս գալով տակառից։ «Այլևս չի կրկնուի այդ։ Երբէկ մի քիչ ուրախութիւն ենք արել, տէր իմ»...

—«Ահա թէ այժմ ինչ եմ ասելու քեզ, բարեկամս», ասաց Սկռուջը։ «Ես այդպիսի բաների երկար համբերողը չեմ։ Եւ այդ պատճառով», շարունակեց նա, վերկենալով աթոռից և այնպիսի ոյժով հրելով Բոբին, որ նա կրկին, ետ-ետ գնալով, իր տակառն ընկաւ, «և այդ պատճառով ահա աւելացնում եմ ռոճիկդ»։

Բոբը դողաց և՝ մօտենալով քանոնին՝ մի րոպէ մտադրուեց վերցնել ու Սկռուջի ճակատին ածել, ապա բռնել նրան

ու հաւար կանչել, որ հարևանները հաւաքուեն ու օգնեն իրան կապել այդ գժին։

—«Շնորհաւոր Ծնունդ, Բոբ», ասաց Սկռուջը խփելով նրա մէջքին. նրա լրջութիւնը այլևս կասկածի տեղ չէր թողնում։ «Տայ Աստուած, որ այս անգամ Ծնունդը ուրախութիւնով տօնեմ, ազնիւ բարեկամս, մինչև այժմ ես քեզ ուրախ օր չեմ տուել այսքան տարի։ Ոոճիկդ աւելացնում եմ և այսուհետև կ'աշխատեմ չզլանալ քո բազմատանջ ընտանիքիդ համար ձեռքովս եկած օգնութիւնը, և հէնց այսօր մենք ձեր գործերը կը կարգադրենք երեկոյեան թէյի ժամանակ, Բոբ։ Զաղ արա կրակները և խկոյն ևեթ գնայ քեզ համար մի առանձին ածուխի—արկղ գնիր, Բոբ, Կռէչիտ»։

Բանից դուրս եկաւ որ Սկռուջը միայն խօսքով չէր լաւ մարդ դարձել։ Նա իր խոստացածից շատ-ու-շատ աւելին կատարեց։ Իսկ Տայնը-Տիմի համար (որ չէր մեռել) նա դարձաւ երկրորդ հայր։ Նա դարձաւ բարի բարեկամ, բարի տէր, բարի մարդ, որի նմանը միայն հինաւուրց Լոնդոնն էր արտադրում, կամ ազնիւ հին աշխարհի մի ուրիշ լաւ, հին քաղաք, կամ գիւղաքաղաք։ Ոմանք ծիծաղում էին նկատելով նրա փոփոխութիւնը, իսկ նա ուշադրութիւն չէր դարձնում, որովհետև նա բաւականին խելօք էր, որպէսզի հասկանար, որ այդ տեսակի մարդկանց համար բարի գործից ծիծաղելի բան չկայ աշխարհիս երեսին։ Գիտենալով, որ այդպիսիները յամենայն դէպս կոյր պիտի լինեն, նա աւելի լաւ էր համարում, որ նրանց աչքերը ծիծաղից փակուեն, քան թէ հիւանդութիւնից, որ իհարկէ, աւել վատ էր։ Իր սիրտն ուրախ էր և նա բաւական էր դրանով։

Նա այլևս ոչ մի յարաբերութիւն չունեցաւ Ոգիների հետ, բայց մինչև մահը չմոռացաւ նրանց տուած դասը։ Միշտ նրա մասին ասում էին, թէ ոչոք Ծննդեան տօնը այնպէս չի տօնում, ինչպէս Սկռուջը։ Երանի մեր ամենքիս մասին էլ կարելի լինի նոյնը կրկնել,—մեր ամենքիս մասին։ Եւ ուրեմն, ինչպէս որ Տայնը-Տիմն ասաց, Աստուած օրհնի մեզ, ամենքիս»։

---

Ц.Ц.Ъ.Ъ. ЗОНТСКО ПРИЗРЕНИЕ
С.С.С.Р. Центральная Библиотека
7/31 1922
МОСКВА, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան

2